2017

ԽՈՍԵԼՈՎ ԿԱՆԱՆՑ ՀԵՏ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԽՆԴՐԻ ՇՈՒՐՋ

Կանանց ըմբռնումները և կարիքները

Սոցիոլոգիական հետազոտությունն իրականացրել է Սոցիոսկոպ ՀԿ-ն
Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիայի պատվերով

Բովանդակություն

Շնորհակալական խոսք

1. **Ներածություն. հետազոտության գաղափարական և մեթոդաբանական շրջանակը**
   - *Հետազոտական համատեքստը*
   - *Նպատակը, հարցերը, ընտրանքը*
   - *Սահմանափակող գործոնները և դրանց երկակի դերը*
2. **Ընտանիքում կանանց նկատմամբ սահմանափակումների և բռնությունների տեսակները, դրանց ըմբռնումները**
   - *Նախնական բռնության մշակույթը*
   - *Բռնության հիմնական տեսակների ըմբռնումները*
     1. *Ֆիզիկական բռնություն*
     2. *Հոգեբանական բռնություն*
     3. *Տնտեսական բռնություն*
     4. *Սեռական բռնություն*
   - *Ամուսնության տարիք և որոշում*
   - *Կրթության և զբաղմունքի սահմանափակումներ*
   - *Սոցիալական շփման սահմանափակումներ*
   - *Առանձին դեպքեր*
     1. *Դավաճանություն և ամուսնալուծություն*
     2. *Աղջիկ երեխայից ազատվելու դեպքեր*
3. **Ընտանեկան բռնությանը դեմ հանդիման**
   - *Բռնարարի և զոհի ըմբռնման եղանակները*
     1. *Տղամարդու անմեղ(սունակ)ության լայն համատեքստը*
     2. *Բռնության ենթարկված կնոջ «մեղքը»*
     3. *Կնոջ գործորդության ըմբռնումն իբրև տղամարդու հանդեպ բռնություն*
   - *Ընտանիքը «մութ անկյուն». լռեցման և բարձրաձայնման պայմաններն ու հետևանքները*
   - *Հարմարման ձևերը և ելքերի որոնումները.*

     1.Հլու ենթակայություն, 2. «խռով», 3. (փոխ)զիջում, 4. կանխարգելում, 5.պայքար, 6.տակից կարգավորումներ, 7.ազդեցիկ միջնորդի ներգրավում, 8.արտագաղթ, 9.ամուսնալուծություն, 10.ինքնասպանության փորձեր, 11.հոգեբանի կարիք
   - *Հաստատություններին (չ)դիմելու հիմքերը և պրակտիկաները*
     1. *Ոստիկանությանը դիմելու խոչընդոտները*
     2. *Հասարակական կազմակերպությունների և պետության դերը*
4. **Ամփոփում. ընտանիքի և բռնության ըմբռնման հիմնական առանձնահատկությունները**
   - *Կանանց փորձառության և սոցիալական դիրքի գործոնը*
   - *Խնդրի եզակիացումը և սոցիալական բնույթի ընկալումը*
   - *Եզակիացումից ավանդականացում*
   - *Բռնության լռեցման մշակութային հիմքերը և հաղթահարման ներուժը*
   - *Բռնության բացառման բարոյական և իրավական չափումները*
5. **Հավելված: Ուղերձների հանդեպ վերաբերմունք և մեկնաբանություններ**
   - *Ընդհանուր դիտարկումներ*
   - *Ո՞վ է հաջորդը*
   - *Բռնությունը հայ ընտանիքն է քանդում: Պահանջում ենք ընտանեկան բռնության դեմ օրենք: Ավանդությը չի նշանակում բռնություն*
   - *Սկեսուրս ասում է՝ ինքը ծեծվել ա, ես էլ պիտի ծեծվեմ*
   - *Կանա՛յք, իմացե՛ք Ձեր իրավունքները*
   - *Խաղաղություն ընտանիքից աշխարհին*
   - *Պայքարի՛ր իրավունքներիդ համար, ապրի՛ր արժանապատիվ կյանքով*
   - *Ոչինչ չի արդարացնում բռնությունը*
   - *Քուֆթա ծեծեք, ոչ թե կին: Ծեծը պատիվ չի բերում*
   - *Զոհը երբեք մեղավոր չէ: Ինձ չեն թողնում աշխատել*
   - *Անտարբերությունը կարող է կյանք արժենալ*
   - *Խոսի՛ր*

Շնորհակալական խոսք

Սոցիոսկոպ ՀԿ-ն իր հատուկ շնորհակալությունն է հայտնում այս հետազոտությանը մասնակցած 76 կանանց, ովքեր իրենց անկեղծ մտքերով ու պատմություններով, հույզերով ու վերաբերմունքներով, նույնիսկ երբեմն լռությամբ մասնակից դարձան այս հետազոտությանը, ինչը, որքան էլ ցավոտ, սակայն կարևոր հարցեր է բարձրացնում և, հուսանք, կունենա իր ներդրումը դրանց լուծման ճանապարհին։

Շնորհակալություն նաև Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիային և անդամ կազմակերպություններին՝ ընտանեկան բռնության պես զգայուն խնդրի ուսումնասիրությունը Սոցիոսկոպի հետազոտական թիմին վստահելու, ինչպես նաև աշխատանքի ընթացքում փորձագիտական, տեղեկատվական և տեխնիկական աջակցության համար։

Շնորհակալ ենք նաև Աշտարակ, Արմավիր, Գյումրի, Երևան, Վանաձոր քաղաքներում և գյուղ Մրգանուշում ֆոկուս խմբերի կազմակերպական աշխատանքներում մեզ աջակցած կանանց։

1. Ներածություն. հետազոտության գաղափարական և մեթոդաբանական շրջանակը

Հետազոտական համատեքստը

Ընտանեկան բռնության պրակտիկաների իրական տարածվածությունը Հայաստանում անհնար է ճշգրտորեն գնահատել մի քանի պատճառներով: Նախ Հայաստանի ընտանիքներում բռնության որոշակի աստիճանի մշակութային նորմավորվածությունը և կանանց ներքնայնացված ինքնաստորադասումը հիմնականում թույլ չի տալիս մինչև վերջ հարցադրել խնդիրը ո՛չ բռնությունը կիրառողի, ո՛չ բռնությանը ենթարկվողի և ո՛չ էլ ականատես սոցիալական միջավայրի կողմից: Բացի այդ, կանանց վարքի վերահսկման և սահմանափակման և այլ բռնարարքների ընդունելի շեմերը տարբերվում են հանրային տարբեր խմբերի ընկալումներում: Հետևաբար նույնիսկ բռնության սահմանվածության պարագայում ունենք բռնության որպես այդպիսին ձևակերպման հանրայնորեն չհամաձայնեցված պատկերացում: Միաժամանակ բռնության խնդրի առերեսման դեպքում դրա բարձրաձայնման կամ պետական հաստատություններին ու հասարակական կազմակերպություններին (ՀԿ) դիմելու ցածր աստիճանը ևս թույլ չի տալիս ստանալ բռնության դեպքերի իրական և ամբողջական նկարագիրը: Այդուհանդերձ, ՀՀ քննչական կոմիտեի տվյալների համաձայն, միայն 2016-ին հարուցվել է ընտանեկան բռնությանն առնչվող 359 քր. գործ, որոնց մեծ մասը ֆիզիկական ծեծի դեպքեր են՝ 61.7%, իսկ 10-ը սպանության դեպքեր են, առկա են սեռական բնույթի բռնի գործողություններ: 2017-ի առաջին կիսամյակում 215 քր.

գործերում համամասնության միտումները նույնն են, սակայն առկա են նաև ընտանիքի անդամներից մեկի կողմից մյուսին ինքնասպանության հակելու կամ հասցնելու դեպքեր: 2016-ին ամուսնու կողմից կնոջ նկատմամբ բռնության դեպքեր 136-ն են[1]: Ըստ ՀՀ ոստիկանության Ինֆորմացիոն կենտրոնից մեր ստացած տվյալների՝ ընտանեկան հողի վրա հանցագործությունների զոհ դարձած կանանց մեծ մասը բռնության է ենթարկվում իր ամուսնու կողմից (տե՛ս Աղյուսակ 1):

Աղյուսակ1. Քննությունն ավարտված քր.գործերով և նյութերով անցնող ընտանեկան հողի վրա կատարված հանցագործությունների տվյալներ[2]

	2016.08.30 դրությամբ		2015		2014	
	Ընդամենը կանանց դեմ	Ամուսինը կնոջը	Ընդամենը կանանց դեմ	Ամուսինը կնոջը	Ընդամենը կանանց դեմ	Ամուսինը կնոջը
Հայաստան	**453**	**301**	**796**	**477**	**688**	**417**
Երևան	153	98	305	175	196	105
Արագածոտն	13	9	27	19	25	18
Արարատ	47	31	77	50	75	48
Արմավիր	34	26	62	41	78	48
Գեղարքունիք	34	18	51	26	48	30
Լոռի	38	23	47	29	51	30
Կոտայք	45	37	84	52	71	48
Շիրակ	48	28	80	41	95	60
Սյունիք	26	18	28	20	26	13
Վայոց ձոր	8	7	11	10	5	4
Տավուշ	7	6	23	13	18	13

Հասարակական կարծիքի քանակական ուսումնասիրությունները, որ այս զգայուն թեմայի հարցում կասկածելի ճշգրտություն կարող են ապահովել, միևնույն է արձանագրում են բռնության դրսևորումների շատ ավելի բարձր տարածվածություն: Ըստ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության (ԱՎԾ) և ՀՀ առողջապահության նախարարության (ԱՆ) կողմից իրականացրած «Հայաստանի ժողովրդագրության և առողջության հարցերի հետազոտություն 2015-16» (այսուհետ՝ «ՀԺԱՀ 2015-16») հաշվետվության՝ «ընդհանուր առմամբ, երբևէ ամուսնացած կանանց 14%-ը ամուսնու կողմից ենթարկվել է բռնության առնվազն մեկ ձևի»[3]: Դեռևս 2011-ին ԵԱՀԿ կողմից պատվիրված ընտանեկան բռնության վերաբերյալ հասարակական կարծիքի ուսումնասիրման արդյունքները փաստում են, որ Հայաստանում կանանց 59,6%-ը իրենց կյանքի ընթացքում ունեցել են ընտանեկան

[1] Տվյալները ներկայացվել է Քննչական կոմիտեի կողմից հոկտեմբերի 9-ին՝ Արտգործնախարարության կազմակերպված «Ընտանեկան բռնության կանխարգելման և զոհերի պաշտպանության» օրինագծի շուրջ հանրային քննարկմանը:

[2] Տվյալները ձեռք ենք բերել ՀՀ ոստիկանության Ինֆորմացիոն կենտրոնից:

[3] Ընտանեկան բռնության մասին հարցերին պատասխանել են 15-49 տարեկան երբևէ ամուսնացած կանայք: Ամբողջական զեկույցում ընտանեկան բռնության բաժնին կարելի է ծանոթանալ այստեղ՝ http://www.armstat.am/file/article/adhs-2015-armenian.pdf: Հիմնական ցուցանիշների զեկույցին ծանոթանալ աստեղ՝ http://www.armstat.am/file/article/dhs_kir_2015-16-arm.pdf:

բռնության փորձ[4]: Այս տվյալները, սակայն, արձանագրում են ըմբռնված և բարձրաձայնված բռնության ծավալները և բաց են թողնում այն դեպքերը՝ որոնք որպես այդպիսին չեն սահմանվում կամ թաքցվում են:

Կարող ենք արձանագրել, որ վիճակագրական նշված ցուցանիշները խոսում են խնդրի բարձրաձայնման պրակտիկաների և ոչ թե դրանց իրական տարածվածության մասին: Խնդրի լրջության մասին ավելի շուտ կարող ենք դատել ամենից ծայրահեղ հետևանքներից՝ կնասպանության վիճակագրությունից ելնելով: 2010-2017թթ. ընթացքում Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիայի (այսուհետ՝ Կոալիցիայի) անդամ կազմակերպությունների կողմից բարձրաձայնած տվյալների համաձայն, Հայաստանում արձանագրվել է կնասպանության 50 դեպք[5]: Փորձագետները նշում են, որ Հայաստանի յուրաքանչյուր 5-րդ կին շարունակական բռնության է ենթարկվում:

Պետական մակարդակով ընտանեկան բռնության խնդրի հաղթահարման և իրավական կարգավորման քայլերը սկսել են միջազգային հաստատությունների և տեղական ՀԿ-ների դրդման արդյունքում, սակայն ընթացել են նկատելի հապաղումներով: Ըստ Ամնեսթի ինթերնեյշնլի, Հայաստանում առաջին անգամ ընտանեկան բռնության խնդրին հասցեագրված օրինագիծը շրջանառվել է 2008-ին[6] (այն մշակվել էր Կանանց իրավունքների կենտրոնի կողմից 2007-ին, հետագայում լրամշակվել 2009-ին[7]): Պետական գործիչները երկար տարիներ մերժել են Հայաստանում ընտանեկան բռնության գոյությունը՝ հրաժարվելով լուրջ քննության առնել խնդիրը: Պետական բարձրաստիճան գործիչների քաղաքական կամքի անհստակության պայմաններում ընտանեկան բռնության դեմ հերթական օրինագիծը 2016-ի տարեվերջին հանրայնացվելուց ժամեր անց հեռացվեց նախագծերի ներկայացման կայքից[8]՝

Փորձագետները ժխտում են ընդունված այն կարծիքը, թե բռնության դեպքերը ավելի շատ սոցիալապես անապահով, կրթական ցածր մակարդակով ընտանիքներում է տարածված: Ըստ նրանց, ֆինանսապես ապահովված ընտանիքները ևս հեռու չեն ընտանեկան բռնության դեպքերից:

Ավելին, սոցիալապես ապահով ընտանքիներում բռնության դեպքերի մասին հանրայնացումը ավելի խնդրահարույց է: Կանայք, իրենց կարգավիճակից, ընտանեկան դիրքից ելնելով, շատ դեպքերում վախենում են բարձրաձայնել իրենց հանդեպ կիրառվող բռնության մասին:

---

[4] *Հասարակական կարծիքի հարցում ՀՀ-ում ընտանեկան բռնության վերաբերյալ*, (ԵԱՀԿ) Երևան 2011թ.: Տե՛ս այստեղ՝ osce.org/yerevan/88229?download=true

[5] Տվյալները Կոալիցիայի կայքից. տե՛ս այստեղ՝ coalitionagainstviolence.org

[6] *Armenia: No pride in silence: Countering violence in the family in Armenia* (EUR 54/004/2008), 23.09.2017 դրությամբ հասանելի է Amnesty International-ի կայքում՝ amnesty.org/en/documents/document/?indexNumber=EUR54%2F004%2F2008&language=en

[7] Մարգարյան, Ն. *«Ընտանեկան բռնության մասին» ՀՀ օրենքի նախագիծ:* 23.09.2017 դրությամբ հասանելի է այստեղ՝ asyou.pinkarmenia.org/civilsociety/2012/domesticviolencelaw

[8] Աբրահամյան, Գ. (04.12.2016) *Ընտանեկան բռնության դեմ պայքարի օրինագիծ. երեխաներին խլելո՞ւ, թե՞ բռնությունը կանխարգելելու միջոց:* 23.09.2017 դրությամբ հասանելի է այստեղ՝ aravot.am/2016/12/04/833641

խուսափելով ծայրահեղ պահպանողական խմբերի պոպուլիստական չհիմնավորված հակազդեցություններից: Մինչ այդ՝ 2013-ին կառավարությունը բացասական եզրակացություն էր ներկայացրել ընտանեկան բռնության դեմ 2012-ին ներկայացրած օրինագծի նախաձեռնությանը[9]: 2010-ականներից պետական գործիչներն արդեն ընդունում էին Հայաստանում գենդերային հիմքով բռնության և ընտանեկան բռնության առկայությունը: Հետագայում, սակայն, հստակ մերժվում էր ընտանեկան բռնության խնդրին ուղղված առանձին օրինագծի անհրաժեշտությունը և Կոալիցիայի անդամ ՀԿ-ների կողմից լրամշակված տարբերակի քննարկումը: Որպես հիմնավորում բերվում էր 2014-ին ընդունված «Սոցիալական աջակցության մասին» օրենքով ընտանեկան բռնության սահմանումն ու դրա կանխարգելման և պաշտպանության առումով որոշակի կարգավորումների առկայությունը[10]:

Ըստ փորձագետների, միջին տարիքի՝ 35-45 տարեկան կանանց նկատմամբ ընտանեկան բռնության դեպքերը ամենատարածվածն են ու տևական բնույթն են ունենում:

45-ից բարձր տարիքի կանանց նկատմամբ բռնության դեպքերը ևս տարածված են. արդեն բռնարար ամուսիններին հիմնականում հաջորդում են զավակները: Այս խմբի կանայք, սակայն, խուսափում են բարձրաձայնել իրենց զավակների կողմից բռնության ենթարկվելու դեպքերի մասին: Բռնության մասին բարձրաձայնելը համարում են «ամոթալի» իրենց տարիքում, իսկ կարգավորման մեխանիզմներ որոնելը՝ ժամանակավրեպ:

Այս տարի՝ 2017-ին, ՀՀ պարտավորությունների իրականացման շրջանակներում կրկին շրջանառության է դրվել նոր նախագիծը, որն արդեն հստակորեն աջակցություն է ստանում Արդարադատության նախարարության և նախարարի կողմից, սակայն իշխող ՀՀԿ-ին պատկանող կամ նրա աջակցությունը վայելող մեդիա կառույցները և հանրային խմբերը շարունակում են օրինագծի դեմ աղմկոտ քարոզարշավը՝ այն դարձնելով եվրոպական կառույցներին Հայաստանի ինտեգրման դեմ պայքարի հիմնահարթակներից մեկը:

Կանանց իրավապաշտպան և աջակից ՀԿ սեկտորը խնդրի մասին հիմնական և առաջին բարձրաձայնող հայաստանյան գործորդն է: ՀԿ-ների գործունեության շրջանակը ներառում է հանրային մակարդակում կանանց իրազեկվածության բարձրացումը, դեպքերի տեսանելիության բարձրացումը, խնդրի հանրայնացման միջոցով կարգավորմանն ուղղված ջանքերի գործադրումը, ինչպես նաև բռնության ենթարկված կանանց առաջնային ծառայություններ մատուցելն ու զորակցելը: Այս գործունեության ընթացքում կանանց իրավապաշտպան ՀԿ-ները և Կոալիցիան բախվում են ոչ միայն

[9] *Կառավարությունը կամք չունի ընտանեկան բռնության դեմ օրենք ընդունել* (24.02.2013): 23.09.2017 դրությամբ հասանելի է այստեղ՝ hra.am/hy/interview/2013/02/28/domestic

[10] Առաքելյան, Լ. (08.04.2015): *Անտեսված պարտավորություններ. Հայաստանի կառավարությանը ՄԱԿ-ում հիշեցնում են ընտանեկան բռնության կանխարգելման օրենքի մասին:* 23.09.2017 դրությամբ հասանելի է այստեղ՝ aravot.am/2015/04/08/559066

պետական հաստատությունների, այլև հասարակության տարբեր խմբերի անիրազեկությանը, ընկալումների հակասականություն-ներին, անտարբերությանը կամ հաճախ նաև դիմադրությանը[11]: Թեև տարիներ շարունակ տարված աշխատանքի շնորհիվ հանրային որոշ խմբեր ավելի զգայուն են դարձել ընտանեկան բռնության խնդրի նկատմամբ, ինչպես նաև նկատելի է բռնության դեպքերի առթիվ կանանց կողմից բարձրաձայնման հաճախացում՝ խնդիրը մեծամասամբ չի ըմբռնվում որպես այդպիսին:

Այս պայմաններում առաջնահերթություն է դառնում հիմնական շահառուների՝ ընտանիքներում ապրող կանանց խմբերի կարիքների և ըմբռնումների հասկացումը և դրանց հիման վրա մտածված երկխոսության մշակումը:

Փորձագետների կարծիքով վաղ ամուսնացած անչափահասները անհասանելի խմբերից են, որոնց հանդեպ բռնություն են կիրառում, են: Ամուսնական ընտանիքում հանդիպած բռնությունների մասին նրանք չեն կարողանում բարձրաձայնել՝ վաղ ամուսնության անօրինականության պատճառով:

Հաշմանադամություն ունեցող կանանց նկատմամբ կիրառվող բռնությունը ևս մեծածավալ է գնահատվում փորձագետների կողմից: Այս դեպքում վիճակագրական տվյալների բացակայությունը պայմանավորված է բարձրաձայնման և հանրայնացման շատ ավելի մեծ խոչընդոտներով՝ ինչպես մտավոր, այնպես էլ ֆիզիկական հաշմանդամություն ունեցող կանանց շրջանում:

Նպատակը, հարցերը, ընտրանքը

Այս հետազոտությունը նախաձեռնել է Կոալիցիան՝ որպես հանրության և կանանց թիրախային խմբերի հետ սեփական հաղորդակցական մեխանիզմների վերանայման քայլ: Արձագանքելով առաջադրված խնդրին՝ Սոցիոսկոպի հետազոտական թիմը խնդրի բարելավման համար հետազոտության հիմք է ընդունել կանանց խմբերի կենսափորձի և կարիքների ուսումնասիրման միջոցով ընտանեկան բռնության շուրջ խոսակցության հնարավոր կետերի և հակասությունների բացահայտումը:

Հետազոտությունը միտված է պատասխան տալու հետևյալ հարցերին՝

- որքանո՞վ է կանանց շրջանում ըմբռնվում ընտանեկան բռնությունը որպես բռնություն, ընտանեկան բռնության տարածվածության ինչպիսի՞ ընկալում կա Հայաստանում,
- ինչպե՞ս է սահմանվում բռնությունը և դրա անթույլատրելիության շեմը,
- ովքե՞ր են համարվում ընտանեկան բռնության հիմնական կողմերը,
- ինչպե՞ս է դրսևորվում բռնությունը,
- ինչպիսի՞ն են բռնությանը բախվող կանանց կարիքները,
- ինչպե՞ս են կանայք արձագանքում ընտանեկան բռնությանը և ի՞նչ հաղթահարման մեխանիզմներ են

[11] *Ընտանեկան բռնության դեմ պայքարի ազգային* օր (10.08.2015) [Տեսագրություն]: 17.09.2017-ի դրությամբ հասանելի է այստեղ՝ youtube.com/watch?time_continue=16&v=h0RLM49yvaY

գործադրում,

- ընտանեկան բռնության դեմ ՀԿ սեկտորի իրականացրած տարբեր գործողությունները ինչպե՞ս են մեկնաբանվում կանանց խմբերի կողմից։

Հետազոտությունն իրականացվել է երկու փուլով: Առաջին փուլում իրականացվել են փորձագիտական հարցազրույցներ, ոլորտում ակտիվ գործունեություն ծավալող մասնագետների հետ: Փորձագիտական հարցազրույցների նպատակը հետևյալ խնդիրների պատասխանների դուրսբերումն էր՝

1. Ին՞չ ծրագրեր են արվել, ո՞ւմ համար և ու՞մ կողմից, այդ թվում՝ Կոալիցիայից դուրս։
2. Ինչպե՞ս է սահմանվում ընտանեկան բռնությունը, գնահատվում տարածվածությունը Հայաստանում և մարզային/սեռային/տարիքային գործոնների նշանակությունը։
3. Ու՞մ են հասցեագրվել և իրականում ու՞մ են մինչ այժմ հասել արդեն իրականացված ծրագրերը։
4. Որո՞նք են թիրախային խմբերը ըստ ռիսկայնության աստիճանի, ըստ բռնության ձևի զանգվածայնության և ծրագրային գործողությունների և ուղերձների հասցեականության գործոնների։
5. Որո՞նք են ընտանեկան բռնության տեսանկյունից ամենից ռիսկային/ամենից զանգվածային և անհասանելի/դժվար հասանելի սոցիալական խումբը/խմբերը։

Առաջին փուլի արդյունքում ունենալով տվյալների որոշակի բազա, ինչպես նաև ուսումնասիրելով ոլորտում կատարված հետազոտությունները՝ առանձնացվել են թիրախային, ռիսկային խմբերը, քարտեզագրվել են դեպքերի տարածվածության սոցիալական գործոնները, կոալիացիայի կողմից իրականացված ծրագրերի շրջանակը, բնույթը և կազմվել է հետազոտություն երկրորդ փուլի նախագիծը: Երկրորդ փուլում կիրառվել է ֆոկուս խմբի մեթոդը: Ֆոկուս խմբերի միջոցով նպատակ է դրվել պարզելու՝

1. կանանց նկատմամբ կիրառվող սահմանափակումների և բռնության շրջանակը, դրանց ձևերը
2. կանանց կողմից ընտանեկան բռնության ըմբռնումները, դրա շուրջ սեփական լեզվի և սահմանումների, թույլատրելիի և անթույլատրելիի սահմանները, կարիքները, դրանց հաղթահարման (փոխօգնության) մեխանիզմները
3. կանանց իրազեկվածության աստիճանը շահագրգիռ ՀԿ-ների կողմից մինչ այժմ իրականացված հանրային միջոցառումներից, դրանց ուղերձների ընկալման ձևերը և վերամեկնաբանումները։

Ֆոկուս խմբի ընտրանքը կազմվել է առավելագույնս ընդգրկուն չափանիշների հիմքով՝ ելնելով հետազոտության առաջին փուլի (առկա տվյալների ուսումնասիրություն և փորձագիտական հարցազրույցներ) ընթացքում բացահայտված տվյալներից և Կոալիցիայի հետագա գործունեության նպատակներից, այն է՝ ապահովել կանանց լայն

խմբերի նկատմամբ բռնության դեմ պայքարի գաղափարների և քաղաքականությունների հասցեականությունը: Ըստ այդմ, կանանց հետազոտվող խմբերն առանձնացրել ենք բռնության ձևերի և ռիսկայնության մեր կողմից դուրս բերված առավել հիմնարար և ընդգրկուն հիմքով՝ ամուսնական կարգավիճակով.

- ամուսանալուծված կանայք
- երբևէ չամուսանցած կանայք (մինչև 35 տարեկան և ավելի)
- մինչև 15 տարի ամուսնացած կանայք
- 16 և ավելի տարիներ ամուսնացած կանայք:

Վերոնշյալ խմբերի տիպային ներկայացուցչությունը պահպանվել է բոլոր 7 ֆոկուս խմբերի ընթացքում (2-ը մայրաքաղաքում, 5-ը մարզերում), որոնցից յուրաքանչյուրին մասնակցել են 8-12 կին: Ընդհանուր առմամբ մասնակցել է 76 կին:

Համայնքների տիպային ընտրանքում հիպոթետիկ չափանիշ ենք ընտրել մարզային առանձնահատկությունը և բնակության տիպը (գյուղ-քաղաք), քանի որ արդեն արված հետազոտություններից հավաքված և փորձագիտական հարցազրույցների տվյալները մարզային տարբերությունների շուրջ կասկածներ էին առաջացնում: Սակայն հաշվի առնելով, որ կնասպանության և կանանց նկատամբ ընտանեկան բռնության արձանագրված դեպքերի և կանանց աջակցության/պաշտպանության կենտրոններին դիմելու հաճախությունների վիճակագրությունը չի կարող հիմք լինել բռնության տարածվածության իրական պատկերի և բռնության ըմբռնումների համար, մենք համայնքների ընտրությունը իրականացրել ենք ոչ միայն այս տեղեկատվության հիման վրա, այլև առավել չեզոք և ընդհանուր չափանիշների՝ համայնքների սոցիալ-դեմոգրաֆիկ և աշխարհագրական բնութագրիչների համադրությամբ:

Ընտրանքի հարցում իրականացրել ենք նաև ընթացիկ ճշգրտումներ, երբ առաջին իսկ ֆոկուս խմբից պարզ դարձավ, որ ընտանեկան բռնության ըմբռնումների տարբերության հիմքում առաջնահերթորեն ընկած են ոչ թե բնակության տիպը, այլ կանանց ամուսնական փորձը, նրանց ընտանեկան հիմնական սոցիալական դերը, սերնդային և սոցիալական խավի պատկանելությունը, սոցիալական կապիտալը (բնակություն և/կամ կրթություն մայրաքաղաքում, քաղաքացիական սեկտորի հետ առնչություն, աշխատանքի փորձ) և բռնության ծանր փորձի առկայություն-բացակայությունը:

Աղյուսակ 2. Ընտրանքն ըստ համայնքների

Մարզ (համայնք)	Մարզային առանձնահատկություն	Քանակ
ք. Երևան	տարածվածության բարձր ընկալում[12] բարձր կնասպանություն[13] կանանց ԻՊ ՀԿ-ներին դիմելու բարձր ցուցանիշ[14]	2
Արագածոտն (ք. Աշտարակ)	տարածվածության ցածր ընկալում ցածր կնասպանության ցուցանիշ կանանց ԻՊ ՀԿ-ներին դիմելու բարձր ցուցանիշ	1
Արմավիր (ք. Արմավիր)	ակտիվ ՀԿ միջավայր բարձր կնասպանություն կանանց ԻՊ ՀԿ-ներին դիմելու բարձր ցուցանիշ	1
Արարատ (գ. Մրգանուշ)	բարձր կնասպանություն կանանց ԻՊ ՀԿ-ներին դիմելու միջին ցուցանիշ	1
Շիրակ (ք. Գյումրի)	ակտիվ ԻՊ ՀԿ միջավայր միջին կնասպանության ցուցանիշ բռնության հաղթահարման ակտիվություն	1
Լոռի (ք.Վանաձոր)	ակտիվ ԻՊ ՀԿ միջավայր տարածվածությանամենաբարձր ընկալում կանանց ԻՊ ՀԿ-ներին դիմելու ցածր ցուցանիշ	1

Ֆոկուս խմբերի ժամանակ առանձին հարցախմբի միջոցով իրականացվել է նաև Կոալիցիայի կողմից ձեռնարկած գործողությունների, ակցիաների ընթացքում փոխանցվող ուղերձների թեստավորում: Խմբի մասնակցիներին ցուցադրվել են ակցիաները պատկերող լուսանկարներներ՝ գրություններով, ինչպես նաև մեկ սոցիալական հոլովակ[15]: Դրանց շուրջ իրականացվել է քննարկում՝ հասկանալու, թե ինչպես են կանանց շրջանում ընկալվում, մեկնաբանվում այդ գործողությունները և ուղերձները:

Դաշտային աշխատանքն իրականացվել է 2017 թ. օգոստոսին:

Սահմանափակող գործոնները և դրանց երկակի դերը

Ցանկացած հետազոտական գործընթաց ենթադրում է դժվարություններ ու սահմանափակումներ: Սակայն, ստանդարտ խնդիրներին զուգահեռ՝ տվյալ հետազոտության ժամանակ ունեցել ենք ընտանեկան բռնության՝ իբրև հետազոտվող առարկայի առանձնահատկությունից բխող մի շարք լրացուցիչ սահմանափակումներ:

---

[12] Ցուցանիշները՝ ըստ *Հասարակական կարծիքի հարցում ՀՀ-ում ընտանեկան բռնության վերաբերյալ*, (ԵԱՀԿ)Երևան 2011թ, էջ 36-41 տվյալների: Տե՛ս այստեղ՝ http://www.osce.org/yerevan/88229?download=true

[13] Ցուցանիշներն՝ ըստ Կոալիցիայի տվյալների

[14] Ցուցանիշներն՝ ըստ կանանց իրավապաշտպան 2 ՀԿ-ից ստացված տվյալների

[15] *Խոսիր, Speak up* [Տեսագրություն] 03.08.2017) հոկտեմբերի 15, 2014-ի դրությամբ հասանելի է այստեղ՝ https://www.youtube.com/watch?v=K2XRI82cUQA (0:30)

Առաջին հերթին խնդիրները վերաբերում են հետազոտվող կանանց հասանելիությանը։ Պետք է հաշվի առնենք, որ ֆոկուս խմբերի մեթոդը, որով մենք հնարավորություն ունեցանք առնչվել Հայաստանի 5 մարզերում և Երևանում բնակվող 76 կանանց պատմություններին և կարծիքներին, թույլ չի տալիս ներգրավել ուսումնասիրվող առարկայի առնչությամբ ամենախոցելի վիճակում գտնվող՝ ամենալուրջ սահմանափակումների և ճնշումների ենթարկվող, տանից առանց ամուսնու, ընտանիքի այլ անդամի կամ վստահելի անձի ուղեկցության բացակայելու «թույլտվություն» չունեցող կանանց։ Այնուամենայնիվ, համանման իրավիճակում գտնվող երկու կնոջ մասնակցություն ֆոկուս խմբերին հնարավոր է դարձել։ Առաջին դեպքն արձանագրվեց Գյումրիում, երբ մասնակցին ուղեկցում էր և կնոջ մասնակցության հարցը բանակցում ու կազմակերպում էր ամուսինը։ Երկրորդ դեպքում երևանյան մասնակցի ներկայությունը մոր կողմից թույլատրվել էր ընկերուհու ուղեկցության շնորհիվ։ Երկու դեպքերում էլ դեր են խաղացել մասնակցություն կանչն ապահովող անձանց նկատմամբ վստահությունը։ Ինչպես հետազոտության մասնակից կանանց կողմից բացահայտված դեպքերի պատմություններն են վկայում, մոբիլության սահմանափակման ենթարկվող կանայք քիչ չեն, սակայն այդ մասին հիմնականում լռում են ինչպես հենց այդ կանայք, այնպես էլ նրանց միջավայրը՝ հիմնականում անտեսելով և չխնդրականացնելով հարցը։

Ամենախոցելի կանանց հասանելիությունն իրականում լուրջ խնդիր է ցանկացած այլ մեթոդի ընտրության պարագայում ևս։ Այս կանանց պատմությունները հնարավոր է դիտարկել և հավաքագրել միայն ընտրված թիրախային դեպքերի մեթոդաբանությամբ, ինչն առանձին հետազոտության խնդիր կարող է դառնալ ապագայում։

Ընդգրկուն և ընդհանրական չափանիշներով հավաքագրվող ֆոկուս խմբերի մեթոդի կիրառությունը սահմանափակում է նաև սոցիալական խստորեն տարբերվող շերտերի ներգրավման հնարավորությունը՝ թույլ չտալով ծայրահեղ աղքատների, փոքրամասնական խմբերի, մարգինալ և ասոցիալ մարդկանց, ինչպես նաև հարուստների մասնակցությունը։ Մյուս կողմից այսպիսի ֆոկուս խմբերի միջոցով հնարավոր է դառնում առնչվել առավել լայն սոցիալական շերտերի ներկայացուցիչների՝ միջին և ցածր-միջին խավի մարդկանց կենսափորձին և գաղափարներին, ինչն էլ առաջնահերթ խնդիրն էր այս հետազոտության դեպքում։

Խմբային մեթոդի տեսանկյունից որպես դժվարություն հարկավոր է նշել այն, որ խմբում ծանր կամ սուր ընտանեկան բռնության պատմության բարձրաձայնման դեպքերում, մյուս մասնակիցները հակված էին սևեռվելու դրանց վրա և լռելու սեփական ընտանիքում «ավելի թեթև» բռնության փորձի մասին։ Սակայն մյուս կողմից նկատելի էր, որ կանայք, հենց շնորհիվ խմբային քննարկման, շատ ավելի հեշտ էին կիսում իրենց կենսափորձի պատմությունները և ապրումները՝ մշակութայնորեն սովորական համարելով իրենց պես, թեկուզ անծանոթ կանանց հետ դրանց մասին զրուցելը։ Արդյունքում հաճախ մասնակից կանայք իրենք էին սկսում միմյանց հարցեր տալ և նույնիսկ բանավիճել թեմայի շուրջ, մի բան, որից հետազոտողները դասական ֆոկուս խմբում պետք է խուսափեին թույլ տալ։

Թեմայի առանձնահատկության տեսանկյունից երկակի դեր էր խաղում Հայաստանի գյուղերում և փոքր քաղաքներում սոցիալական կապերի խտությամբ պայմանավորված

որոշ մասնակիցների միմյանց ծանոթ լինելը։ Մենք նկատեցինք, որ երբեմն կանայք արտահայտում են ավելի շատ իրենց համայնքի սոցիալական ակնկալիքներին համապատասխան մտքեր, քան կասեին լիովին անծանոթ միջավայրի հնարավորության դեպքում։ Մյուս կողմից համայնքի ծանոթ ներկայացուցիչների ներկայությունը համայնքին հայտնի խնդիրների մասին անկեղծանալու հնարավորություն էր տալիս։

Պետք է նշենք, որ ցավալիորեն բռնության առօրեականությունը և դրա մշակութայնորեն ոչ դատապարտելիությունը ևս օգնում էր կանանց դրա մասին ազատ արտահայտվել՝ իմանալով, որ դրանով շատ չեն տարբերվում այլ կանանցից։

Հաջորդ մեծ խնդիրը ընտանեկան բռնության՝ որպես խնդրի հասարակական թաքնվածությունն է, և որքան էլ այն լինի ուսումնասիրված, ընտանեկան բռնության հանդեպ ընկալումների և ձևերի տարածվածության մասին վիճակագրական տվյալները չեն արտահայտում իրական պատկերը։ Բացի այդ, ընտանեկան բռնության ֆենոմենը հանրային քննարկման է դրվել միայն վերջին տարիներին։ Գերիշխող մշակույթում այն ձևակերպված և խնդրականացված չէ, և ոչ միայն քանակական, այլև որակական գիտելիքը չի կարող լիարժեք պատկերի և լավագույն ընտրանքի հիմք լինել։ Ուրեմն նախնական տվյալներն ավելի շատ մեզ ասում են, թե որքանով են այս կամ այն մարզում, այս կամ այն սոցիալական խմբերը բարձրաձայնում ընտանեկան բռնության մասին, քան թե ինչպիսի տարածվածություն և առանձնահատկություններ ունի խնդիրը։ Այս պայմաններում ընտրանքի համար մշակվել են առավել ընդգրկուն սկզբունքներ, որոնք թույլ են տալիս ստանալ խնդրի ընդհանուր և հիմնական պատկերը, սակայն մյուս կողմից բաց են թողնում տարբեր գործոններով պայմանավորված ենթամշակութային նրբությունները։

Եվ վերջում նշենք հետազոտողներին առնչվող հիմնարար խնդրի մասին. լինելով Հայաստանում ապրող և սոցիալականացված կանայք՝ աշխատանքի տարբեր փուլերում ներգրավված բոլոր 4 հետազոտողներն էլ (2-ն ամուսնացած, 1-ը ամուսնալուծված և 1-ը չամուսնացած) ընտանեկան բռնության և սահմանափակումների իրենց անձնական կենսափորձի որոշակի տարրեր վստահաբար ներմուծել են հետազոտության նախագծման, հասկացությունների ըմբռնման, հարցերի մշակման, տվյալների ստացման և մեկնաբանման գործընթացներում։ Միաժամանակ ինչպես հետազոտող, այնպես էլ պատվիրատու կողմերը քաղաքական առումով զգայուն են ընտանեկան բռնության ֆենոմենի հանդեպ, այս հարցում ունեն հետերոնորմատիվ հայրիշխան հենասյունով ընտանիքն իբրև ինստիտուտ խնդրականացնող դիրքորոշում։ Սա հետազոտողներից լրացուցիչ ջանքեր և լայնախոհություն պահանջեց տեղերում իրականության հետ առնչվելու, կանանց փորձը բացահայտելու և այն հարգանքով ու համարժեքորեն արձանագրելու առումով։ Եվ ուրեմն այս վերլուծության յուրաքանչյուր ընթերցողից ևս նույնքան ջանք կպահանջվի կանանց նկատմամբ բռնության բացահայտված փորձը և կանանց կողմից այդ փորձի իմաստավորումը հարգելու և խստորեն հաշվի առնելու առումով։ Հարկ է պատրաստ լինել հաշվի նստելու կանանց կողմից սեփական և այլ կանանց կյանքի իմաստավորման ձևերի հետ և հարգել ինչպես հաճախ հանդիպող նրանց անձնազոհ նվիրումը սեփական անձից վեր դասված գաղափարի՝ ընտանիքի հանդեպ,

այնպես էլ նրանց կողմից նկատված խնդիրների բարձրաձայնումը և դիմադրության համարձակությունը։ Թեև մենք վիճարկում ենք ընտանիքի գաղափարի հանդեպ կանանց նվիրումի ձևավորման ազատությունը՝ համարելով դա սոցիալ-մշակութայնորեն պարտադրված Հայաստանի բոլոր կանանց, սակայն հարկ ենք համարում հարգել կանանց՝ ընտանքի համար կրած և կրելիք զրկանքների պատրաստակամությունը, ինչպես և աջակցել ներկա ընտանիքի խնդրահարույց կողմերը հարցադրող թեկուզ և սակավ հանդիպող դիրքորոշումները։

Այսպիսով, հետազոտության գործընթացն ու արդյունքների ամփոփումը իրականացվել է

- առանց Հայաստանի կանանց բազմազան փորձերը լիարժեքորեն ընդգրկելու անիրատես հավակնության,
- տարբեր կանանց կարծիքների հիմքում իրենց անհատական փորձը, սոցիալական դերերն ու դիրքերը հաշվի առնելով (չամուսանցած ուսանող, թե՞ (սպասված)սկեսուր/զոքանչ),
- միաժամանակ հետազոտությանը մասնակից կանանց կենսափորձերի և դրանց իմաստավորումների հանդեպ հարգանքի, բայց նաև հաճախ դրանց հետ անհամաձայնության և դրանք փոփոխելու ձգտման պայմաններում։

2. Ընտանիքում կանանց նկատմամբ սահմանափակումների և բռնությունների տեսակները, դրանց ըմբռնումները

Նախնական բռնության մշակույթը

Կանանց նկատմամբ ընտանեկան բռնության պրակտիկաները անկախ չեն Հայաստանում տիրապետող հետերոնորմատիվ հայրիշխան ընտանեկան մշակույթի այլ կողմերից: Դրանք հիմնավորապես փոխկապված են ընտանիքի յուրաքանչյուր անդամի, այդ թվում՝ կանանց և երեխաների սահմանված ու սահմանափակված դերերի և ընտանիքում աստիճանակարգված իշխանական հարաբերությունների մասին կարծր պատկերացումների հետ: Սկսած վաղ տարիքից՝ Հայաստանի հասարակությունում և՛ աղջիկ, և՛ տղա զավակները հիմնականում սոցիալականացվում են բարձր վերահսկողության և անազատության պայմաններում: Նրանց որպես ինքնուրույն անհատ գործելու ունակությունները չեն խրախուսվում և թույլ են զարգանում. ծնողները մշտապես պարտավորություն են զգում վերահսկելու իրենց երեխաներին և կայացնելու ապագայի վերաբերյալ որոշումները նրանց փոխարեն, ինչի հետևանքով իրականում տուժում է նրանց սոցիալական հասունությունը: Ծնողների շրջանում տարածված են անվտանգության վախեր՝ անկախ երեխայի սեռից և պայմանավորված ժամանակակից կյանքի՝ «ինֆորմացիոն դարի» ռիսկերով, լայն սոցիալական միջավայրի (այդ թվում երեխայի ընկերների) ու պետական հաստատությունների հանդեպ խորին անվստահությամբ:

- *Տղա, թե աղջիկ կարևոր չէ, երեխան ուշադրություն և դաստիարակություն է պահանջում, որ տարիքում էլ լինի, հատկապես հասունության փուլում և՛ աղջիկը, և՛ տղան, որովհետև, եթե մի պահ բաց թողեցինք, հիմնականում խնդիրները մեծ կլինեն և չենք կարողանա դրա դեմն առնել: Չմոռանաք, որ երեխայի դաստիարակությունն իրականանում է դպրոց-ընտանիք-սոցիալական միջավայր համատեքստում, այսինքն՝ եթե այս համատեքստը միասին չի գործում՝ միայն դպրոցը ուշադրություն դարձնի 40 րոպեի ընթացքում, ընտանիքում մայրը ուշադրություն չդարձնի և հետո ընկերներն իրենց ազդեցությունն ունենան, բնականաբար, այս բաց աշխարհում, ինֆորմացիոն դարում իրենց բացասական ազդեցությունը մենք կտեսնենք մեր երեխաների դաստիարակման գործում:* **ք. Գյումրի, ամուսնացած կին**

Սոցիալական միջավայրի հանդեպ անվստահությունն ու վախը հիմք են դառնում շատ ծնողների համար, որպեսզի իրենց երեխաներին, հատկապես տղաներին բռնության ձևեր և ագրեսիվ վարք ուսուցանեն: Արդյունքում այլոց նկատմամբ ուժ և իշխանություն բանեցնելը սովորական են դառնում երեխաների և հասուն մարդկանց հարաբերություններում:

- *Օրինակ երեխաներին ի՞նչ են սովորեցնում. «Մեկը քեզ բան կասի, քարը վերցրու, տու՛ր գլխին»:* **ք. Աշտարակ, ամուսնացած կին**

Սա նախադրյալ է դառնում հետագայում ընտանեկան հարաբերություններում բռնի մեթոդների՝ որպես ընդունելի վարքաձևի կիրառության համար: «Դաստիարակչական» բռնությունները կիրառելի են համարվում ոչ միայն ավագների կողմից երեխաների նկատմամբ[16], այլև չափահաս անդամների միջև:

Բռնության ձևերը՝ սկսած սահմանափակումներից մինչև ֆիզիկական ծեծ, այս համատեքստում համարվում են հոգատարության կամ անվտանգության ապահովման մեթոդներ: Միաժամանակ, երեխաների սահմանափակումների՝ «կարելի-չի կարելիների» ցանկերը որպես կանոն խստորեն տարբերվում են տղաների և աղջիկների համար: Եթե տղաների դեպքում նման սահմանափակումները ավելի քիչ են ու ժամանակի ընթացքում կրճատվող, ապա աղջիկների դեպքում պատկերը հակառակն է: Դեռևս սոցիալականացման ամենավաղ փուլերից՝ մանկապարտեզում և դպրոցում, աղջիկների հանդեպ գործադրվող անհավասար սահմանափակումները և տղաներին տրվող արտոնությունները (վեր)արտադրում են հասարակության կողմից ողջախոհ և ինքնստինքյան ակնհայտ համարվող՝ կանանց ստորադասության ընդունված պատկերացումը՝ ինչպես տղամարդկանց շրջանում, այնպես էլ կանանց ինքնընկալման մեջ:

- *Հայկական մենտալիտետը շատ սխալ է, դրվածքը հենց մանկապարտեզից, դպրոցից է. դու աղջիկ ես, նա տղա, և աղջիկ-տղա տարբերությունը շատ է*

[16] Երեխաների հանդեպ «դաստիարակչական» բռնությունների տարածվածության մասին խոսում են «ՀԺԱՀ 2015-16» տվյալները: Ըստ դրա, երեխաների 65%-ը ենթարկվել է հոգեբանական ագրեսիայի, իսկ 38%-ը՝ ֆիզիկական պատժի որևէ տեսակի: Ֆիզիկական խիստ պատժի ենթարկվել է 4%-ը (ամբողջական զեկույցն այստեղ՝ http://www.armstat.am/file/article/adhs-2015-armenian.pdf)

դրվում: Սկզբից պետք է հավասար սկզբունքների վրա դրվի, որ հետագայում այդ անհավասարությունները չլինեն: **գ. Մրգանուշ, ամուսնալուծված կին**

Այս անհավասար սահմանափակումները, որոնք մենք կսահմանենք՝ որպես նախնական բռնություն, պարարտ հող են ձևավորում հետագա բոլոր տեսակի բռնությունների և անհավասար վերաբերմունքների համար: Նախնական բռնության հետևանքով կանանց շրջանում ձևավորվում է ներքնայնացված ինքնաստորադասումը, ավագների և տղամարդկանց կողմից մշտապես սահմանափակումների ենթարկվելու լեգիտիմության ըմբռնումը և հետագա բռնությունները կանխող ինքնավերահսկումն ու ինքնասահմանափակումը. այդպես ձևավորվում է *«սխալ թույլ չտվող, խելոք, չափը ճանաչող»* կնոջ իդեալը:

Արդյունքում կանայք, որքան էլ տարակարծություն ու անհնազանդություն դրսևորեն տարբեր ոլորտներում իրենց ազատության սահմանափակման հարցում (ծնողական ընտանիքի, ամուսնու, ամուսնու ընտանիքի կողմից), միևնույն է, գտնում են, որ կնոջ համար ազատությունը պետք է չափավոր լինի: Նույնիսկ այն դեպքերում, երբ քննարկվում է կին-տղամարդ իրավահավասարության հարցը, տիրապետում է այն կարծիքը, որ կանանց համար ամեն ինչ *«չափի մեջ է գեղեցիկ»* և կանանց ազատությունը սահմանափակ է: Կանայք իրենք սկսում են ընդունել, որ շատ բաներ պարզապես իրենց համար թույլատրելի չեն, համակերպվում են հասարակության, շրջապատի, ընտանիքի կողմից առանձնացված *«կաղապարներին»*, ինչն արդեն սահմանափակումից վերաընկալվում է իբրև սովորական կենսաձև.

- *Չթողնել հասկացությունն էլ չկա, դու արդեն գիտակցաբար ես գնում դրան: Չթողնելու պահն այն է եղել, որ ես ավարտել ամուսնացել եմ, աշխատել չեն թողել ու գիտակցաբար ես քիչ-քիչ հասկացել եմ, որ ընտանիքի համար է սա: Թե չէ, հիմա այդ տարիքը չէ, որ չթողնել հասկացությունը լինի: Դու ինքդ ես մտնում այդ կաղապարի մեջ:* **գ. Մրգանուշ, ամուսնացած կին**

Վերահսկվածության լեգիտիմությանը և ինքնասահմանափակումներին զուգահեռ՝ կանանց շրջանում ընթանում է սպասվող բռնությունը շրջանցելու, միաժամանակ սեփական ցանկություններին հասնելու մշակութային *«խելացի»* ու թաքուն (կանացի) մեխանիզմների յուրացումը, մշակումն ու գործադրումը:

Հետևաբար, երբ խոսում ենք ընտանեկան բռնության՝ որպես այդպիսին ըմբռնման մասին, ապա խոսում ենք

1. կամ ընտանիքներում կնոջ հանդեպ ընդունելի սահմանափակումներն անընդունելի՝ բռնի միջոցներով գործադրելու,
2. կամ ընտանիքի անդամների կողմից *«չափի»* տարբերվող ընկալումների,
3. կամ էլ *«չափն անցնելու»* և/կամ *«խելացի»* մեխանիզմները չկիրառելու դեպքերի մասին:

Բռնության հիմնական տեսակների ըմբռնումները

Հետազոտության մասնակիցների շրջանում ընտանեկան բռնության մասին ըմբռնումները վերաբերում են մեծամասամբ ամուսնական (զուգընկերոջ) ընտանիքում կնոջ հանդեպ գործադրվող ճնշումներին և բռնություններին: Սա կարող է նշանակել, որ իրականում ամուսնացած կանանց հանդեպ բռնությունն առավել տարածված է: Բացի այդ, ծնողական ընտանիքում հանդիպող ճնշումները, սահմանափակումները և բռնության այլ ձևերը պակաս են ըմբռնվում որպես այդպիսին՝ ավելի հեշտորեն համարվելով հոգատարության կամ անվտանգության ապահովման մեթոդներ: Հաճախ նկատելի էր, թե ինչպես են նույնիսկ բռնության մասին ազատորեն քննադատաբար արտահայտվող կանայք աննկատ թողնում սեփական անձի հանդեպ ծնողի սահմանափակումները՝ իրենց կյանքի միջադեպերի մասին նկարագրությունները չուղեկցելով քննադատական գնահատականով:

- *36 տարեկան եմ… Պապաս ինձ չի թողնում, որ դուրսը ման գամ: …Դե երևի պապան ավելի շատ փորձ ունի, գտնում եմ, որ հայրիկս իմ լավի համար է անում:* **ք. Վանաձոր, չամուսանցած կին**

Կանայք, ովքեր բռնության թեթև համարվող ձևերի են բախվում, ևս հակված չեն դա իբրև բռնություն ըմբռնել՝ չնկատելով ընտանիքի ներսում իշխանական հարաբերությունները և չնույնականացնելով ընտանիքի անդամներին և սեփական անձը բռնություն կիրառողի և բռնության ենթարկվողի հետ: «Թեթև» սահմանափակումները ամբողջովին ընդունելի են քանի դեռ աստիճանաբար չեն վերաճել ակնհայտ բռնության դրսևորումների:

Նույնիսկ բռնության այսպիսի ցածր զգայունության պայմաններում բոլոր ֆոկուս խմբերում հանդիպել են կանայք, ովքեր բարձրաձայնեցին իրենց հանդիպած բռնության ծանր և միջին աստիճանի փորձառությունների մասին, ինչպես նաև կիսեցին իրենց ծանոթների մասին պատմությունները:

Կանանց հանդեպ բռնությունը դրսևորում է նրանց կյանքի կազմակերպման ամենատարբեր ոլորտներում: Հասարակական արձագանքից խուսափելով՝ կանայք շատ դեպքերում չեն բարձրաձայնում բռնության խնդիրների մասին և համակերպվում են նման վիճակի հետ: Ինչպես ֆոկուս խմբերի ընթացքում բացահայտված դեպքերն են ցույց տալիս կանանց հանդեպ կիրառվող բռնության ձևերը ամենատարբեր բնույթի են: Բռնարարները իրենց վրա պարտավորություն են վերցնում զրկել կանանց իրենց ծնողների, ընտանիքի անդամների հետ շփումից, շրջապատի կամ ընկերուհիների (հակառակ սեռի ընկերների մասին քննարկումն առհասարակ բացակայում է) ընտրության հնարավորությունից, ծայրահեղ դեպքերում նաև երեխաների տանից դուրս խնամքի ձևերով զբաղվելուց (մանկապարտեզ, դպրոց տանել), ինչպես նաև սահմանափակել կանանց տեղաշարժման, աշխատելու, կրթություն ստանալու հնարավորությունները:

1. **Ֆիզիկական բռնություն**

Որպես ընտանեկան բռնության հստակ ընկալելի տեսակ հետազոտությանը մասնակից կանայք առանձնացնում են առաջին հերթին ֆիզիկականը: Բռնության ըմբռնումը քննարկելիս կանանց համար կարևոր էր առանձնացնել դրանց կրկնվողության հարցը: Շատ դեպքերում, տարբեր հանգամանքներից ելնելով, կանայք հանդուրժելի են համարում իրենց նկատմամբ կիրառվող բռնությունը՝ անկախ ծանրության աստիճանից, կամ խրախուսում են այլոց համակերպվել դրա հետ, եթե այն պարբերական բնույթ չի կրում: Միայն դեպքերի պարբերականությունը և գնալով ծանրացումն է ստիպում բռնությանը լուրջ վերաբերել և պայքարի մեխանիզմներ մշակել: Հետևաբար բռնության՝ որպես այդպիսին միանշանակ ըմբռնումը վերաբերում է առաջին հերթին ֆիզիկական կրկնվող-շարունակական բռնությանը, կանանց բառերով՝ «*ծեծուջարդ*»-ին:

- *Ես դիմացել, դիմացել եմ, բայց հետո, երբ հարցը հասել է ահավոր ծեծ-ջարդի, պատերազմի... Մեզ մոտ ոչ միայն մանրուք հարցերն են եղել. նրա ծնողները հոգեկան հիվանդներ են եղել և որոշ բաներ էլ նրա մեջ է անցել: Այդպես 6 տարի մի կերպ դիմացա ծեծուջարդին, հետո արդեն առողջական խնդիրներ ունեի: Այնքան էր ծեծել, որ ողնաշարի խնդիր ունեցա, ողնաշարս էր ջարդել և այլն: Արդեն, էլ չդիմացա, երեխայիս վերցրեցի, որ գամ ծնողներիս մոտ, դե արդեն գիտեր՝ բաժանվում եմ, եկավ, խաբեց՝ երեխային տարավ:* **ք. Վանաձոր, ամուսնալուծված կին**

Ֆիզիկական բռնության դեպքերը տարածված են ինչպես ծնողական ընտանիքներում՝ ծնողների (այդ թվում մոր) կողմից, այնպես էլ ամուսնական ընտանիքներում՝ հիմնականում ամուսինների, բայց նաև ամուսնու հարազատների (տագրոջ, սկեսրոջ) կողմից: Հետազոտության ընթացքում բացահայտվել են ծեծից բացի ֆիզիկական բռնության այլ՝ չարչարանքի տարատեսակ դեպքեր.

- *Ամուսինս ինձ հղի վիճակում մեկ ոտքի վրա էր կանգնեցնում ու դրանով զվարճանում էր: Ես լացում էի ասում էի՝ ի՞նչ եմ արել, ինչո՞ւ ես կանգնացրել: Ասում էր «էդ էր պակաս բան արած լինեիր, կինս ես, պետք է ասեմ՝ անես»:* **գ. Մրգանուշ, ամուսնալուծված կին**

Ֆիզիկական բռնության կրկնման պայմաններում կանայք անհնար են համարում ընտանեկան համակեցությունը: Սա այն սակավ դեպքերից է, որի պայմաններում ամուսնալուծությունը գրեթե բոլորի կողմից դիտարկվում է իբրև լուծման տարբերակ:

2. **Հոգեբանական բռնություն**

Ֆիզիկական բռնությունից առավել տարածված է համարվում հոգեբանական բռնությունը, որը հստակորեն առանձնացվում է կանանց կողմից, սակայն առավել հաճախ ձևակերպվում է որպես *«հոգեբանական ճնշում»*: Հոգեբանական բռնությանն առնչվող դեպքերը հետազոտությանը մասնակից կանայք նկարագրում են *«խանդ, չթողնել ինչ-որ բան անել, ճնշել, արհամարանք, վատ վերաբերմունք, կառավարել, իշխել»* հասկացություններով:

Որպես հոգեբանական ճնշման անտանելի դրսևորումներ առանձնացվում են՝ *արհամարհանքը կնոջ հանդեպ, շփման սահմանափակումը, վիրավորանքը, կնոջ կարծիքը հաշվի չառնելը*: Որոշ կանայք նշում են, որ ֆիզիկական բռնության որոշակի՝ մեղմ դրսևորումներն ավելի ընդունելի են, քան կնոջ՝ որպես անհատի հանդեպ արհամարհանքն ու անտեսումը:

- *Հոգեբանական ճնշումը՝ բառերով... պարտադիր չէ, որ ինչ-որ հարված լինի, որ մարդն այդ պահին իրեն վնասված զգա: Պարտադիր չէ, որ խփեն դեմքիդ, որ դու զգաս՝ ներսից ջարդվում ես, կարող է խոսքով վերաբերմունքով այնպես վիրավորեն, որ դու լրիվ կոտրվես: .... Ֆիզիկականը կարող է այդ պահին ցավը զգաս ու անցնի, իսկ հոգեբանական բռնությունը արդեն մի տեսակ ուրիշ ձևի է ճնշում, եթե անընդհատ լինում է...* **գ. Մրգանուշ, ամուսնացած կին**
- *Այո՛, դիցուք՝ կինը կարող է ինչ-որ բան ասել, բայց նրան ոչ-ոք «բանի տեղ» չդնի: Լինում են նաև դեպքեր, երբ տանը սկեսուր կա և նույն բանը, եթե սկեսուրն է ասում, ամուսինը շատ խելոք կատարում է, բայց երբ կինն է ասում՝ չի կատարում:* **ք. Աշտարակ, ամուսնացած կին**

Հոգեբանական ճնշումների շարքին են դասվում ամուսնու ծնողների կողմից՝ *հարսի հագուստի ընտրությունը կամ գնումը, երեխայի անձնանունների որոշման, խնամքի, դաստիարակության միջամտությունները, կենցաղավարության սովորությունների անհամատեղելիության պայմաններում առաջ եկող պարտադրանքները*:

- *Մի քիչ տարիքով մեծ կանայք փոքր-ինչ նախանձով են վերաբերվում: Հիմա լվացքի մեքենա կա, ասում են. «Ես ո՞նց էի ձեռքով անում, թող անի, բա իմ ջանը քարի՞ց էր»:* **ք. Վանաձոր, ամուսնացած կին**

Այսպիսի ճնշումները անցանկալի են համարվում, սակայն դիտարկվում են իբրև *դիմանալու* ենթակա:

Ի տարբերություն ֆիզիկական բռնության, հոգեբանական բռնության որոշ տարատեսակներ չունեն միանշանակ բացասական ըմբռնում: Բռնությունը կամ սահմանափակումները ընդունելի համարելու հիմքում կենտրոնական դեր ունի հատկապես «*խանդ*» հասկացությունը, որով ռացիոնալացվում են ինչպես ամուսնու կողմից կնոջ հանդեպ, այնպես էլ ծնողների, այդ թվում՝ մայրերի կողմից աղջիկ զավակների հանդեպ սահմանափակումները: Խանդն այդ իմաստով մեկնաբանվում է իբրև լրացուցիչ ուշադրության և հոգատարության դրսևորում:

- *Ես կարող է իմ աղջիկ երեխայի հետ իջնեի ինքս մաքուր օդ շնչելու, բայց այդ ժամին շատ տղաներ կան ու ես չէի թողնի, որ երեկոյան 10:30 աղջիկս դրսում լիներ: Երևի մամայական խանդը, որ աղջիկս այդքան տղաների աչքին չերևա, այդ ժամին դրսում չլինի:* **ք.Գյումրի, ամուսնալուծված կին**

Ամուսնացած կանանց հանդեպ խանդը ևս օրինաչափ է համարվում: Անգամ առկա է կնոջ՝ որպես բռնության առիթը դարձած *«խանդի առիթ տվողի»* կրկնակի զոհականացումը:

3. Տնտեսական բռնություն

Տնտեսական բռնության ձևերը հաճախ են բարձրաձայնվում, սակայն միշտ չեն առանձնացվում, այլ ընկալվում են հոգեբանական բռնության շարքում: Տնտեսական բռնության՝ որպես նշանակալի տեսակի ընկալումն ու առանձնացումն առկա է կանանց իրավունքներին առչնվող գործունեություններին կամ դիսկուրսներին հասանելիություն ունեցող հիմնականում երիտասարդ կանանց շրջանում: Տնտեսական սահմանափակումների հաճախադեպ օրինակներից են *աշխատել չթողնելը, ընտանիքի գնումներին կամ գումարի տնօրինմանը մասնակցությունից զրկելը, կնոջ աշխատավարձը ձեռքից վերցնելը*:

- *Ամուսինն արտագնա աշխատանքի է գնում, ինքը նպաստ բան է ստանում, տանն իհարկե որոշակի բաներ առել է, բայց իրավունք չունի գնա խանութ իր համար թեկուզ մի անձնական իր առնի, ինքը պետք է գա խնդրի ու անընդհատ տանը վեճ, կռիվ, ծեծ:* **ք. Գյումրի, ամուսնացած կին**

Տնտեսական միջոցների վերահսկումը շատ հաճախ իրականացվում է սկեսուրների կողմից, և դրա հանդեպ կանանց վերաբերմունքը հիմնականում բացասական է, անկախ նրանից, թե որքանով է սահմանվում որպես բռնություն:

- *Եթե համատեղ են աշխատում պետք է գումար հատկացվի կնոջը… Կան ընտանիքներ սկեսուր-սկեսրայրը կամ ամուսինն են գումարն իրենց մոտ պահում դա շատ սխալ է, կինն էլ օրինակ մի չնչին մանրուք է ուզում գնի, ողորմության նման մի բան է ստացվում, չի կարելի ինձ թվում՝ է դա էլ է բռնության մի ձև:* **գ. Մրգանուշ, ամուսնացած կին**
- *Բայց մեր հարևանների մեջ կան այդպիսի մարդիկ, որ կնոջ աշխատավարձի քարտը ամուսնու մոտ է, ինքն է ստանում ու տնօրինում՝ ինչից ինչքան պետք է գնի, կամ թոշակի քարտը: Դե դա շատ սխալ է:* **ք. Գյումրի, ամուսնացած կին**

Թեև տնտեսական բռնությունը ցանկալի չէ, սակայն առավել տանելի և հանդուրժելի է համարվում այն պայմանով, եթե կինն ու երեխաները ապահովվում են տնտեսական բարիքներով: Որոշ դեպքերում համարվում է, որ կնոջը տնտեսապես ապահովելը՝ աշխատելն արգելելու դիմաց, նույնիսկ արտոնություն է: Հետաքրքիր է, որ այսպիսի տեսակետ էին հայտնում աշխատող կանայք, որոնք դրանով, ըստ էության, դրսևորում էին աշխատանքի՝ որպես պարտադրված մի բանի հանդեպ իրենց վերաբերմունքն ու ըմբռնումները: Հանրային տնտեսական գործունեության կնոջ կարիքները երկրորդական են համարվում հատկապես միջին և ավագ տարիքի կանանց կողմից: Այս պայմանների առավելության մասին խոսելիս կանայք գտնում են, որ եթե կնոջը տրված է չաշխատելու *«հնարավորությունը»* կինը պարզապես պետք է հարմարվի ու շարունակի ապրել այդ ընտանիքում՝ չձգտելով հանրային գործունեության: Այստեղ ակնհայտորեն գործում է կնոջ ընտանեկան դերերի և ֆունկցիաների ֆետիշացումը և հանրային կյանքում կնոջ մասնակցության և նրա տնտեսական ինքնուրույնության թույլ կարևորումը:

- *Ես չեմ ասում, որ եթե ընտանիքը դեմ չէ, թող չաշխատի, ես ասում եմ, եթե դեմ է ու իրեն ամեն ինչով ապահովում է, այդ պարագայում, թող կինը չաշխատի:* .

- *Ես դեպք գիտեմ, երբ աղջիկը բաժանվել է զուտ այն պատճառով, որ իրեն չեն թողել կայանալ: …. Հետո ինքը փոշմանել է…. Երբեք՝ ընտանիքը միայն ծայրահեղ դեպքում պետք է քանդվի: ….Կանայք ընտանիք կազմելու համար են ծնվել, ու կնոջ կոչումը նախ և առաջ մայր լինելն է, ոչ թե ուսապարկը գցած այս աշխատանքից մյուսին վազելը: Ես օրինակ կնախընտրեի իմ ամուսինը, իմ սկեսրայրը, ունենային այն պայմանները, որ ես չաշխատեի: Ամբողջ տան հոգսը սիրով կանեի տաս հատ էլ երեխա կունենայի: Մի ասեք, որ կնոջը զրկում են, եթե կինը ստեղծված է, որ մայր պետք է լինի, դրանից հաճելի մասնագիտություն այս կյանքում չկա:* **ք. Արմավիր, ամուսնալուծված կին**

Սրան հակառակ՝ որոշ առանձին դեպքերում աշխատանքի սահմանափակման ենթարկված կանայք, մնալով կնոջ և տղամարդու միջև անխախտ սահմանների ընկալման շրջանակում, նշում էին նման պրակտիկայի սխալականությունը՝ անգամ ընդգծելով իրենց կողմից ապագա հարսներին աշխատելու հարցում աջակցելու պատրաստակամության մասին:

- *Չգիտեմ իմ մտածելակերպն է միգուցե այդպիսին, բայց ես երկու տղա ունեմ հարսներ եմ ունենալու ապագայում: Միշտ մտածել եմ, որ այն, ինչ չի կարելի եղել ինձ համար, իրենց կարելի է լինելու: Բայց կնոջ ու տղամարդու մեջ ինչ-որ սահման ամեն դեպքում պետք է լինի:* **գ. Մրգանուշ, ամուսնացած կին**

Մեկ այլ խումբ՝ երիտասարդ չամուսանացած կանայք ընդգծում են կնոջ տնտեսական ինքնուրույնության կենտրոնական դերի մասին և այս հարցում նկատում են կնոջ՝ որպես հավասար մարդու գործունեության սահմանափակում:

Որքան հանդուրժելի են տնտեսական միջոցների վերահսկողությունները, այնքան էլ տարածված են և բազմազան դրանք թաքուն շրջանցելու մեթոդները, որոնք կարող ենք անվանել «տակից կարգավորումներ»: Նկատելի է, որ հենց այս շրջանցման մեթոդներն են սահմանակումները դարձնում առավել տանելի: Համարվում է, որ «լավ կինը» պետք է ունակ լինի մեթոդներ ձեռնարկել դրամական և սննդամթերքի տեսքով թաքուն պահուստներ կուտակելու:

- *Կինն անպայման պետք է իր ձեռքի գումարն ունենա, կապ չունի ամուսինը 100.000 բերեց: Դու այնպես պետք է ծախսես, որ ամուսինը չիմանա, կարող է այդ 10.000-ը այնպիսի ժամանակ պետք գա, որ ամուսինդ էլ զարմանա, որ դու դա դեռ ունես, կինը միշտ իր խնայողությունը պետք է ունենա՝ թեկուզ 1000 դրամ: Կարող է ինձ այսօր զանգում կանչում են, ես պետք է իմ տրանսպորտի գումարն ունենամ: ….Կինն իր տան գողն է, պետք է ամեն ինչ պահի: Կարող է տունը հինգ կիլոգրամ շաքարավազ լինի, հարցնեն տանը շաքարավազ կա ասես չէ, բե՛ր, որ այդ հինգ կիլոն կողքի դնես:* **ք. Գյումրի, ամուսնացած կին**

Այսպիսի տակից կարգավորումները երբեմն կարող են զավեշտալի դրսևորումներ ունենալ:

- *Ես աղջիկ գիտեմ, որ արդեն երկար ժամանակ է՝ ամուսնացած է և աշխատավարձն ամբողջությամբ տալիս է իր սկեսուրին: Նա բանկում է*

աշխատում և շատ լավ հագնվում է, իր ուտելիքը շատ լավն է: Որովհետև չնայած նա իր գումարն ամբողջությամբ տալիս է սկեսուրին, բայց իր ամուսինը իր աշխատավարձի չափ նրան գումար է տալիս, որպեսզի տանն այդ խնդիրը չլինի: **ք. Վանաձոր, ամուսնացած կին**

4. **Սեռական բռնություն**

Ընտանիքի ներսում սեռական բռնությունը ամենանվաստացուցիչ բռնության տարատեսակն է համարվում: Սեռական բռնության դեպքերի և տարածվածության մասին հարցը ամենից հաճախ էր բախվում հետազոտության մասնակիցների լռության արձագանքին: Հարցն ինքնին խուսափելի էր կանանց համար: Հետազոտության մասնակիցները նշում են, որ խնդիրը կա, պարզապես դրա մասին ոչ ոք երբևէ չի բարձրաձայնում:

- *Իմ կարծիքով հասարակությունն էլ դրան ռեակցիա չի տալիս այդքան: Սեռական բռնությունը քո ընտանիքում դա նորմալ է, դե ես այդքան մանրամասն չգիտեմ, բայց օրինակ, եթե մեկը պատմում է դրա մասին կարող են վիրավորել ու ասել՝ ինչու ես պատմում դա: Դրանից ինչ-որ կոմպլեքսներ է առաջանում կանանց մեջ, որ իրենք աշխատում են չարտահայտվեն:* **գ. Մրգանուշ, չամուսնացած կին**

Այս դեպքերի մասին մեր հասարակությունում խոսվում է միայն նեղ մասնագիտական շրջականերում: Որոշ ֆոկուս խմբային քննարկումների ժամանակ, օրինակ Գյումրիում, հաջողվեց ավելի շատ քննարկել հարցը: Մասնակիցները նշում էին դեպքերի տարածվածության մասին, չնայած թեմայի տաբուացվածությանը, ինչի հիմքում ընկած է հասարակական արձագանքից ու պիտակավորվելուց մարդկանց խուսափողականությունը: Սեռական բռնության խնդիրը բռնության տարատեսակներից ամենալռեցվածն է: Այն հանդիպում է ինչպես ծնողական ընտանիքներում, այնպես էլ ամուսինների միջև: Հետաքրքիր է նկատել, սակայն, որ սեռական բռնությունը այն միակ բռնության ձևն է, որն ավելի հաճախ է ըմբռնվում իբրև բռնություն, երբ հանդիպում է ծնողական ընտանիքում, և շատ ավելի հազվադեպ է նկատվում իբրև բռնություն, երբ տեղի է ունենում ամուսինների միջև: Սեռական բռնության դեպքերի կանխումը շատ ավելի բարդ ինստիտուցիոնալ լուծումներ է պահանջում:

- *Անչափահաս աղջիկ երեխային հայրը բռնաբարել է: Երբ գործն արդեն դատախազությունում էր, պետք է բացահայտվեր, հայրն իրեն կախեց (շեղում ուներ այդ մարդը), բայց մայրը մինչ այդ տեղյակ էր ու պահում էր իր երեխաներին: Հիմա մայրը դարձել է անբարոյական, երեխաներին տանից հանել է դուրս: Երեխաների խնամքի հատուկ կենտրոններ կան, հիմա այնտեղ են գտնվում:* **ք. Գյումրի, ամուսնացած կին**

Սեռական բռնության թեման առանձին հետազոտության կարիք ունեցող թեմա է, քանի որ վերջինս ամենից փակ և դժվար բացահայտելին է, իսկ կանանց սեռական կյանքը՝ ընտանիքում ամենից վերահսկված ոլորտը:

***

Կարևոր է նկատել, որ բռնության դեպքերը իրականում հանդիպում են բարդ և խառը ձևերով, և դրանք պարունակում են միանգամից մի քանի տարատեսակին բնորոշ բաղադրիչներ: Ստորև առանձին կքննարկենք այդպիսի խառը, փոխհաջորդող և հաճախադեպ (առնվազն առավել բարձրաձայնված) բռնության տիպային դեպքերին, որոնք առնչվում են կանանց կյանքի հիմնական ոլորտներին՝ ամուսնությանը, կրթական-տնտեսական գործունեությանը և սոցիալական կապերին, ինչպես նաև կանդրադառնանք բացահայտված այլ տիպի խնդիրների:

Ամուսնության տարիք և որոշում

Ընտանիքի կողմից վերահսկվող հիմնական ոլորտներից մեկը ամուսնությունն է՝ որպես անձի սեռական և տնտեսական կյանքի հիմնական ոլորտ: Առհասարակ ամուսնությունը դիտարկվում է իբրև անհրաժեշտ փուլ և գլխավոր իրադարձություն յուրաքանչյուր անձի՝ զավակի համար, և ծնողները մեծապես ներգրավված են դրա որոշման մեջ: Հաճախ կնոջ ամուսնանալու եղանակը կենտրոնական ցուցիչ է, թե որքանով է ծնողական ընտանիքում հարգվում նրա անձնական արժանապատվությունը կամ որքանով են գենդերային հիմքով ծնողական ճնշումներն ու սահմանափակումներն ակտիվ: Միաժամանակ այն պայմանավորում է ապագա ամուսինների միջև իշխանական հարաբերությունների կառուցման հիմքերը և նշանակալիորեն ազդեցություն ունենում նոր ձևավորվող ընտանիքում կնոջ դերի և անհատականության դրսևորման հնարավորության վրա:

Որպես կանոն հանրային ընկալումներում կնոջ չամուսնանալու ցանկությունը անգամ չի դիտարկվում, քննարկման առարկա են միայն սեփակա՞ն, թե՞ այլոց որոշումով ամուսնանալու, սիրելո՞վ, թե՞ առանց սիրելու զույգի ընտրության, ամուսնական տարիքի և այլ հարցեր: Եթե նույնիսկ կանանց չամուսանանալու կամ ուշ ամուսնանալու դեպքերը քանակապես աճում են, ապա դրանք չամուսնանալու որոշման կամ ցանկության արդյունք չեն համարվում:

- *Չեմ կարծում, որ աղջիկը չի ուզում ամուսնանալ: Հարցն այն է կգտնե՞ս քո համապատասխան մարդուն, թե՞ ոչ: Ես, օրինակ, 31 տարեկան եմ, ամուսնացած չեմ, չեմ շտապում, չեմ վախենում այն խնդրից, որ ինձ ասում են՝ «վա՜յ ժամանակն է»: Մեր հայ ընտանիքներում՝ ծնունդ լինի, Նոր տարի, հարսանիք, պատահական մարդ հյուր գա, առաջին խոսքը բարևից հետո. «Ե՞րբ ենք լսելու այդ բարի լուրը»: Ես չեմ շտապում, որովհետև ինձ համապատասխան մարդ է պետք...* **Ք. Գյումրի, չամուսնացած կին**

Հետաքրքիր է նկատել, որ հանդիպում են երիտասարդ չամուսնացած կանայք, ովքեր թեև մնում են ամուսնության՝ իբրև բնական անհրաժեշտության մեկնաբանման շրջանակում՝ կնոջ ամուսությունը չեն դիտարկում իբրև պարտավորվածություն:

- *Օրինակ, եթե այն ժամանակ հասարակության կարծիքը շատ էին հաշվի առնում, 24-ից հետո աղջիկը պիտակավորվում էր որպես տունը մնացած, հիմա*

երիտասարդության շրջանում, իմ ընկերների շրջանում այդպես չէ: Աղջիկը պարտավորություն չունի, դա բնական երևույթ է, բայց պարտավորություն չունի, դա իր ընտրությունն է: **գ. Մրգանուշ, չամուսնացած կին**

Հատկանշական է, որ Երևանում բնակվող երկու կին արտահայտվել են չամուսնանալու սեփական որոշման կամ ցանկության մասին:

- *Ես միշտ ասում եմ, եթե ինձ հնարավորություն տրվեր ես մեկ անգամ ծնվելու՝ ես երբեք չէի ամուսնանա: Իսկ երեխա իմ ուզած մարդուց կարայի բերեի:* **ք. Երևան, ամուսնացած կին**

Սակայն նույնիսկ այդ պայմաններում, երբ կինն ազատ է եղել չամուսնանալու ընտրություն կատարել, նա տիրապետող մշակութային ակնկալիքների համատեքստում կարծես իրեն պարտավորված է զգում այլոց՝ երիտասարդներին ամուսնանալու կոչեր անել: Հասարակությունը կնոջ միայնակությունը հնարավոր է համարում իբրև դժբախտ հանգամանք, սակայն ոչ կենսակերպի ընտրություն:

- *Իմ ծնողները չեն ստիպել ինձ, ուրիշներն էլ խորհուրդ չեն տվել.... Չէ՛, ես չէի ուզի, որ ինձ ստիպեին, չէ՛, ես սխալ կհամարեի, ես չեմ ընդունում. ես անկեղծ մարդ եմ, ես չեմ սիրել, ուրեմն չէի կարա ստիպված ապրեի մեկի հետ: Ճիշտ է, մենակ եմ ապրում, բայց ես ինձ մենակ չեմ համարում, քույր ունեմ, եղբայր, լավ ընկերուհիներ ունեմ, բայց պահ է գալիս, որ էդ մենակությունը զգում ես, ջահել վախտը չեմ զգացել, երևի տարիքային առանձնահատկություն ա.... Հիմա արդեն, երբ իմ շրջապատում մարդկանց եմ տեսնում, որ երիտասարդ են, չեն ամուսնանում, ասում եմ. «Երեխեք ջա՛ն, ինձ տեսեք, ձեզ խղճացե՛ք», դա միշտ՝ ամեն օր ասում եմ:* **ք. Երևան, ամուսնացած կին**

Ամուսնության որոշման, զույգի և ժամանակի ընտրության հարցում ծնողների ներգրավման մասին ֆոկուս խմբերի մասնակիցները նշում են ոչ միայն դուստրերի, այլև որդիների դեպքում: Միաժամանակ մեծամասամբ սովորական է համարվում այն, որ զույգի ընտրությունը հիմնականում թողնված է երիտասարդներին: Ըստ հետազոտության մասնակից կանանց, զույգի ընտրության հարցում ծնողների միջամտությունը նվազագույն է հատկապես քաղաքներում: Այդուհանդերձ, գործնականում շատ կանայք սեփական ամուսնության պատմությունը ներկայացնելիս նշում էին, որ իրենց ամուսանանալու որոշումը կայացրել են բարեկամի, ծանոթի «*կամ-տեսնելով*» (միջնորդումով), նրանց ծանոթացնելու ջանքով և խորհրդատվությամբ, իսկ երբեմն նաև ստիպելով:

Նկատելի է նաև, որ ամուսնության հարցում որոշում կայացնելիս գենդերային հիմքով պայմանավորված տարբերությունները և կանանց վրա մշակութային ճնշումները ևս սովորական են: Շատ ազատություններ, ինչպես օրինակ զուգընկերոջ ընտրությունը կամ թեկնածուի մերժումը, որ հնարավոր են որդիների համար, անմատչելի են դուստրերին. հաճախ ծնողները չեն վստահում նրանց որոշումներին: Արդյունքում հանդիպում են անհավանական թվացող դեպքեր, երբ երիտասարդ կնոջ ամուսնությունը տղամարդկանց գործարքի արդյունք է, որին աջակցում է կնոջ ընտանիքը:

- *Ինքն ինձ տեսել էր հեռուստատեսությամբ ու իր հոր հետ գրազ էր եկել, որ ինձ հետ ամուսնանալու ա: Գտել էր եղբորս, եկավ մտավ մեր տուն, ասեց. «Հերիք չի՞ ձեր աղջկան պահեք ձեր տանը, տվեք մի քիչ էլ ես տանեմ, մեր տանը պահեմ»: Ու չգիտես ինչի իմ ծնողները դրանից ասեցին՝ կարգին տղա ա, բայց ինձ չհարցրեցին ինքն ինձ ընդհանրապես դուր գալիս ա, թե չէ….:* **ք.Երևան, ամուսնացած կին**

Ամուսնության հարցում կանանց նկատմամբ ճնշման հիմնական պայմաններից է կնոջ տարիքը:

- *Ծանոթ ունենք, ինքն արդեն 30 տարեկան էր լինում, տարիքը մեծացել էր, աշխատում էր, չէր ուզում ամուսնանար: Ծնողը զոռով ամուսնացրեց, բայց, փառք Աստծո, ինքն հիմա շատ գոհ է իր ծնողից, հարմարվել է, շատ երջանիկ է:* **գ. Մրգանուշ, ամուսնացած կին**

Ընդհանուր առմամբ նշվում է, որ ամուսնացած լինելու (և երեխա ունենալու՝ մայրանալու) մշակութային պահանջը կանանց տարիքային հարցում մեղմացել է, նախկինում միջինը 22-23-ից (առավել գյուղական վայրերում 18-ից, ամենաուշը՝ 25) տեղափոխվելով 25-26, մինչև անգամ 30-35 տարեկան: Այս դրությունը մի կողմից ըմբռնվում է իբրև կանանց կողմից սեփական կյանքի տնօրինման, կրթություն և աշխատանք ձեռք բերելու, կայանալու ձգտման միտում, մյուս կողմից սակայն, տարածված է այն գնահատականը, որ ուշ ամուսնությունները պայմանավորված են ընտանիքների ներկա սոցիալ-տնտեսական ծանր պայմաններով:

Տնտեսական պահանջների բավարարման հրատապությունը հաճախ դրդում է դուստրերին ավելի վաղ տարիքում մտածել ծնողական ընտանիքի հոգսերը կիսելու, ոչ թե ամուսնանալու մասին՝ չխուսափելով ցածր որակավորում պահանջող աշխատանքներից:

- *Հիմա իմ աղջիկը 12-րդ դասարան է: Խանութ է փնտրում, որ աշխատի: Ասում է. «Կխոսեմ, դասի քիչ կգնամ»: Մեր ժամանակ ես չեմ մտածել՝ ծնողներս կոմունալները ինչպես են վճարել, բայց հիմա իմ երեխան ամսվա վերջին գալիս ասում է. «Մամ ի՞նչ պիտի անենք. եկել է մուծման օրը»: Էլ երեխան նշանվելու անուն ինչո՞ւ պետք է տա, այս պահից մտածում է՝ աշխատի:* **ք. Գյումրի, ամուսնացած կին**

Հասարակական*«կարգերի»* փոփոխությունների շնորհիվ վերջին տասնամյակներին կանանց *«էմանսիպացման»*, կնոջ ազատության աճի մասին (այդ թվում, թե որ տարիքում ամուսնանա և ում հետ) նշում էին ֆոկուս խմբերին մասնակցող բոլոր տարիքային խմբերի կանայք: Ուսանող կամ բարձրագույն կրթություն ստացած երիտասարդ չամուսնացած կանայք նշում են, որ այժմ կանայք կարևորում են սեփական աշխատանքը, որպես անհատ կայացած լինելը, ուստի նախընտրում են ավելի մեծ տարիքում ամուսնանալ. սա նաև ասվում էր իբրև սեփական կյանքի մասին պատկերացում: Միաժամանակ նշանակալի է համարվում սեփական կամքով ամուսնու ընտրության հանգամանքը:

Հատկանշական է նաև այն, որ մի քանի մարզերում (Աշտարակ, Վանաձոր) որպես հատուկ ահազանգ էր հնչում կանանց վաղ ամուսնությունների մասին տեղեկատվությունը: Հաճախադեպ է դարձել աղջիկներին առանց դպրոցն ավարտելու կամ անչափահաս տարիքում ամուսնացնելը՝ տնտեսապես ապահովված կամ այդպիսին թվացող՝ հարմար փեսացուների հետ (հիմնականում ԱՄՆ-ում կամ ՌԴ-ում բնակվող):

Այսպիսով, հետազոտությանը մասնակցած կանայք փաստում են, որ Հայաստանի սոցիալ-տնտեսական կառուցվածքի փոփոխությունը ազդել է ընտանիքների ձևավորման պայմանների վրա: Մի կողմից սոցիալ-տնտեսական կարիքները անհրաժեշտաբար մղում են կանանց դեպի ինքնուրույն կյանքի կայացման, կրթություն, աշխատանք ձեռք բերելու և հետո միայն ամուսնանալու, մյուս կողմից հանգեցնում են ցածր տնտեսական հնարավորություններ ունեցող ընտանիքներում դուստրերին վաղ տարիքում ամուսնացնելուն:

Նույն սոցիալ-տնտեսական պայմանների հետևանքով չամուսնացողների կամ ուշ ամուսնացողների համամասնության աճի հետևանքով, որ արձանագրում են հետազոտության որոշ մասնակիցներ, նախկին հասարակական անհանգստությունը մեղմվում է, և որոշակի սոցիալական հանդուրժողականություն է ձևավորվում չամուսնանալու և չամուսնացողների նկատմամբ:

Չնայած աճող հանդուրժողականությանը՝ *«արդեն»* երեսունամյա կնոջ չամուսնանալը ընտանիքում և շրջապատում անհանգստություն է առաջացնում, ինչը նույնիսկ հանգեցնում է ընտանիքի կողմից ճնշումների և հարկադիր ամուսնությունների: Ուժեղ ճնշումների և հարկադիր ամուսնությունները հին արմատներ ունեն, քանի որ դրանց մասին նշում են հատկապես երկարամյա ամուսնական կենսափորձ ունեցող կանայք (15 տարի և ավելի)՝ անկախ բնակության վայրից (անգամ Երևանում), երբ հետահայաց քննարկում են սեփական ամուսնությունների պատմությունները: Գրեթե բոլոր ֆոկուս խմբերում ի հայտ են եկել ծնողների ճնշմամբ ամուսնության պատմություններ՝ ինչպես հասուն, այնպես էլ վաղ տարիքում, ինչպես բարձրագույն կրթությամբ և մասնագիտական աշխատանք ունեցող, այնպես էլ բարձրագույն կրթություն չունեցողների շրջանում: Որոշ դեպքերում հարկադիր ամուսնությունները ընտանիքի անդամների կողմից ուղեկցվել են ուժեղ հոգեբանական ճնշումներով և սպառնալիքներով, որոնց հիմնական հիմնավորումը հասարակական կարծիքի առաջ ընտանիքի պարզերեսությունն է եղել: Այս օրինակները քողազերծում են ընտանիքում դուստրերի դերը, նրանցից ակնկալվող ֆունկցիաները և սահմանները. դուստրերից ակնկալվում է ոչ թե սեփական կյանքի հանրային և անձնական ասպեկտների տնօրինում, երջանկության որոնում, այլ պարզապես ամեն գնով և ցանկացած տիպի ընտանիքի ձևավորում:

- *Իմ ծնողներից երկար ժամանակ նեղացած եմ եղել, որովհետև նրանք ինձ ասում էին. «Դու մեր կոկորդին կանգնած ոսկոր ես…»:…. Մայրս ասում էր. «Ես չեմ կարողանում շրջապատում ոչ մեկին բացատրել, որ դա քո մասնագիտությունն է, աշխատանքդ է, որ դու այդքան ուշ ես տուն գալիս, դու ուզում ես քո մասնագիտությունների մեջ ավելի կայանալ, դրա համար չես ուզում ամուսնանալ,…. ամուսնացի՛ր, գնա՛, դրանից հետո ինչ ուզում ես*

կանես», - և ինձ զոռով ամուսնացրեցին: …. հաշվարկով տվեցին ձեռքն ուղարկեցին, ասեցին. «Կարևորը տուն ունի, կենտրոնում է ապրում, առանձին տանն եք ապրում, մի հատ էլ երեխա լինի, կսիրես»,- բայց տունը եղավ, աշխատանքը եղավ, ամեն ինչը եղավ, բայց սիրելը չեղավ: ….Բացարձակ տարբեր մարդիկ էինք. որ զանգում էր, իմ փոխարեն քույրիկս էր խոսում, մայրս տապըչկեն պահում էր գլխիս վերևում, որ հանկարծ չվիրավորեմ: ….Ճիշտ է՝ միգուցե կոպիտ հնչի, բայց մայրս ասում էր. «Ոտքերդ կջարդեմ, տանից դուրս չես գա՝ոչ մի տեղ, գործի չես գնա»: **ք. Երևան, ամուսնացած կին**

Նման կենսափորձ ունեցող կանանցից շատերի համար տարիների ընթացքում՝ սոցիալական նոր դերեր կրելու արդյունքում (մայր, տատիկ) սկսվում է իրավիճակի հետ համակերպման և «ճակատագրի» ընդունման փուլը:

- *Այո՛, հետո արդեն երեխաներս… հիմա արդեն բանակից եկել է, գոհ եմ: Խելոք երեխաներ ունեմ, հետո արդեն չես փոշմանում՝իմ ճակատագիրն էլ այդպես է ստացվել:* **ք. Երևան, ամուսնացած կին**

Ամուսնության որոշման և տարիքի գործոնի ճնշումները կանանց կյանքում ամենից տարածված պրակտիկաներից են և ամենից սովորական համարվող թեմաներից մեկը: Ամուսնանալու և երեխա ունենալու պարտադիր պահանջները, սակայն հաճախ կարող են հակասել միմյանց: Այս հակասության լուծումն՝ ի օգուտ կնոջ կողմից երեխա ունենալու առաքելության խրախուսման, Երևանի առանձնահատկությունն են. այստեղ կարող ենք խոսել կանանց՝ առանց ամուսնանալու երեխաներ ունենալու դեպքերի մասին:

- *Իմ մատնահարդարը մի քանի ամիս է՝ անհետ կորած էր, հետո տեսա՝ փոքր-ինչ լցված, գիրացած էր, ասում եմ. «Դու մինչև հիմա ու՞ր էիր», - ասեց. «Որոշեցի ճուտիկ ունենալ»,- ասում եմ՝«Ամուսնացե՞լ ես»,- ասում է. «Ո՛չ, ինչու պարտադի՞ր էր»:* **ք. Երևան, ամուսնացած կին**

Շատ անգամներ կնոջ նման որոշումը հասկանալի երևույթ է համարվում և նույնիսկ բնութագրվում որպես «նորմալ»: Զուգահեռաբար քննարկվում են երեխայի ոչ լիարժեք ընտանիքում մեծանալու խնդիրները. ոչ լիարժեք ընտանիքը շարունակում է ոչ սովորական և ոչ ցանկալի համարվել՝ հատկապես տնտեսական խոցելիության պատճառով:

- *Այս դեպքում միշտ ասում են, որ երեխային հայր է հարկավոր, բայց երեխան հայր ունի, միգուցե ուղղակի ծնողներն են առանձին ապրում:* **ք. Երևան, չամուսնացած կին**
- *Դե, պետք է կարողանաս շատ դժվարություններ հաղթահարել՝ կարողանաս պահել, աշխատանք ունենալ, նորմալ աշխատավարձ ստանաս, որ կարողանաս քո երեխային պահել, մեզ մոտ դա շատ դժվար է:* **ք. Երևան, չամուսնացած կին**

Կնոջն այս պարագայում արտոնվում է ամուսնությունից դուրս երեխա ունենալ՝ միայնակ չմնալու հիմնավորմամբ, այնուհանդերձ գործնականում դեպքերի հաճախության աճն ու

պատմությունները ցույց են տալիս, որ երիտասարդ կանայք այսպիսի գիտակցված որոշման գնալիս այլևս չեն զգում հանրության «թույլտվության» կարիքը:

Կրթության և զբաղմունքի սահմանափակումներ

Կանայք հիմնականում փոքր տարիքից սահմանափակված են ունենալ զբաղմունքների այնպիսի շրջանակ, որոնք հասարակության մեջ ընդունված են համարվել *«աղջկան ոչ հարմար»՝* օրինակ երգով, պարով կամ սպորտով կարիերան:

- *Ես ինքս մինչ ամուսնանալս պարի խումբ եմ ունեցել, ու այնքան մեծ նվաճումներ եմ ունեցել ու մեծ հաջողություններ, բայց պապաս ինձ հետ պահեց ու ամեն ինչ ինձ մեջ կոտրվեց:* **ք. Գյումրի, ամուսնալուծված կին**
- *Ճիշտն ասած հորս տանը չթողեցին, որ երգով զբաղվեմ: Լավ ձայն ունեմ երգում եմ, բայց չթողեցին երգեմ: Մեր մեծերը՝ տատիկս, պապիկս ասեցին. «Հիմիկվա երգիչներն ի՞նչ են դառնում»: Ընդհանրապես, չգիտե՞ք, մեծերի մտքով միշտ վատ բան է անցնում: Բայց ես ուզում եմ գոնե աղջկաս տամ երգի կամ պարի: Իմ բաց թողածն ուզում եմ աղջիկներս լրացնեն:* **գ. Մրգանուշ, ամուսնացած կին**

Աշխատելու իրավունքի սահմանափակումը կանանց համար (հատկապես այլոց առնչվող դեպքերը վերլուծելիս ու մեկնաբանելիս), ավելի երկրորդային խնդիրների շարքին է դասվում: Հայաստանյան հասարակությունում *«հայ կինը»* ամուսնանալուց հետո տնային տնտեսության, իսկ հետագայում նաև *«մայրական»* գործառնությունների հիմնական կատարածուն է: Այս տեսակետը ավելի շատ տարածված է ամուսնական մեծ կենսափորձ ունեցող կանանց շրջանում: Նման դեպքերում կանայք պարտավորված են զգում «*հարմարվել»՝* կարևորելով ընտանեկան կյանքը ու խաղաղությունը:

- *Հենց ամուսնացանք՝ արգելեց: Իմ վարիչը խնդրեց-աղաչեց մի տարվա աշխատող էի, ու դիմումի համաձայն երկու ամիս աշխատեցի, այդ երկու ամիսն էլ սև եկավ գլխիս: Նոր էի ամուսնացել 94 թվին: ….Շատ ծանր էի տանում, բայց հետո տան հոգսս այնքան շատ էր, որ պատկերացրեք մի պահ ասում էի. «Ի՜նչ լավ է, որ չեմ աշխատում, ես ինչպես կարող էի հա՛մ տանը, հա՛մ այստեղ»:* **գ. Մրգանուշ, ամուսնացած կին**
- *Ես մարդ գիտեմ, որ ամուսնացած է, ունի երկու երեխա և նա ընդհանրապես չի աշխատել, չգիտի՝ ինչ է աշխատելը: Վարսահարդարություն էր սովորում և հետո 20 տարեկանում ամուսնացավ և մինչև հիմա ընդհանրապես ո՛չ աշխատել է, ո՛չ տանից դուրս է գալիս, ամբողջ օրը 4 պատի մեջ՝ իր երեխան, իր տան գործերը: Ամուսինը շատ խիստ է բոլոր հարցերում՝ իր շորերն ու հագուկապը, իր պահվածքը՝ նա պետք է ոչ մեկի հետ շփում չունենա, նա պետք է առանձին լինի՝ իր ընտանիքը, երեխաները, իր պրոբլեմները: …. Նեղվում էր, սկզբում չէր կարողանում, բայց հիմա արդեն սովորել է, ասում է. «Ես իմ ընտանիքը, ես իմ գլուխը պահում եմ»:* **ք. Երևան, չամուսնացած կին**

Այսպիսի ըմբռնումների շրջանակում չի խրախուսվում աշխատանքի իրավունքի սահմանափակմանն ուղղված կանանց անհնազանդությունը՝ մեկնաբանելով դա կնոջ

որպես մոր, երեխաներ դաստիարակողի հասարակական դերից բխող *արտոնություն*, քանի որ տնային աշխատանքի անխոս պարտավորության բեռի տակ այլ՝ հանրային աշխատանքը համարվում է կնոջ համար լրացուցիչ հոգս: Կնոջ ենթակայական դերի ընդունման պայմաններում կանանց համար նախընտրելի է դառնում լինել ընտանիքի կողմից ֆինանսապես ապահովված և զբաղվել տնային աշխատանքով, քան հանրային աշխատանքով: Նկատելի է, որ տնտեսական անապահովության և լարվածության պայմաններում, նույնիսկ աշխատող և տնտեսապես ինքնուրույն կանայք մտածում են ընտանիքի կողմից տնտեսական ապահովվածության դեպքում չաշխատելու արտոնության մասին: Այստեղ նկատում ենք, որ երկրի անբարեկեցության և պետության սոցիալական պաշտպանության անընդունակությունը բարձրացնում է «ապահովող» տղամարդու կամ ընտանիքի հանրային նշանակությունը և կանանց ստիպում տատանվել տնտեսական պաշտպանվածության և ինքուրույնության ձգտումի միջև:

- *Իհարկե աշխատանքն է բերում այդ բարօրությանը. այսօր և՛ հավաքարար ես աշխատում, և՛ ամեն ինչ էլ անում ես հանուն քո ընտանիքի, բայց տղամարդկանց չմղենք երկրորդ պլան՝ միայն աշխատանքի գնալու համար: Ընդհակառակը, եթե ընտանիքը կոպիտ ձևով պարտադրում է կամ պահանջում է, չի թողնում հարսն աշխատի, թող հարսին ապահովեն, հարսն էլ չաշխատի:* **ք. Արմավիր, ամուսնալուծված կին**

Մարզերում (հատկապես Երևանից հեռու գտնվող մարզերում) կանայք բախվում են կրթությունը կամ աշխատանքը մայրաքաղաքում, ինչպես նաև արտերկրում շարունակելու խնդրի հետ: Դուստրերը հնարավորություն չեն ունենում ընտրել իրենց համար նախընտրելի կրթության կամ աշխատանքի տարբերակը, մինչև որոշակի տարիք կամ մինչև ծնողներին համոզելը: Որոշ ժամանակ սպասելը և ծնողական ընտանիքի հետ համոզման աշխատանքը, թեև երբեմն ուշացած, սակայն սովորաբար դրական արդյունք է տալիս:

- *Ճիշտ է, մամայիս հետ լուրջ խոսակցություն չեմ ունեցել՝ երկրից դուրս գնալ սովորելու հետ կապված, բայց ինձ թվում է վախենում են, որովհետև փոքր եմ: Դրսում մենակ… կամ կարող է մտածում են, որ ես բավարար հասուն չեմ, կարող է վատ շրջապատ ընկնեմ: Համենայնդեպս տանն ինձ չթողեցին, որ երկրից դուրս գամ, սովորեմ: Ես նորմալ եմ նայում դրան, ես պատրաստվում եմ ավարտեմ, աշխատեմ ու դրանից հետո միևնույն է գնամ այդ ժամանակ ավելի մեծ կլինեմ ու հաստատ….* **գ. Մրգանուշ, չամուսնացած կին**

Եթե նախկինում կանայք ավելի հեշտ էին համակերպվում աշխատանքին վերաբերող սահմանափակումներին, այժմ փորձում են պայքարել կամ որոշակի մեխանիզմներ գտնել իրավիճակից դուրս գալու համար (օրինակ, ծանոթացնել ամուսնուն աշխատանքային միջավայրի, աշխատակիցների հետ՝ ամուսնու *«խանդը»* չեզոքացնելու նպատակով):

Կրթություն ստանալու և աշխատելու սահմանափակումները նվազման միտում ունեն՝ պայմանավորված ընտանիքների սոցիալ-տնտեսական կարիքներով. նույնիսկ հաճախ նախընտրելի է համարվում ավելի կիրթ ու աշխատանք ունեցող կանանց հետ

ամուսնությունը: Չամուսնացած երիտասարդ կանայք, հատկապես մարզերից Երևան տեղափոխված և կրթություն ստացող, էապես կարևորում են սեփական աշխատանքն ունենալու հարցը: Մայրաքաղաքաբնակ որոշ կանայք առհասարակ համարում են, որ նման սահմանափակումներն անցյալում են, միաժամանակ աշխատանքի սահմանափակմանը բախված կանանց օրինակները շարունակում են գոյություն ունենալ:

- *Հիմա ոչ մեկ այնպիսի աղջկա չի տանում, որ նստի տանը՝ փչեն-դնեն, էնքան որ տան գործ անի. տենց բան չկա: Հիմա բոլորն այնպիսի աղջկա են տանում, որ արդեն նույնիսկ աշխատանքի ընդունված լինի:* **Ք. Երևան, ամուսնացած կին**
- *Օրինակ, ես դեպք գիտեմ, երբ ասում էին աշխատող, կրթված աղջկա տեղ գիտե՞ք, որ ամուսնանանք: Նաև սոցիալական պայմաններն էլ են նպաստում, որ եթե աղջիկը չաշխատի, մենակ ամուսնու աշխատանքով չի լինի:* **Ք. Գյումրի, ամուսնացած կին**

Սոցիալական շփման սահմանափակումներ

Կանանց հանդեպ կիրառվող սահմանափակման մյուս տարածված ձևը նրանց ազատ շփման սահմանափակումն է: Թե՛ ծնողական, թե՛ արդեն ամուսնական ընտանիքներում (վերջինում ավելի հաճախ) կանայք պետք է հստակ ընտրված շրջապատի հետ շփվեն: Ծնողական ընտանիքներում շրջապատի հետ դուստրերի շփման սահմանափակումը շատ հաճախ որպես բացասական երևույթ կամ բռնության ձև չի դիտարկվում: Դա հիմնավորվում է իբրև ծնողների կողմից իրենց հանդեպ հոգատարության ու սրտացավության դրսևորում:

- *Գիտեք՝ կամքին հակառակ չէ, բայց մեծ մասամբ այն էր, որ իմ ընտանիքում, եթե հայրս ասում էր, ուրեմն դա ճիշտ էր, և նա ինձ համար լավն էր ցանկանում: Եվ նա ավելի շատ բան գիտի, քան ես՝ այն էլ 18 տարեկան աղջիկ լինելով:* **Ք. Երևան, ամուսնալուծված կին**

Շրջապատի հետ շփման սահմանափակումներին չհնազանդվելը շատ դեպքերում կարող է բռնության կիրառման լուրջ առիթ հանդիսանալ: Նման դեպքերը հետազոտության արդյունքում նկատվեցին ոչ միայն մարզային բնակավայրերում, այլ նաև մայրաքաղաքում:

- *Օրինակ, ես կարող եմ պարզ ասել՝ եթե ես մամայիս չեմ լսում և իմն եմ առաջ տանում, օրինակ, նա ասում է այսինչ ընկերուհու հետ չշփվեմ, դուրս չգամ, եթե ես հակառակը՝ դուրս գամ՝ ծեծ եմ ուտելու:* **Ք. Երևան, չամուսնացած կին**

Ամուսնանալուց հետո շրջապատի հետ շփման սահմանափակումները ընդլայնվում և առավել նկատելի են դառնում: Այս դեպքում կինն արդեն ձեռք է բերում սոցիալական նոր նշանակալի դերեր (կին, մայր), և շփման շրջանակները բխում են հենց այդ դերերից:

- *«Չգնա՛ս խանութ, ես կառնեմ, չգանգե՛ս մամայիդ, ես տուն կգամ՝ հետո կգանգես, ընկերուհուդ հետ չզրուցե՛ս՝ ես երեկոյան տունը կլինեմ իմ*

ներկայությամբ կզրուցես»,- և նման հարցեր, համարյա 6 տարի: **բ. Վանաձոր, ամուսնալուծված կին**

Շատ դեպքերում կանայք տարիներ շարունակ փաստացի ապրում են տնային կալանքի պայմաններում՝ զրկվելով սոցիալական շփումներից, այդ թվում իրենց հարազատների հետ՝ *«խանդի»* կամ էլ ամուսնու արժանապատվության ոտնահարման *«սխալի»* պատճառաբանությամբ:

- *Ես դեպք գիտեմ, որ ամուսինը կնոջը գյուղապետի ընտրության ժամանակ ասել էր ում ընտրի, կինն էլ ընտրեց հոր ուզած թեկնածուին: Ամուսինը արգելեց կնոջը շփվել ծնողների հետ, տանից դուրս գալ, դրսում լվացք փռել, երեխաներին դպրոց տանել, առ այսօր, արդեն հինգ տարի է:* **գ. Մրգանուշ, ամուսնացած կին**

Առանձին դեպքեր

Բացի վերոնշյալ հիմնական տեսակներից մեզ հանդիպեցին մի քանի դեպքեր, որոնցում նկատելի էին բռնության առանձնահատուկ շղթաներ: Այս դեպքերը բավարար չեն ընդհանրացված պատկերացում կազմելու համար, սակայն առիթ են շոշափելու խնդիրը՝ հետագա հնարավոր ուսումնասիրության պահանջով:

1. **Դավաճանություն և ամուսնալուծություն**

Այսպես, կանայք երբեմն որպես բռնության առանձին ձևեր են նշում ամուսինների կողմից դավաճանությունը կամ կնոջը լքելը՝ ամուսնալուծվելը կամ ամուսնալուծությանը դրդելը: Նկատում ենք, որ այն պայմաններում, երբ կինը չունի իր և ամուսնու հարաբերությունների վրա ազդեցության լծակներ, ամուսինն է ընկալվում իբրև որոշումներ ընդունող միանձնյա սուբյեկտ, հետևաբար՝ հարաբերությունների միակ պատասխանատուն: Արդյունքում դավաճանության դեպքում կնոջը մնում է հարմարվել եղած դրությանը կամ ամուսնալուծվել:

Ամուսնու կողմից լքվածությունը ևս բռնության տարատեսակ է համարվում, հատկապես այն պայմաններում, երբ կինը (սովորաբար նաև լքված երեխան) տնտեսական լուրջ խնդիրների առաջ են կանգնում: Ամուսնական ընտանիքի սրբազան անխախտությունը այս դեպքում որոշ կանանց համար ցանկալի է դիտվում՝ համարելով, որ դա կպաշտպաներ կնոջը: Սակայն մյուս կողմից աննկատ է մնում այն, որ ընտանիքի սրբազանությունը և ամուսնալուծության մշակութային սահմանափակումը, որը տարածվում է նաև տղամարդկանց նկատմամբ, ինքնին կարող է հանգեցնել բռնության պրակտիկաների առաջացմանը: Տղամարդիկ, չունենալով բաժանվելու մշակութային իրավասություն, միաժամանակ ունենալով ընտանիքում վերադաս իշխանության լեգիտիմություն, դիմում են կանանց հանդեպ շարունակական բռնարարքների՝ երբեմն դրա միջոցով կանանց ստիպելով թողնել ընտանիքը. այդպես տղամարդը չի վերցնում

ամուսնալուծվելու պատասխանատվությունը, իսկ կինը ամուսնալուծվելու համար ունենում է հանրայնորեն ընդունելի «հիմնավորված պատճառ»:

2. Աղջիկ զավակից ազատվելու դեպքեր

Մեզ հանդիպել են նաև գենդերային հիմքով սելեկտիվ աբորտի դրդման կամ նույնիսկ ֆիզիկական բռնության միջոցով աբորտը կազմակերպելու մասին լսած պատմություններ:

- *Վերջերս պատմում էին, որ մի հղի կնոջ երեխայի սեռը աղջիկ էր եղել ու այդպես որոշել էին, որ իրեն պետք է այնքան ծեծեն, որ այդ կինը արհեստական վիժի, ու հարևանությունը մի կերպ այս կնոջը փրկել էին ու համապատասխան մարմիններին դիմելով հազիվ դուրս էին հանել այդ աղջկան երկրից:* **գ. Մրգանուշ, ամուսնացած կին**

Կանանցից շատերի համար ընդունելի է հայրիշխան հասարակությանը բնորոշ տղա երեխայի՝ որպես ընտանիքի շարունակողի հանդեպ հատուկ սպասելիքները և ամուսնու ու նրա ծնողների կողմից տղա ունենալու պարտադիր պահանջը: Հետևաբար կանայք հաճախ իրենք են նախաձեռնում սպասվող երկրորդ կամ երրորդ աղջկա աբորտը՝ նախապես կանխելով ամուսնու կամ ընտանքի կողմից սպասվող ճնշումները:

- *Իմ ընտանիքը հաշվել էին, բոլորով վստահ էին, որ ես երրորդը տղա եմ ունենալու, ես էլ ուրախ-ուրախ գնացի սեռը նայելու, պարզվեց աղջիկ է, մյուս երկուսն էլ էին աղջիկ: Ես հենց նույն պահին ասեցի՝ հեռացնում եմ այս աղջկաս, գնացի բժիշկների հետ պայմանավորվեցի: …. Իմ ազատ կամքով, ամուսինս զանգեց ասեց՝ ի՞նչ է, ասեցի. «Աղջիկ է,ես հիվանդանոցից դուրս չեմ գա, մինչև չհանեմ»: Ամուսինս ասեց. «Իջի, նստի մեքենան, տուն ենք գնում»,- սկեսուրս ասեց. «Աստված էլ իջնի դու էդ աղջկան պիտի ունենաս»,- սկեսրայրս ասեց. «Պիտի ունենաս»: Ես տղայի համար էի պայքարում… Ես տղա երեխա շատ էի սիրում, ամուսինս էլ միակ տղան է, ու ես էլ այլևս չեմ կարող տղա ունենամ, էլ չի թույլատրվում: Սկեսրայրս ասեց. «Մեզ տղա պետք չի, դու առողջ եղի, քո երեխեքի գլխին եղի, Աստված հիմա քեզ դա է տվել, դու մոռացի, որ պիտի գնաս հեռացնես, այդ աղջիկը պիտի ծնվի»: Շատ դժվարություններով ունեցա, բայց, փառք Աստծո, աղջիկս ծնվեց, ու ես այսօր շատ երջանիկ եմ:* **գ. Մրգանուշ, ամուսնացած կին**

Մեզ հայտնի դարձավ նաև երկրորդ աղջկան ամուսնու անզավակ հարազատներին հանձնելու մի պատմություն, որ կրկին թելադրված էր պարտադիր տղա ունենալու ցանկությամբ: Այս դեպքում դեր էր ունեցել մոր համաձայնությունը, սակայն դժվար է գնահատել որոշման մեջ մոր իրական ցանկությունը, քանի որ այն կրկին կարող էր պայմանավորված լինել ամուսնու և նրա ընտանիքի ուղղորդումով:

Այսպիսի դեպքերը ամենալռեցվածների շարքում են և ընդհանրացումներ կատարելու համար կպահանջվեր առանձին ֆոկուսավորումով հետազոտել խնդիրը և ոչ թե հիմնվել բացահայտված մեկ կամ երկու պատմության վրա:

***

Վերոնշյալ բոլոր օրինակներում հստակորեն նկատում ենք Հայաստանի հասարակության խորացող անհավասարություններն ու շերտավորումը և կանանց կյանքի վրա դրա թողած դրամատիկ ազդեցությունը: Կանանց խոսքերով *«կարգերի փոփոխությունը»,* որ միաժամանակ առնչվում է և՛ տնտեսական կարգերին, և՛ սոցիալական հարաբերությունների կառուցվածքներին, հանգեցրել է կանանց կյանքի պայմանների փոփոխության, որտեղ կանայք կա՛մ անհրաժեշտաբար պետք է ձեռք բերեն տնտեսական, և սոցիալական ինքնուրույնություն, կա՛մ ստիպված լինեն իրենց տնտեսապես ապահովող ամուսիններից ու ընտանիքներից էլ ավելի կախյալության մեջ հայտնվել՝ դրանից բխող ռիսկերով, շատ դեպքերում նույնիսկ խիստ վերահսկվող և սահմանափակումների մեջ հայտված, իսկ ծայրահեղ դեպքերում նաև պարբերական ֆիզիկական բռնություններով կյանքին հարմարվելով:

3. Ընտանեկան բռնությանը դեմ հանդիման

Բռնարարի և զոհի ըմբռնման եղանակները

1. Տղամարդու անմեղ(սունակ)ության լայն համատեքստը

Ընտանեկան բռնության դեպքերի մասին խոսելիս կանայք դժվարանում են առանձնացնել ինչպես բռնությունը, այնպես էլ բռնարարին: Ընտանիքի անդամների վարքի նման գնահատականը, հարազատին բռնարարի հետ նույնացնելը, ինչպես նաև սեփական անձը զոհի դերում տեսնելը բարդ, բազմափուլ գործընթաց է, ինչը կանայք որպես կանոն դժվարությամբ են անցնում: Դրա փոխարեն բռնության դեպքերը նկարագրվում են ընտանեկան սոցիալ-դերային և դրանց համարժեք համարվող իշխանական հարաբերությունների համատեքստում (*«ամուսին (մարդ), կին, սկեսուր, սկեսրայր, տագր, տալ, զոքանչ»* և այլն): Բացի որոշ երիտասարդ կանանցից, մեծ հաշվով մյուս բոլորի համար ընտանիքի անդամների միջև անհավասար հայրիշխանական հարաբերությունները համարվում են ողջախոհ և սովորական՝ տղամարդուն ամուսնական հարաբերություններում արտոնելով ավելի մեծ իշխանություն: Հիմնական բանավեճի հարցը, հետևաբար, այդ իշխանության չարաշահումն է, ինչպես նաև տղամարդու ծնողներին ու հարազատներին տրվող իշխանության չափաբաժինը: Կախված իշխանության ասիմետրիայի ընդունելի չափից՝ ունենում ենք բռնության և բռնարարի առանձնացումն ու սահամանումը: Որպես բռնարարներ հիմնականում նշվում են ամուսինները, երկրորդ հերթին սկեսուրները և հետո միայն տագրը, տալը կամ ամուսնու այլ հարազատները:

Հետազոտությանը մասնակից կանայք բռնություն գործադրող տղամարդկանց վարքի երեք հիմնական խումբ, թեև փոխկապված, գործոններ են նշում: Առաջինը սոցիալ-մշակութային համատեքստն է, ըստ որի տղամարդու մասկուլինության և ուժի ցուցադրականությունը մշակութային պահանջ է, որի հիման վրա էլ Հայաստանի տղամարդիկ առավել *«բռի»* և *«կոպիտ»* են: Տղամարդը, իր վրա առկա սոցիալական միջավայրի՝ ծնողական ընտանիքի, շրջապատի ազդեցությունից ելնելով, փորձում է հաստատել կնոջ հանդեպ իր արտոնյալ վերադաս դիրքը՝ վերջինիս հանդեպ բռնություն և սահմանափակումներ կիրառելով:

- *Ինձ թվում է պատճառն այն է, որ հայ տղամարդը, այսպես ասած, որսորդ է: Ինքն է ուզում իր տան համար գումար բերի և իր խոսքը վճռական լինի, ինքը բռունցքը դնի սեղանին, իր մենաշնորհը լինի: Ասում է. «Քո փողը պետք չէ ինձ, դու մի աշխատի, երախաներին պահի, նստի տունը, ես ամեն ինչ կանեմ»:* **գ. Մրգանուշ, ամուսնալուծված կին**

Երկրորդ գործոնը կապվում է *«չկայացած, ինքնահաստատման խնդիր ունեցող, թույլ»* համարվող տղամարդկանց հետ, ովքեր սոցիալական միջավայրի կամ էլ սոցիալ-տնտեսական պատճառներով ինքնահաստատման հոգեբանական պահանջ են զգում: Այդ դեպքերում բռնարար տղամարդու համար բռնությունը և սահմանափակումները գործիք են ծառայում կնոջ հանդեպ նախապես իրեն արտոնված իշխանությունը կայուն պահպանելու համար: Հետևաբար, որպես կանոն, խնդրականացվում է ոչ թե ինքնին ամուսինների միջև անհավասարությունը, այլ այդ անհավասար իշխանությանը հասնելու և պահպանելու անհիմն բռնի մեթոդները, որով բռնարարը կնոջը կախյալության մեջ է պահում:

- *Պատճառն այն է, որ իրենք դրսում տեսնում են կայացած հասուն կանանց, ում բոլորն են սիրում ու դրա համար իրենք մտածում են, որ եթե իրենց կանայք աշխատեն կդառնան սիրված: Դրա համար իրենք ուզում են, որ իրենց կանայք լինեն կայացած խելացի, բայց վախենում են, որովհետև իրենց ինքնագնահատականը ավելի ցածր է:* **գ. Մրգանուշ, չամուսնացած կին**

Բացի դրանից, նշվում են նաև բռնարար տղամարդկանց *«ալկոհոլից կախվածության»* պատճառը և *«հոգեկան խնդիրների»* կամ *«հոգեկան անհավասարակշռության»* մասին կասկածները:

- *Եթե տարիների ընթացքում այդ խանդն անցնի, հարմարվի, այդ դեպքում կարելի է, բայց եթե կյանքի ցուցում կա քո կամ երեխաների կյանքի հետ կապված, իհարկե փախչել է պետք: Միգուցե շիզոֆրենիայով հիվանդի հետ գործ ունես: Հասարակության մեջ, ես չգիտեմ՝ տղամարդկանց քանի՞ տոկոսն են նորմալ, այնքան շիզոֆրենիայով հիվանդներ կան, որ նույնիսկ պաշտոններ են զբաղեցնում, մենք ի՞նչ գիտենք, մենք մասնագետ չենք, գուցե միայն տանն է դրսևորվում, այդ նույն տղամարդը դրսում կարող է գեղեցիկ հագուկապ, տեսք ունենա, բայց տանը բռնապետ լինի:* **ք. Աշտարակ, ամուսնալուծված կին**

Ըստ ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի՝ 2014-ից մինչև 2016թ. սեպտեմբեր քննությունն ավարտված գործերով և նյութերով անցնող ընտանեկան հողի վրա կատարված հանցագործություններում կանանց հանդեպ բռնության դեպքերի ծանրակշիռ մասն (շուրջ 60% և ավելին) իրականացվում է ամուսինների կողմից իրենց կանանց նկատմամբ (Պատկեր 1)։



Պատկեր 1. Քր. գործերով և նյութերով անցնող ընտանեկան հողի վրա կատարված հանցագործություններ

2011-ին ԵԱՀԿ կողմից պատվիրված ընտանեկան բռնության վերաբերյալ հասարակական կարծիքի ուսումնասիրության հարցվողներից նրանք, ովքեր վերջին 2 տարվա ընթացքում բռնության ենթարկվելու փորձ են ունեցել, որպես իրենց նկատմամբ բռնություն իրականացրած անձ հիմնականում (61.4%) նշում են ամուսնու սոցիալական կարգավիճակն ունեցող տղամարդուն (Պատկեր 2)։



Պատկեր 2. Բռնության ենթարկողը

Նկատում ենք, որ բռնարար տղամարդու վարքը քննելիս այն դիտարկվում է իր պատճառագործոնային համատեքստում և եթե անգամ անձին առնչվող՝ հոգեբանական կամ հոգեկան բնութագրիչներ են նշվում, ապա դրանք միևնույն է տղամարդուն դնում են անձնային պատասխանատվության դաշտից դուրս՝ կարծես բռնարարին սոցիալ-մշակութային, տնտեսական, հոգեկան գործոնների հիմքով դարձնելով «անմեղ(սունակ)»: Այսպիսով տղամարդ ամուսնու կողմից կնոջ հանդեպ բռնությունը, չլինելով հանդերձ «*արդարացված*» դառնում է «*հասկանալի*»:

- *Արդարացված չէ, բայց հասկանալի է:* **գ. Մրգանուշ, չամուսնացած կին**

Ընդարձակ ընտանիքներում, երբ ճնշումների կամ բռնության անմիջական ենթարկողը ամուսինը չէ, այլ նրա հարազատները, բռնությունն ավելի հեշտ է ճանաչվում իբրև իշխանություն հաստատելու ձև, ավելի ոչ լեգիտիմ է համարվում և ավելի միանշանակ քննադատվում: Չնայած, որ ֆոկուս խմբերի ընթացքում քննարկվեցին հանրային արձագանք ստացած դեպքեր, երբ սկեսուրը ֆիզիկական բռնություն էր գործադրել կամ կազմակերպել (սկեսուրի քարով ծեծից հարսը մահացել էր, սկեսուրն ու ամուսինը ծեծել էին արդուկով՝ հարսը մահացել էր)՝ հետազոտությանը մասնակից կանայք համարում են, որ ամուսինների ծնողների կողմից ավելի հաճախ տարածված է *հոգեբանական բռնության գործադրումը՝ կոնֆլիկտային իրավիճակների ստեղծումը, կենցաղային, երեխաների դաստիարակությանն առնչվող հարցերում միջամտությունները*:

Ամուսնու հարազատների կողմից ճնշումները և միջամտությունները տանելի են համարվում, երբ ամուսինը համագործակցում է կնոջ հետ, օգնում նրան բռնության շրջանցման եղանակներ գտնել և հակառակը՝ ամուսնու չեզոքությունը կամ ծնողներին աջակցելը կնոջ համար դառնում է լուրջ մարտարավեր:

- *Իմ ժամանակ ես երեք փուլ եմ անցել՝ տալիս, սկեսրարիս, ամուսնուս: Տալ եմ ունեցել ամուսնացած բաժանված ու մամայիս տարիքին, շատ դժվար է եղել, շատ դժվար եմ ապրել մինչև իր 60 քանի տարեկանը, նոր առանձնացել եմ:* **ք. Գյումրի, ամուսնացած կին**

Հատկանշական է, սակայն, որ սկեսուրի դերում կամ այդ դերին սպասող կանայք միջամտությունները և ուղղորդումները մեկնաբանում են իբրև անհրաժեշտ և սովորական հոգատարություն: Այսպիսի մեկնաբանության ենք հանդիպում նաև երիտասարդ հարսների կողմից, ովքեր իրենց երեխաների խնամքի հարցում ունեն սկեսուրների սպասված աջակցության կարիքը:

- *Իմ երեխան ծնվել է սկեսուրենցս տանը, ես եղել եմ ընդամենը 21 տարեկան ու ընդհանրապես չեմ իմացել երեխա պահել: Եթե իմ սկեսուրը այդ հարցում ինձ չօգներ, ես կգժվեի:* **գ. Արմավիր, ամուսնացած կին**

Բոլոր այն դեպքերում, երբ ստեղծված սոցիալ-տնտեսական իրադրության պայմաններում երիտասարդ ընտանիքներում պակասում է սկեսուրի և սկեսրոջ սոցիալական դերերի կարիքը, առաջանում է այդ դերերի սիմվոլիկ ուժի պահպանման համար մղվող պայքար կամ լարումներ: Այդպես ամուսնու ծնողների իշխանության նվազման, հարսների

ազատականացման և զույգերի ինքնուրույնացման նկատելի միտումը որոշ կանանց համար դիտարկվում է որպես խնդիր՝ դրանում ամուսնու ու իր ծնողների միջև հարաբերությունների խզում տեսնելով:

- *Ես, օրինակ, ընտանիք գիտեմ, որ նույն տան մեջ ինքը մի սենյակում առանձին է ապրում ամուսնու ու երեխաների հետ, մյուս երկու սենյակներում սկեսուր, սկեսրայրն են ապրում: Սկեսուր, սկեսրայրը երեխայի դեմքը տեսած չկան չորս տարվա մեջ, ու ինքը մասնագիտությամբ հոգեբան է աշխատում:* **ք. Գյումրի, ամուսնացած կին**
- *Հարևանի հարսն ու ամուսինը եղբոր ու նրա կնոջ հետ գնացել էին Սևան, սկեսուրին չէին ասել, հենց սկեսուրն իմացել էր դուրս էին եկել լուսամուտի տակ աղջկա հետ նստել, ինչ ասես ասում էին, որ տղեն չէր ասել, հարսն էլ ձեն չէր հանել:* **ք. Գյումրի, ամուսնալուծված կին**

2. Բռնությանը ենթարկված կնոջ «մեղքը»

Զոհին մեղադրելը (victim blaming) տարածված պրակտիկա է անհավասար իշխանության և ուժի արդարացման հայրիշխանական սոցիալական կառուցվածքներում, ինչը տեսանելի դարձավ նաև մեր հետազոտության ընթացքում: Այն դեպքում, երբ բռնարար տղամարդու վարքը մեկնաբանվում է լայն պատճառական համատեքստում, կնոջ զոհականությունը ըմբռնման նույն խորությանը չի արժանանում:

Թեև մեծ հաշվով հետազոտությանը մասնակից կանայք չեն արդարացնում բռնությունը՝ միևնույն է տեսնում ենք զոհի մեղադրման հաճախ հանդիպող մոտեցումը: Այսպես նկատում ենք բռնությանը զոհ դառնալու հարցում կնոջ հանդեպ պատասխանատվության լուրջ պահանջի ներկայացումը, սակայն երկու տարբերվող և իրար հակառակ եղանակներով՝ բռնությանը *«հասցնելու»* և բռնությունը *«թույլ տալու»*:

Բռնությանը *«հասցնելու»* մեղադրանքի հիմքում ընկած է կնոջ ստորադասության լիարժեք ընդունումը և ընտանեկան բռնության խնդրի մասնավորեցված պատկերացումը և ոչ թե դրա սոցիալական ըմբռնումը: Ըստ այդմ՝ ամեն կոնկրետ կին ինքն է մեղավոր կոնկրետ դեպքում *«սխալներ»* թույլ տալու պատճառով բռնության ենթարկվելու համար: Այսպիսի մոտեցումը հատկապես բնորոշ է միջին և ավագ սերնդի (մասնավորապես արդեն սկեսուրի դերում գտնվող, կամ դրա սպասելիքով) կանանց շրջանում:

- *Ես դեպքի եմ ականատես եղել, որ այդ կինը լռեր, ամեն ինչ հանգիստ էր ավարտվելու, բայց այնքան խոսեց, որ ես էլ զարյացա, ասեցի հիմա մի ապտակ էլ ես կտամ, լռի՛ր:* **ք. Արմավիր, ամուսնացած կին**
- *Ամուսինը չի աշխատում, աշխատանք չկա՝ իրան պատեպատ է խփում չի գտնում. հիմա այս է մեր Հայաստանի վիճակը: Գալիս է, այնպիսի կին է ունենում, որ չի հասկանում ամուսնու վիճակը. «Ինձ սա է պետք, ինձ հետաքրքիր չէ, գնա ճարի, ինչ ուզում ես արա»: Ամուսնու համբերությունն էլ դուրս է գալիս ու հարվածում է, հանգստանալու համար: Դա է:* **ք. Երևան, ամուսնացած կին**

Հատկանշական է, որ նույնիսկ ֆոկուս խմբի ընթացքում ներկայացված կոնկրետ և «անհիմն» դաժան բռնությունների դեպքերի մասին տեղեկատվությունը չի հանգեցնում ավագ սերնդի հաստատակամ կանանց այսպիսի արմատացած վերաբերմունքի փոփոխությանը. «անհիմն» բռնության դեպքերը նրանք դիտարկում են իբրև *«բացառություններ»*:

Դրա փոխարեն երիտասարդ կանայք ավելի են հակված խնդրականացնել իրենց գիտելիքը՝ նոր տեղեկատվության հիման վրա փոփոխել բռնության, բռնարարի և զոհի մասին իրենց սեփական պատկերացումները: Այսպես, ֆոկուս խմբի ընթացքում երիտասարդ կանանցից մեկը, ով սկզբում իր ընտանիքում հանդիպած սահմանափակումները և իր վարքի հանդեպ վերահսկողությունը պատմում էր իբրև սովորական իրողություն, հանդիպման վերջում այլոց պատմություններին և վերաբերմունքներին ծանոթանալով նկատեց. *«Փաստորեն բռնություն ամեն քայլափոխին էլ կա, ամե՛ն քայլափոխին, տարբեր ոլորտներում, տարբեր տեսակներով»*:

Եթե բռնությանը հասցնելու դեպքերում կնոջ մեղքը համարվում է իր անհատական բնավորությունը՝ *«լաչառությունը»*, *«էգոիզմը»*, *«խելացի», «զուսպ»* չլինելը, ամուսնու հանդեպ չհիմնավորված տնտեսական կամ այլ *«պահանջները»,* ամուսնուն *«հունից հանելը», «առիթ տալը»*, *«սխալ»* վարքը, ապա բռնությունը *«թույլ տալու»* հարցում առկա է երկու ենթաշերտ: Առաջինով կրկին կնոջ բնավորությանն ու հմտություններին է հանգեցվում սեփական անձի հանդեպ բռնությունը *«թույլ տալը»*՝ սկսած անհամապատասխան՝ բռնարար ամուսին ընտրելուց մինչև բռնությունից պաշտպանվելու անկարողությունն ու բռնությունը հանդուրժելը կամ նույնիսկ նախընտրելը:

- *Եկեք հաշվի առնենք, որ 16, 17 տարեկան լիքը աղջիկներ կան, որ ամուսնանում են, ու շատ մարդիկ կան որ սովոր չեն, որ ինքնուրույն որոշումներ կայացնեն ու առհասարակ մտածեն: …. Ճիշտ է՝ ոչ մեկ չի խոստովանի, թե սիրում է, որ իրեն կառավարեն, բայց մարդիկ կան, որ իրենք սիրում են ուրիշից կախվածության մեջ լինեն: Չեմ ասում, որ դա ուղիղ կասեն, բայց կան մարդիկ, որ սիրում են, որ իրանց դոմինանտ լինի մեկը, որ սիրում են կոնտրոլ իրենց կյանքի վրա, որովհետև ինքը վախենում է պատասխանատվությունից ու իր սեփական որոշումներն իր համար վախենալու են:* **գ. Մրգանուշ, չամուսնացած կին**

Երկրորդով, սակայն, բռնությունը *«թույլ տալը»* և դա կանխելու անկարողությունը կապակցվում է կնոջ առկա սոցիալական կապիտալի հետ՝ *կենսափորձի, կրթության, աշխատանքի, բացատրելու-բանակցելու հմտությունների բացակայության, աջակցող ընտանիք չունենալու, սեփական իրավունքները չիմանալու* և այլ հանգամանքների հետ: Սոցիալական կապերը, հեղինակավոր ընտանիքը և միջավայրը շատ դեպքերում կնոջ համար միջոց են հանդիսանում կանխելու կամ թույլ չտալու բռնության դեպքերի զարգացումը: Համարվում է, որ կինը պետք է կարողանա իր դիրքը հաստատել, պետք է թույլ չտա իր հանդեպ ճնշման գործադրումը, նախապես այդ իրավիճակից դուրս գալու փորձեր կատարի: Այսպիսի դիրքորոշումները պատկանում են հատկապես երիտասարդ չամուսնացած կանանց, ովքեր շատ ավելի պահանջկոտ են և մեծ

պատասխանատվություն են դնում իրենց հանդեպ բռնություն *«թույլ տված»* կանանց ուսերին: Այսպիսի մոտեցումը մի կողմից ունի կնոջը որպես սուբյեկտ դիտարկող ազատագրական տեսանկյուն, սակայն մյուս կողմից՝ հաշվի չի առնում կանանց գործորդ և որոշում կայացնող դառնալու նախնական անբավարար պայմանները ու կրկին թիրախում է դնում բռնության ենթարկվածին:

3. Կնոջ գործորդության ըմբռնումն իբրև տղամարդու հանդեպ բռնություն

Կնոջ՝ իբրև բռնության ենթարկվածի մասին խոսակցությունը երբեմն արժանանում է հակադարձող վերաբերմունքի և առաջ բերում տղամարդու զոհականության դեպքերի քննարկման անհրաժեշտությանը: Կնոջ գործորդության անսպասելիությունը հաճախ հանգեցնում է նրա վարքի դատապարտմանը, մինչև անգամ իբրև բռնարարի ընկալմանը: Այսպես, կնոջ կողմից իր կյանքին առնչվող հարցերում ակտիվ որոշումներ կայացնելը (սկսած գումարի տնօրինումից մինչև սեփական երեխան ունենալու կամ չունենալու որոշում կայացնելը)՝ հակառակ իր ընտանեկան և սեռատարիքային սոցիալական կարգավիճակի ակնկալիքներին, կարող է մեկնաբանվել իբրև սեփական ցանկությունների պարտադրանք:

- *Երբեմն կինն էլ ա ամուսնուն խփում:* **գ. Մրգանուշ, ամուսնացած կին**
- *Ամուսինը կնոջը խնդրում է, ասում է մայրս մեռնող հիվանդ է, թոռ է ուզում տեսնի, արի երեխա ունենանք, կինը ասում է, դու չպետք է ինձ ասես, երբ ուզեմ այդ ժամանակ էլ կունենամ:* **ք. Գյումրի, ամուսնալուծված կին**

Ընտանիքը «մութ անկյուն». լռեցման և բարձրաձայնման պայմաններն ու հետևանքները

Կանայք բռնության դեպքերի մասին սովորաբար հեշտությամբ են բարձրաձայնում իրենց անմիջական սոցիալական միջավայրում՝ որպես իրենց առօրեականության մի մաս՝ հիմնականում առանց դրանց իբրև բռնության ըմբռնման և բռնարարի վարքի խնդրականացման:

Այն դեպքերում, երբ բռնությունը սահմանվում է իբրև այդպիսին, ապա կանայք առերեսվում են դրա հետ հարաբերվելու անպատրաստությանը՝ նախ և առաջ բռնության մասին բառեր գտնելու և բարձրաձայնելու իմաստով: Առհասարակ խնդիրների լռեցման տիրապետող մշակույթը հաճախ մղում է կանանց թաքցնել զուտ ընտանեկան կամ անձնական համարվող խնդիրները՝ կարևորելով ընտանիքի հեղինակության մասին շրջապատի կարծիքը: Այստեղ նկատելի է արտաքնապես, շրջապատի համար ընտանիքի դրական կերպար ստեղծելու միտումը, անկախ ընտանեկան կոնֆլիկտների առկայությունից. հասարակության մեջ դրանք տեսանելի չդարձնելը կնոջ առջև դրված մշակութային պահանջ է:

- *Մենք ապրում ենք հասարակությունում ու ինչքան էլ կապ չունենա, թե հասարակությունն ինչ է ասում, միևնույնն է այն ազդում է:* **գ. Մրգանուշ, ամուսնացած կին**

- *Ընտանիքը մի այնպիսի մութ անկյուն է, որ չգիտես՝ ի՞նչ է:* **ք. Աշտարակ, ամուսնացած կին**

Երբ կինը օգնության կարիքից որոշում է խոսել խնդրի մասին, ապա ընտանեկան գաղտնիքը առաջին հերթին ներկայացվում է նեղ շրջապատից ամենավստահելի մտերիմներին: Առաջին հերթին դիմելու ենթակա անձինք կարող են լինել հարազատների շարքից (մայր, քույր, տատիկ, երբեմն հայր), ընկերուհի կամ իմաստուն համարվող բարեկամ կին:

Մյուս կողմից կանանցից շատերը խուսափում են իրենց անմիջական հարազատներին, հատկապես մայրերին դիմել բռնության դեպքի առնչությամբ՝ կա՛մ չցանկանալով անհանգստացնել նրանց, կա՛մ վախենալով նրանց արձագանքից: Երբեմն նույնիսկ սեփական ընտանիքում բռնությունը ծնողներից թաքցնելու նպատակով կանայք խուսափում են իրենց հարազատների հետ հարաբերություններից՝ ինքնամեկուսացման արդյունքում էլ ավելի խորացնելով սեփական անպաշտպանությունը:

- *Ամեն մեկի ընտանիքում էլ խոսակցություններ եղել են, բայց այսքան տարվա հարս եմ իմ ծնողը չի իմացել, որ ես խնդիրներ ունեմ: Կարծում եմ դա ճիշտ է իմ ծնողն այսօր առողջական խնդիրներ ունի, ես էլ իմ խնդիրները չբարդեմ իր վրա, որ ինքը չնեղվի: Թող մտածի, որ ես միշտ լավ եմ: ….Դիմել եմ քուրիկիս, մոտ ընկերուհուս:* **գ. Մրգանուշ, ամուսնացած կին**
- *Ճիշտ է սկզբում լավ էր, բայց հետո ամեն ինչ փոխվեց: Անընդհատ ծեծում էր, վիրավորում, բայց ես վախենում էի մերոնց ասել ու ամեն անգամ ծեծվելուց հետո գնում էի մեր տուն տատիկիս մոտ (իր աչքերը չէին տեսնում, կապտուկներս չէր տեսնի), ինքն ինձ խորհուրդ էր տալիս. «Ոչինչ բալես: Որբ տղա է եղել, ոչ ոք խորհուրդ չի տվել»:* **ք. Գյումրի, ամուսնացած կին**

Կանայք հաճախ դիմում են հոգեբանի՝ ցանկանալով աջակցություն ստանալ, բայց իրենց հիմնական նպատակն է ոչ թե բռնության չենթարկվելը, այլ այդ բռնության տեսարանները երեխաներից թաքցնելը:

Փորձագիտական կարծիք

Շատ դեպքերում ընտանեկան բռնության դեպքերը թաքցնելը պայմանավորված է երեխաներին պաշտպանելու ձգտումով. կանայք չեն ցանկանում իրենց զավակների համար տեսանելի դարձնել ծնողների միջև կոնֆլիկտները և բռնության գործադրումը:

- *Ես հիմա աղջիկ էլ ունեմ, տղա էլ, բայց ես մտածում եմ, որ թեկուզ տանը վեճ էլ լինի երեխան ոչինչ չիմանա, չտեսնի:* **ք. Գյումրի, ամուսնացած կին**

Սեփական սոցիալական միջավայրում բռնության մասին տեղեկատվության բարձրաձայնումը, սակայն, միշտ չէ, որ օգնում է խնդիրը ձևակերպելուն և հաղթահարման ուղիներ որոնելուն: Շրջապատում մարդիկ (հատկապես մարզային բնակավայրերում և ավագ սերնդի մարդիկ) հաճախ միտված են կենտրոնանալ բռնության կոնկրետ դեպքի հետ հաշտվելու և դրա նկատմամբ կնոջ մեջ

հանդուրժողական վերաբերմունք ձևավորելու վրա, ինչպես նաև հետագա բռնությունները բացառելու նպատակով կնոջ վարքը սահմանափակելու խորհուրդներ տալիս: Արդյունքում խորհուրդները վերաբերում են կնոջ սահմանափակումների ավելացմանը և կնոջ, ոչ, թե բռնարար տղամարդու գործողությունների կարգավորմանը:

- *Արգելվում է մեքենա վարել՝ նա էլ թող չվարի, ի՞նչ է եղել…. Խոսակցություն լինի, կռի՞վ անի: Մեկ-երկու անգամ, երրորդ անգամ արդեն ընտանիքում բաժանումի կբերի, ավելի լավ է՝ հարմարվեն, լսեն ամուսնուն:* **ք. Վանաձոր, ամուսնացած կին**

Նկատելի է, որ այսպիսի դեպքերում սոցիալական միջավայրի մարդիկ ընտանեկան բռնությանն առնչվող հարցում պատրաստ չեն կամ դժկամորեն են խորհրդատուի դերում հայտնվում՝ խուսափելով ինչպես անձնական համարվող լրջագույն հարցում պատասխանատվություն վերցնել (ազդել հարաբերությունների վրա, նպաստել ամուսնալուծմանը, քանի որ ընտանեկան կյանքը կնոջ կյանքի հիմնարար մասն է կազմում), այնպես էլ տնտեսական բեռի տակ հայտնվել: Ժամանակակից պայմաններում ընտանեկան վեճերը արդյունավետ չեն կարգավորվում ներքին արբիտրի՝ տղամարդու ծնողների, «տան մեծի» կողմից կամ էլ սեփական հարազատների կողմից՝ չնայած դեռևս շատ կանայք հենց այդպիսի լուծման ակնկալիքներ են որոնում: Հաճախ կանայք բախվում են միջավայրի կողմից կամ չխառնվելու ձգտումին, կամ էլ ընդհակառակը՝ բռնարարին աջակցող դիրքին:

Բազմաթիվ են դեպքերը, երբ կնոջ ծնողական ընտանիքը առհասարակ պաշտպանողի դերում հանդես չի գալիս՝ չխրախուսելու համար կնոջ հնարավոր բաժանումը, առավել ևս վերադարձը ծնողական տուն: Այս դիրքորոշումներն ունեն ինչպես տնտեսական պատճառներ, այնպես էլ ծնողական ընտանիքը չպիտակավորելու և չխայտառակելու հիմնավորումներ:

- *Որևիցե մեկն ինձ չէր…. գիտեք ինձ ի՞նչ էին հարցնում. «Բա ինչպե՞ս ես ապրելու, ո՞վ է քեզ օգնելու»: Անգամ երբ հորաքրոջս տանն էինք մնում, ընդամենը երկու օր էինք մնացել, և իմ հորաքույրն իր ընտանիքով արդեն գիտեր, թե մենք նրանց հույսին ենք մնացել. «Ի՞նչ պետք է անես, քրոջդ ամուսինը քեզ պահի՞, եղբայր էլ չունես, որ քեզ տեր կանգնի…»:* **ք. Երևան, ամուսնալուծված կին**
- *Ինքը շատ կրթված խելացի աղջիկ է, գնալու տեղ չունի, որ բաժանվի: Իր եղբայրն էլ գեներալ լեյտենանտ է: …. Ես գիտեմ այդ մարդուն, գնաց հոր տուն, աղբերը ծեծելով հետ բերեց, ասեց ինչ էլ լինի գնա մնա….* **ք. Գյումրի, ամուսնացած կին**

Այդպես կնոջ կյանքում բռնությունը դառնում է մշտապես ուղեկցվող փակ շղթա, որ սկսվում է ճնշումներից և սահմանափակումներից ծնողական ընտանիքում, դրան հաջորդում է բռնությունների նոր փուլը ամուսնական ընտանիքում, որի արդյունքում վերադարձն է բռնության ռիսկով ծնողական ընտանիք կամ նման վերադարձի անհնարինություն: Այստեղ բացահայտվում է հակասական բացթողումներից մեկը, որ հանդիպում է ժամանակակից հայաստանյան ընտանեկան խնդիրների լուծման հարցում: Մի կողմից ընտանիքն այնքան նշանակալից է համարվում, որ անհրաժեշտ է դրա պահպանությամբ մտահոգվելով չմիջամտել ընտանեկան խնդիրներին: Մյուս կողմից կնոջը միայնակ թողնելը, անմասնակից մնալը, ինչպես և ամուսինների

հարաբերությունների կարգավորման և կնոջը պաշտպանելուն ուղղված գործուն մեխանիզմների բացակայությունը թույլ չեն տալիս տվյալ ընտանիքը պահպանելու հնարավորություններ գտնել:

Ծնողական ընտանիքի կողմից դստեր ընտանիքի ամեն գնով պահպանման ձգտումը հաճախ հասկանալի է համարվում: Միաժամանակ ըմբռնվում է դրա պատճառով ամուսնական ընտանիքում բռնության ենթարկողների առաջ կնոջ խոցելիության աճը: Բռնության ենթարկված կնոջ համար *«գնալու տեղ չունենալը»* և ծնողական ընտանիքի աջակցությունից զրկվածությունը նրան լիովին անզոր է դարձնում և հաճախ էլ ավելի խորացնում բռնարարի վնասակար սովորությունները:

- *Հայրս ի սկզբանե դեմ է եղել, որ ես ամուսնանամ այդ տղայի հետ: Հենց դա էլ իմ վախն է եղել, որ ես կարողացել եմ իմ մեջ պահել այդ ամենը: Մեր ընտանիքում դժվարություն եղավ: Իմ հայրը եկավ, ասեց հետ դարձի ճանապարհը չիմանաս ինչ է: Թույլ չտվեց: Այդ հետ դարձի ճանապարհը որ լիներ… Մի կողմից ես համարում եմ, որ դա ճիշտ է, բայց չպետք է դա սկեսուրիս մոտ ասեր, թող ինձ առանձին ասեր:* **ք. Արմավիր, ամուսնացած կին**
- *Մի անգամ պապաս ասեց. «Ընդհանրապես այս տան տեղը կմոռանաս՝ չենք թողնի այս տուն մտնես», մամաս էլ ասեց. «Իսկ ում ընտանիքում նման բան չկա՞, պետք է հանդուրժես»:* **ք. Երևան, ամուսնացած կին**

Հաճախ են հանդիպում ամենադաժան բռնությունների կիրառումները հատկապես արտերկրում ամուսնու հետ միայնակ ապրող կանանց հանդեպ, ովքեր լիովին կտրված են մնում ծնողական ընտանիքի, Հայաստանում ձևավորած իրենց սոցիալական միջավայրի կապերից:

- *Ես այդ ժամանակ Ռուսաստանում էի ապրում գրանցված չէի, ոչինչ չէի կարող անել: Եթե ինչ-որ կառույցի դիմեի, իմ վիճակն ավելի կվատանար: Դրա համար ես լուռ տարա տասը տարի՝ շատ խիստ ռեժիմային բռնության պայմաններում ապրելով:* **գ. Մրգանուշ, ամուսնալուծված կին**

Շատ դեպքերում ծնողական տուն հետդարձի ճանապարհ չունեցող ամուսնալուծված կնոջ հոգսը բազմապատկվում է, քանի որ սովորական տնտեսական խնդիրներից և երեխաների խնամքից բացի կինը ստիպված է նաև լուծել բնակավայրի վարձակալության հարցը. այս իրադրությունը հաճախ ուղեկցվում է աշխատանքային փորձառություն և հմտություններ ձեռք բերելու անհրաժեշտությամբ: Կանայք քիչ դեպքերում են հաջողում մասնագիտություն ձեռք բերել և աշխատանք գտնել, հաճախ նրանք մղվում են

Տնտեսական բռնության մասին կանայք ավելի հեշտ են բարձրաձայնում՝ դրանում մեղադրվելու վախ չունենալով, այնինչ ֆիզիկական և հոգեբանական բռնության դեպքերի մասին շատ չեն բարձրաձայնում, քանի որ կարող են զոհ լինելով մեղադրվել: Այս իմաստով ամենից լռեցվածը, որ կանայք գրեթե առհասարակ չեն քննարկում, սեռական բռնությունն է՝ որպես ամենից «ամոթալի» և խայտառակ թեմա. կանայք խստորեն խուսափում են իրենց անձի շուրջ սեռական բռնության մասին քննարկումներից:

Փորձագիտական կարծիք

ամենացածր վարձատրվող և ծանր աշխատանքային ոլորտներ, որը նրանց կյանքի որակը կարող է էլ ավելի վատթարացնել, քան իրենք կարող էին ունենալ բռնարար ամուսնական ընտանիքում:

- *Ես հիմա ապրում եմ վարձով, խանութում հավաքարար եմ աշխատում, որ իմ երեխաները կարողանան իրենց գոյությունը պահպանեն:* **ք. Աշտարակ, ամուսնալուծված կին**

Հետևաբար կնոջ տնտեսական անպաշտպանությունը և նվազ սոցիալական կապիտալը այն հիմնարար գործոններն են, որ կանանց ստիպում են լռել և հանդուրժել բռնությունը, և ստիպված լինել ամուսնալուծության դիմել արդեն միայն ծայրահեղ՝ *«կյանքի համար ցուցման»* դեպքում:

Միաժամանակ կարող ենք արձանագրել, որ բռնության ենթարկված կնոջ համար ընտանիքի կողմից աջակցությունը շատ դեպքերում բռնության հաղթահարման առաջնահերթ լավագույն, իսկ հաճախ նաև միակ հասանելի տարբերակն է հանդիսանում:

- *Եղբայրս վերցրեց ինձ ու երեխայիս ու բերեց ծնողներիս մոտ: Ինձ բերեց և ասեց. «Էլ չգնա՛ս, նա քեզ համար հաստատ նորմալ ամուսին չի դառնալու»:* **ք. Վանաձոր, ամուսնալուծված կին**
- *Ինձ իմ ծնողը չի հարցրել նույնիսկ, ես ինչի համար եմ ամուսնալուծվել և ծնողիս կողմից այդ ներման փուլը ինձ օգնել է, որ ես այսօր ներել եմ իմ ամուսնուն, իմ ամուսնու ընտանիքին:* **ք. Արմավիր, ամուսնալուծված կին**

Լռությամբ, ինչպես նաև զիջմամբ հաշտվելով ընտանիքի պահպանման ձգտումը հիմնվում է երկու իրար հակառակ պատկերացումների վրա՝ կա՛մ բռնության՝ իբրև սովորական, տարածված ուրեմն հանդուրժելի պրակտիկայի, կամ էլ բռնության՝ որպես ժամանակավոր մի բանի մասին պատկերացման վրա: Ընտանեկան հարաբերությունների ժամանակի հետ փոխվելու սպասումը հնարավոր է դարձնում բռնությունը հանդուրժելու արդարացումը: Այսպիսի դիրքորոշումը պայմանավորված է արդյունքի կարևորման կողմնորոշումով, որով ընտանիքի ամբողջականության պահպանումը գերագույն նպատակ-արդյունքն է, իսկ կնոջ (երեխաների, ընտանիքի) ապրած կյանքի ընթացքը և կյանքի որակը երկրորդական են համարվում:

- *Իմ սկեսուրը գիտե՞ք ինչ էր ասում. «Կինը այն է, որ ժամը յոթին լվացքն արդեն փռած լինի»,- եթե 7-ից հետո էի փռած լինում՝ նա պոլի փայտով սկսում էր կատաղած հատակը մաքրել, դմփ-դմփացնել: Դա նշանակում էր, որ նա կատաղության աստիճանի էր…. Կամաց-կամաց փոխվեց…. Բայց հիմա ես այնքան հանգիստ եմ: Հիմա, որ չկա սկեսուրս, մահացել է, կարող եմ սուրճի բաժակները թողնել սեղանին և տանից դուրս գալ՝ այդ րոպեին հարմար չէ՝ իմ հետևից չեմ հավաքել, գիտեմ՝ խոսացող չկա:* **ք. Վանաձոր, ամուսնացած կին**

Ոչ միայն սոցիալական միջավայրի առաջ, այլև հանրային բարձրաձայնման կարևորության մասին հեշտորեն են խոսում Երևանում բնակվող կանայք, անկախ բնակության վայրից երիտասարդ չամուսնացած կանայք, հասուն տարիքի միայնակ ապրող կանայք և բռնության դաժան փորձի հետևանքով ամուսնալուծված կանայք:

- *Դե, եթե մենք այսպես շարունակ լռենք, միշտ էլ այդպես է լինելու, պետք է ինչ-որ քայլեր ձեռնարկենք: Պետք է՝ մեկ-երկու և հետո, երբ բոլորն այդպես անեն, ինձ թվում է ամեն ինչ կփոխվի: Իսկ եթե լռենք, ասենք հարևանը այս կասի, մեկ ուրիշն այլ բան կասի կամ ով ինչ կասի՝ ոչինչ չի փոխվի: Եթե քայլեր չձեռնարկենք՝ մենք ոչինչ չենք կարող փոխել:* **ք. Աշտարակ, ամուսնալուծված կին**

Թեև ոստիկանությանը, գյուղապետին կամ այլ պետական հաստատություններին դիմելը հաճախ շարունակվում է անհարիր համարվել, սակայն զուգահեռաբար նկատում ենք ընտնեկան բռնության խնդրի մասին բարձրաձայնող կանանց վարքը քաջալերող կարծիքներ, նրանց համարձակությունը և ուժը գնահատող վերաբերմունք: Այսպիսի կանայք սկսում են բնութագրվել որպես *ուժեղ, ովքեր չեն վախենում շրջապատի արձագանքից կամ պատրաստ են դրան դիմակայելու:*

Ֆոկուս խմբի մասնակից կանայք կարծում են, որ բռնության դեպքերի հանրայնացումը կարող է կանխել տվյալ կնոջ կյանքում հետագա ավելի ծանր զարգացումները, ինչպես նաև կարող է նախադեպ հանդիսանալ բռնության դեպքերի հանրային նվազեցման համար: Ցանկացած դեպքի հանրայնացում կարող է բռնարարին ավելի զգոն ու զգույշ պահելու ուղերձ լինել:

Նկատելի է, որ բռնության ենթարկված կնոջ կողմից քայլերի նախաձեռնումը, իր դեպքի հանրայնացումը, հասարակական կազմակերպությունների աջակցությամբ իրավական կարգավորումը, սեփական անձի հոգեբանական և սոցիալական վերականգնման նախադեպային օրինակները գործնականում դրական ազդեցություն են ունենում այլ կանանց պաշտպանվածության բարձրացման վրա: Այսպիսի ազդեցությունն էլ ավելի ուժգին է հատկապես սոցիալական նեղ համայնքային կապերով բնակավայրերում՝ գյուղերում և փոքր քաղաքներում, որտեղ աչքի առաջ եղած օրինակով փակ ընտանիքներում ապրող կանայք վստահություն են ձեռք բերում, որ կկարողանան լուծել իրենց նկատմամբ կիրառվող բռնության խնդիրը, իսկ տղամարդիկ կարգավորում են սեփական վարքը՝ խուսափելով բռնության հանրայնացման հետևանքներից:

Փորձագետները նշում են, որ գյուղաբնակ և քաղաքաբնակ կանայք տարբեր կերպ են արձագանքում բռնությանը: Գյուղերում ավելի հաճախ են լռում դեպքերի մասին՝ համայնքային նեղ սոցիալական կապերի պատճառով, մինչդեռ քաղաքներում սոցիալական հարաբերությունների անդեմության պատճառով սեփական դեպքի մասին խոսելը ավելի հեշտ է:

Ըստ «ՀԺԱՀ 2015-16» զեկույցի, գյուղաբնակ կանայք բռնության դեպքերում ավելի քիչ են փնտրել օգնություն՝ 24%, քան քաղաքաբնակները՝ 34%:

- *Երբ կնոջ հանդեպ բռնություն է կիրառվում, տղամարդը գիտի, որ վախենալու ոչ մի բան չունի, բայց երբ սկսեն մեկ-երկու խոսել, իրենց հանդեպ պատժամիջոցներ*

կիրառել, թեկուզ, եթե ամուսնալուծվեն, հաջորդ ամուսնանալուց ինքն արդեն վախ կունենա: **ք. Աշտարակ, ամուսնալուծված կին**

- *Ասում էին՝ եթե Ա.-ն Զ.-ի հախից եկավ, մենք էլ կարանք… Եթե մի աղջիկը կարողացավ, կկարողանա նաև մյուս աղջիկը: Դեպքի մասին լսելուց հետո արդեն սկսել էին խոսակցությունները, ասում էին. «Սրա ամուսինն այլևս չի ծեծում կնոջը, որովհետև ասում են շառ է»: Շատ լավ, թող ամուսինները մտածեն՝ մենք «շառ» ենք, բայց չծեծեն:* **ք. Երևան, ամուսնալուծված կին**

Ընտանեկան բռնության հանրային բարձրաձայնման լեգիտիմությանն է նպաստում դաժանությամբ բռնության ծանրությամբ աչքի ընկնող դեպքերի մասին ԶԼՄ լուսաբանման հաճախացումը, ինչպես նաև հեռուստաշոուների ժամանակ բազմազան դեպքերի ներկայացումը:

- *Ճիշտն ասած հիմա ամեն քայլափոխի լսում ես նման դեպքերի մասին: Էլ ոչնչից չես զարմանում: Դարձել է սովորական բան:* **ք. Գյումրի, ամուսնացած կին**
- *Մեր շրջապատում դեպքեր չգիտեմ, բայց այդպիսի հաղորդում կա՝ «Կիսաբաց լուսամուտներ», դրանով ինչ ասես չես լսում:* **ք. Երևան, ամուսնացած կին**

Կանայք պատմում են նաև այնպիսի դեպքեր, երբ բռնության մասին կանանց կողմից խնդրի բարձրաձայնումը՝ հարազատներին կամ ոստիկանությանը դիմելը, ավելի ծանր հետևանքներ է ունեցել, այսինքն՝ երրորդ կողմի միջամտությունը բռնություն կիրառողին զգաստացնելու փոխարեն, հակառակ ազդեցությունն է ունեցել:

- *Մեկը վերցրել էր ծեծի ժամանակ, զանգել էր ոստիկանություն, ոստիկանը գնացել էր, որ ասի՝ ինչի համար ես ծեծում: Հետո իրար տեսել էին «Վայ, դո՞ւ ես», - պարզվում է ընկերներ են: Պտտվում կնոջն ասում է. «Մի հատ կոֆե դիր»: Ոստիկանի գնալուց հետո. «Քեզ շան ծեծ կտամ, միլիցա ես բերո՞ւմ իմ վրա»: Ոստիկաններն էլ ճիշտ չեն աշխատում:* **ք. Արմավիր, ամուսնացած կին**

Բռնության ենթարկվող կանայք սեփական կյանքի անտանելի դրությունից ելնելով հաճախ են օգնության դիմելու տեղեր որոնում, սակայն առկա օգնության մեխանիզմների (ՀԿ ծրագրերի, թեժ գծերի) մասին տեղեկատվության անհասանելիության պայմաններում կարող են հայտնվել էլ ավելի զոհական վիճակում՝ հանրային պարսավանքից, ոստիկանության ծաղրից մինչև ամուսնալուծության հետևանքով տնտեսական անապահովություն և անտունություն: Օգնության երաշխիքների (ընտանիքին հոգեբանական աջակցություն, տղամարդկանց վարքի փոփոխություն, ապաստանի տրամադրում, իրավական աջակցություն, կնոջ սոցիալական կապիտալի հզորացման հնարներ) առկայության պայմաններում կանայք էլ ավելի պատրաստ կլինեն հանրայնացնել իրենց հանդեպ կիրառվող բռնության դեպքերը՝ երկրորդական համարելով համայնքային կարծրատիպերը:

Հարմարման ձևերն ու ելքերի որոնումները.

- *1.Հլու ենթակայություն, 2. «խռով», 3. (փոխ)զիջում, 4. կանխարգելում, 5.պայքար, 6.տակից կարգավորումներ, 7.ազդեցիկ միջնորդի ներգրավում, 8.արտագաղթ, 9.ամուսնալուծություն, 10.ինքնասպանության փորձեր, 11.հոգեբանի կարիք*

Ընտանեկան բռնության ենթարկված կնոջ համար բռնության ըմբռնմանը հաջորդող բարդ խնդիրն է դրա հետ հարաբերվելու՝ իրավիճակից դուրս գալու ուղիների որոնումը: Հաճախ ելքի ուղիներ որոնելիս կինը նախ բախվում է իր առաջնային սոցիալական միջավայրի հետ պայքարի մեջ մտնելու՝ իր և ամուսնու հարազատներին բռնությունից ազատ լինելու իր կարիքն ապացուցելու խնդրին:

2011թ. ԵԱՀԿ պատվերով իրականացված հետազատության արդյունքները ցույց են տալիս, որ կանայք բռնության ենթարկվելիս մեծամասամբ ոչ մի քայլի չեն դիմում՝ 45.1%: 24.1%-ը դիմում են հարազատների, բարեկամների օգնությանը, 21.1% դեպքերում զոհերը հակահարված են տալիս, 6.8% իրավապահ մարմիններին են դիմում և 2.3% ՀԿ-ների աջակցությանն են դիմում: Հիմնականում բռնության ենթարկվող կանայք, եթե պայքարի ոչ մի մեխանիզմ չեն կիրառում՝ հիմնավորում են իրենց վարքը նրանով, որ բռնարարը կփոխվի, կուղղվի 36.7%, ինչպես նաև կանայք վախենում են հասարակական արձագանքից՝ 29.4%, բացի այդ, լուրջ խնդիր է

Կանանց առճակատ պայքարելու, բռնությանն ընդդիմանալուն ուղղված դիմադրական քայլերը (չներել, չենթարկվել, չհամբերել) շատ դեպքերում բացասական գնահատականների են արժանանում միջավայրի կողմից՝ պայմանավորված կնոջ՝ իբրև *«հայ կին և մայր»* հնազանդ, հարմարվող, համբերող կերպարի, սոցիալական դերի և ֆունկցիաների տիրապետող ընկալումներով: Այսպիսով, կնոջ հայկական ինքնությունը, ազգայնական գաղափարախոսության մակարդակում հենվելով հանուն հայ ընտանիքի նրա անձնազոհ՝ վեհ սկզբունքի վրա, կենցաղում վերածվում է կնոջ հլու ենթակայեցման և ստիպողաբար զոհականացման:

Կնոջն առաջին հերթին *«հայ կին և մայր»* համարող ըմբռնումներում նրա հանդեպ ձևավորվում է (երբեմն նույնիսկ ամեն գնով) *դիմանալու* պահանջը, որ տարածվում է նաև ընտանեկան բռնության դեպքերի վրա և հաճախ ռացիոնալացվում *«հայ ազգի»* առանձնահատկություններով: Հատկապես հասուն տարիքի, ամուսնական մեծ կենսափորձ ունեցող և մայրաքաղաքից դուրս բնակվող կանայք (որոշ ամուսնալուծված) բռնության ենթարկված կնոջը խորհուրդ են տալիս հարմարվել, փորձել խնդրի կարգավորման ելքեր գտնել:

- *Պետք է դիմակայես, հայ ես, հայի ծնող ես ու ամենառաջինը մայր ես: Իմ ամուսինը չի ստացվում, որ Ռուսաստանից գա՝ երկու տարի է արդեն: Եթե ես թողնեմ գնամ, կարող է ստացվի երեք տարի հետո գա, իմ տղաներն ասեն. «Մամ դու մեզ ո՞ւմ թողեցիր գնացիր»:* **Ք. Գյումրի, ամուսնացած կին**
- *Եթե այսօր կանանց իրավունքներն ենք քննարկում, եկեք չշեղվենք հայ իրականությունից: Մենք բոլորս հայ կանայք ենք ու մեզանից ծնված երեխաներն*

իրենց հայ գենը տանելու են՝ որպես հայ: Մենք այսօր ուզում ենք ամեն ինչ անենք, որ մեր ընտանիքներում լավ լինի: **ք. Արմավիր, ամուսնալուծված կին**

Անկախ բնակության վայրից, կնոջ հանդեպ միջավայրի տիրապետող՝ *«հարմարվելու, համակերպվելու»* պահանջը նույնիսկ ամենաբմբոստացող կանանց ստիպում են *«սովորել»* բռնությանը և իրենց համար անընդունելի հարբերության ձևերին:

- *Սովորում ես, չես հարմարվում, ուղղակի այդ մարդը քեզ համար սովորություն է դառնում….* **ք. Երևան, ամուսնացած կանայք**
- *Իմ քույրերն ինձ խորհուրդ են տվել, որ համակերպվեմ. մարդ ես, բոլորի տանն էլ խոսակցություն լինում է:* **գ. Մրգանուշ, ամուսնացած կին**

Հայ կնոջ հնազանդության բնութագիրը իր պաշտպանված լինելու անհրաժեշտությանը չհակադրող մեկնաբանությունների փորձեր են կատարում հատկապես բռնության ծանր փորձառություն վերապրած կանայք:

- *Հիմա եկել է հայ կնոջ ժամանակը, որ բռնության չենթարկվեն, չբաժանվեն, այդպիսի սարսափելի բաներ չտեսնեն, գոնե այդպիսի հասարակական կազմակերպությունները սատարեն: Մեր հայ կանայք շատ մեղք են իրենց հնազանդության խոնարհությամբ, լսելու կարողությամբ, համեստությամբ…. Ես դրա զոհն եմ դարձել: Հայ կինն, այո՛, պետք է տարբերվի բոլոր ազգերի կանանցից, բայց ինչ վերաբերվում է բռնությանը դրանք պետք է չլինեն մեր իրականության մեջ:* **գ. Մրգանուշ, ամուսնալուծված կին**

Հատկապես այն դեպքերում, երբ ամուսինների միջև ռոմանտիկ զգացմունքային կապ կա, կանայք նշում են, թե ամուսինների հետ հարաբերություններում կիրառում են *«խռով պահելը»՝* որոշ ժամանակ չհաղորդակցվելը, սակայն որպես կանոն այս մեթոդով բռնության դեպքերի շարունակականությունը ժամանակավոր դադարի փուլ է մտնում և ոչ թե ընդհատվում:

- *Դե պիտի խռով պահեի, բայց չեմ կարում, եթե պահեի, կօգներ…. Ախր, սիրում եմ էդ «անտիկվարին»* (կատակով- ծնթ.՝ հեղ.)…. **ք. Արմավիր, ամուսնացած կին**

Ընտանեկան խնդիրների, այդ թվում բռնության դեպքերի հարցում պայքարելն ինքնին համարվում է առօրեականության հետ անհամադրելի նախ և առաջ շարունակական պայքարի անհնարինության և դրա հետևանքով *«ընտանիքի խաղաղության»* խաթարման պատճառներով:

- *Դու իրավունք ունես աշխատելու, բայց ախր.... ոչ թե հրաժարվում ես, բայց ինքնըստինքյան կյանքն է բերում դրան: Ես իմ ընտանիքի խաղաղության համար շատ բաներ կարող եմ...* **գ. Մրգանուշ, ամուսնացած կին**

Հետևաբար լուծման ամենացանկալի տարբերակ է դիտարկվում *«փոխզիջումը»,* միմյանց հետ զրուցելով լուծումը: Հարկ է նշել, որ *«փոխզիջում»* հասկացությունն ունի երկու տիպի մեկնաբանություն: Եթե պահպանողական կանանց շրջանում (մարզերում բնակվող ավագ սերնդի կանայք) առավելապես ընկալվում է իբրև միայն կնոջ կողմից զիջման, ասել է թե՝

«համակերպման» պատրաստակամություն՝ բաց թողնելով տղամարդկանց զիջման ասպեկտը, ապա երիտասարդ կանայք և մայրաքաղաքում բնակվողները «*փոխզիջման»* տակ հասկանում են զիջման իրական փոխադարձություն և՛ տղամարդու, և՛ կնոջ կողմից։

- *Լսեք, ամբողջ կյանքը չի կարելի պայքարել։ Ինչ-որ բաներ կան, որ պետք է համակերպվես, մենակ պայքարելով կոտրշվելով ոչ մի բանի չես հասնի, ընտանիքը այնպիսին է, որ փոխզիջումները պետք է լինեն։* **գ. Մրգանուշ, ամուսնացած կին**

Բացի այդ, պայքարի մեթոդը անցանկալի է համարվում ամուսինների միջև անձնական հարաբերությունների բնույթի պատճառով։ Անձնական հարաբերությունների մարդկային, սիրային, սեռադերային՝ բարոյական կողմը, կարծես, բացառում է դրանց իրավական չափումը՝ չթողնելով իրավունքի համար պայքարի տեղը։

- *Դե զույգերը պետք է հասկանան իրար, իրավունքս ո՞րն է։* **ք. Գյումրի, ամուսնացած կին**

Հատկանշական է, որ պայքարելու եղանակների մասին գիտելիքը, լեզուն և միջոցները գրեթե բացակայում են միջին և ավագ սերնդի կանանց շրջանում, եթե նույնիսկ նրանք պատրաստակամ են իրավիճակի փոփոխության համար քայլերի դիմել։

- *Հենց այդ պայքարն է, որ չգիտենք։ Ինչպե՞ս պայքարենք։* **ք. Աշտարակ, ամուսնալուծված կին**

Հետազոտության ընթացքում իրավունքի համար անզիջում պայքարի մասին խոսել են միայն երիտասարդ չամուսնացած կանայք, ովքեր ուսանում են կամ ուսանել են Երևանում կամ առնչություն են ունեցել քաղաքացիական, իրավապաշտպան դիսկուրսներին։

- *Ախր իրավունքը դա ուրիշ է։ Փոխզիջման կարող ես գնալ քո ցանկության դեպքում։ Իսկ իրավունքն արդեն, ոչ թե կոնկրետ անհատականության հետ ա կապված, այլ մարդ էակի, որովհետև իրավունքները պարտադիր բաներ են, որոնց համար պե՛տք է պայքարել։ Իսկ արդեն այն բաները, որոնք ուղղակի քո անձին, ցանկություններին են վերաբերվում, հնարավոր է գնալ փոխզիջման։ Բայց իրավունքի համար չեմ կարծում, որ արժի զիջել։* **գ. Մրգանուշ, չամուսնացած կին**

Ընտանեկան բռնության ելքերի մասին խոսելիս երիտասարդ չամուսանացած կանայք ավելի շուտ պատկերացնում են խնդրի կանխարգելումը, քան բախվելուց հետո լուծումներ գտնելը։ Որպես կանխարգելման միջոց է ընկալվում մինչև ամուսնանալը կնոջ առավելագույն կայացումը՝ որպես անհատ և սեփական կամքով ցանկալի ամուսնու ընտրությունը, ով կսիրի և կհարգի կնոջը և չի կրի բռնության մշակույթը։ Նրանց այսպիսի ըմբռնումներում հանդիպում ենք *«կինը ևս մարդ է»* սկզբունքին, որով նա ոչ միայն իրավունք, այլև պարտավորություն ունի պաշտպանելու իր իրավունքը։

Այսպիսի իրավահավասար հարաբերությունների մասին պատկերացումները, թեև ողջունվում են ամուսնական կենսափորձ ունեցող միջին և ավագ սերնդի կանանց կողմից, սակայն իդեալականացված և ոչ իրատեսական են համարվում:

Կանայք բռնության դեմ պայքարի ավելի կոնկրետ քայլերի են սկսում դիմել հատկապես ֆիզիկական պարբերական և ծանրացող բռնության դեպքում: Հոգեբանական, տնտեսական բռնության ժամանակ կանայք շատ ավելի հաճախ են դիմում ոչ առճակատային՝ հարմարվողական մեխանիզմների որոնման կամ հաշտվում ու շարունակում այդ պայմաններում ապրել: Հոգեբանական և տնտեսական բռնությունների «լրջացումը» և դրանց պատճառով ամուսնալուծությունը մեծամասամբ հասկանալի չէ հետազոտության մասնակիցներին:

- *Ես չեմ ասում, թող կինը չաշխատի, ես ասում եմ, եթե ընտանիքը դեմ է, այդ պարագայում թող չաշխատի: Ես գիտեմ դեպքեր, երբ աղջիկը բաժանվել է զուտ այն պատճառով, որ իրեն չեն թողել աշխատել-կայանալ: ….Այսօր ինքը շատ է փոշմանել, շատ է ափսոսում շատ ջանքեր է գործադրում, որ վերադարձնի այն ինչ ուներ, բայց արդեն շատ ուշ է: …. Ընտանիքը միայն ծայրահեղ դեպքում պետք է քանդվի:* **ք. Արմավիր, ամուսնալուծված կին**

Ամեն դեպքում բոլոր կանայք կարևորում են կանանց կողմից ելքի ուղիների փնտրտուքը, չի խրախուսվում նման կարգավիճակում անգործողությունը, սակայն շատ դեպքերում ելքերի որոնումն ինքնին ելք է դիտարկվում և դրանով բավարարվելու առիթ դառնում: Համարվում է, որ կանայք պետք է նման իրավիճակներում աչալուրջ լինեն, չկորցնեն հնարավոր *«բացվող»* հնարավորությունը:

- *Բայց գիտեք, Աստված, որ մի դուռը փակում է մեկ ուրիշը բացում է, դու պետք է այդ ելքը գտնես: Պարզապես մենք այնքան երկար ենք նայում այդ փակված դռան հետևից, որ նորը չենք նկատում:* **ք. Գյումրի, ամուսնացած կին**

Հաճախ բռնություններից և սահմանափակումներից խուսափելու համար կանայք ընտրում են տակից կարգավորման մեխանիզմներ : Այսպիսի մեխանիզմները հատկապես տեղին են համարվում տնտեսական բռնությունների և սոցիալական միջավայրի հետ հաղորդակցման արգելքների դեպքերում և հանգեցնում են կնոջ կողմից խաբեությունների, անազնիվ քայլերի դիմելուն, ամուսնուն կամ նրա հարազատներին ապատեղեկացնելուն: Այսպիսի խաբեությունների և անազնիվ մեխանիզմների կիրառությունը լայնորեն տարածում ունի և բարոյականությունից դուրս չի ընկալվում, այլ հաճախ համարվում է կնոջ խելացիություն, չափի ու ձևի իմացություն: Եթե կինը գնում է առճակատման և կոնֆլիկտի, միջավայրը հակված է կարծել, թե ուրեմն կինը բավարար չի գործադրել այն «կանացի» համարվող տակից մեթոդները, որ կարող էր:

Ընտանեկան բռնության խնդրի կարգավորման տարբերակներից է բռնություն կիրառողի վրա այլոց՝ ընտանիքի անդամի կամ նշանակալի անձի միջոցով ազդեցության կիրառումը:

- *Իմ ծնողն էլ չի թողնում, որ ես դուրս գամ փողոց, ինչ-որ մեկի հետ քայլեմ՝ այդ խնդիրը կա՝ ավանդապաշտ ծնող ունեմ: Բայց ես մամային ասում եմ, որ պապային համոզի:* **ք. Վանաձոր, չամուսնացած կին**

- *Ինքը տանը շատ ահավոր է, ընկերները չէին պատկերացնում, գնում-գալիս էին, բայց չգիտեին, որ կնոջը ծեծում է: Մի օր երեք ընկերները մտան տուն այն պահին, երբ կնոջ մազերը բռնած պատին էր տալիս: Դրանից հետո էտ տղեն ազդվել է:* **ք. Արմավիր, ամուսնացած կին**

Հաճախ որպես բռնությունից ազատվելու ելք քննարկվում է բնակության քաղաքը կամ երկիրը լքելու տարբերակը: Այս միջոցին են դիմում ոչ միայն չամուսնացած երիտասարդ կանայք՝ ազատվելու համար իրենց ընտանիքների վերահսկողությունից, այլև ծանր բռնությունների հետևանքով ամուսանալուծված, սակայն շարունակական հետապնդումների ենթարկվող կանայք:

Բռնության ելքերից ամուսնալուծության ճանապարհին ընտրելիս բռնության ենթարկվող կնոջ համար շատ կարևոր է առաջնային միջավայրի, հատկապես ծնողական ընտանիքի աջակցությունը: Ամուսնալուծված կնոջ պիտակավորումն ու նրա կյանքը վերջացած համարվող մոտեցումները շատ դեպքերում պատճառ են հանդիսանում՝ բռնության ենթարկվող կանանց խուսափել ամուսնալուծությունից: Ամուսնալուծվելու խորհուրդ տալուն պատրաստակամ են միայնակ ապրող կանայք և ամուսնալուծված կանայք (կամ նրանց ամենամոտ հարազատները), ովքեր տնական և ծանր բռնություններ են վերապրել:

- *Ավելի լավ է գնաս առանձին աշխատես, արժանապատիվ քու հացդ ուտես, քան թե անգետին գերի դարձած….* **ք. Գյումրի, ամուսնացած կին**

«ՀԺԱՀ 2015-16» արդյունքները ցույց են տալիս, որ երբևէ որևէ մեկի կողմից ֆիզիկական կամ սեռական բռնության որևէ տեսակի ենթարկված տասը կանանցից երեքը (29%) բռնությունը դադարեցնելու նպատակով փնտրել են օգնություն: Կանանց 40%-ը երբեք չի փնտրել օգնություն և երբեք չի պատմել որևէ մեկին բռնության մասին, իսկ 29%-ը երբեք չի փնտրել օգնություն, սակայն ինչ-որ մեկին պատմել է բռնության մասին:

Ընտանեկան բռնության հետևանքով Հայաստանում նաև գրանցվում են կանանց ինքնասպանության փորձեր և դեպքեր՝ որպես անելանելի դրությունից ծայրահեղ ելք: Ֆոկուս խմբերի ընթացքում մենք հանդիպեցինք նման դեպքերի մասին լսած պատմությունների, ինչպես նաև մասնակիցներից մեկի անձնական փորձին:

- *Ոստիկանություն չեմ դիմել, միայն մեկ անգամ շատ ծայրահեղ ծանր իրավիճակում էի, այն աստիճան, որ ես ինձ ժավել էի փորձել:* **ք. Գյումրի, ամուսնացած կին**

Հատկանշական է, որ կանանց ծանրակշիռ մասի համար մասնագետների, հատկապես հոգեբանների հետ աշխատանքը ողջունելի և ցանկալի է՝ համարվելով բռնության ելքերի և խնդիրների հաղթահարման օգտակար մեխանիզմ: Չնայած դրան պրակտիկորեն սակավ կիրառելի է. հոգեբանական աջակցության հնարավորություն ունենում են միայն

ՀԿ-ների ծառայությունների մասին տեղեկացված և դրանցից օգտվող սակավաթիվ կանայք։

Հաստատություններին (չ)դիմելու հիմքերը և պրակտիկաները

1. **Ոստիկանությանը դիմելու խոչընդոտները**

Ընտանեկան բռնության ենթարկվող կանայք խնդրին առնչվելիս առաջնային սոցիալական միջավայրից օժանդակություն փնտրելուց բացի ունեն նաև պետական հաստատություններին, մասնավորապես՝ ոստիկանությանը դիմելու ճանապարհը։

Այս ճանապարհը, սակայն ինքնին հասկանալի մի բան չէ բոլոր կանանց համար։ Ավելին, ինչպես նախորդ բաժիններում տեսանք, պետական կառույցների միջամտությանը՝ որպես պայքարի մեխանիզմ, կանայք դիտարկում են ծայրահեղ դեպքերում։ Ամուսնալուծությունը, իսկ երբեմն նույնիսկ ինքնասպանության փորձը կարող են ավելի կիրառելի դիտվել, քան ոստիկանությանը դիմելը։

Կանայք մեծամասամբ մերժում են ոստիկանությանը դիմելու հնարավորությունը՝ 1)հանրային պարսավանքից խուսափելու, 2)անօգուտ համարելու, 3)բռնարար ամուսիններից վախենալու, 4)ինչպես նաև ոստիկանականներից վախենալու փոխկապակցված պատճառներով։

Ոստիկանությանը դիմելը ենթադրում է ընտանեկան խնդրի էլ ավելի հանրայնացում, ինչն արդեն իսկ անցանկալի է համարվում շատերի կողմից, պիտակավորվում որպես *«սխալ», «իզուր»* և *«խայտառակող»*։ Բացի այդ կանայք չեն ցանկանում քրեական գործի քաշքշուկում հայտնվել, ինչպես նաև չեն ցանկանում քրեական պատասխանատվության ենթարկելու վտանգի առաջ կանգնեցնել իրենց ընտանիքի անդամին։

- *Ավելի խայտառակվում են, հասարակության կողմից ծաղրի են ենթարկվում թե՛ ամուսինը, թե՛ կինը։ Արդյունքում ոչ ոք չի շահում, իզուր հակասությունը խորանում է։ Ոստիկանության դիմելը սխալ է։* **գ. Մրգանուշ, ամուսնալուծված կին**
- *Կասեն՝ ամուսնուն տարավ գցեց ոստիկանություն, էլ չեն ասի ամուսինն ինչքան էր ծեծում կամ կասեն. «լավ եղա՞վ, որ ամուսինը տարավ տուգանք մուծեց, նստեց, հետ եկավ, ի՞նչը փոխվեց»։* **ք. Աշտարակ, ամուսնալուծված կին**
- *Ես սխալ եմ գտնում, որ գալիս են ոստիկանություն բողոքում են, դու ինքդ այդ հարցերը տան մեջ լուծի։ Ասենք բացատրելով բանով...* ***գ. Մրգանուշ, ամուսնացած կին***

Ոստիկանության կողմից իրական աջակցություն ստանալու հնարավորություն չեն տեսնում անգամ բռնության փորձ ունեցած կանայք, հատկապես՝ ոստիկանության հետ անհաջող առնչություն ունեցողները։ Ոստիկանության գործունեությունը կաշկանդված է ոչ միայն մշակութային դիրքորոշումներով, այլև իրական աջակցություն ցուցաբերելու իրավական մեխանիզմների բացակայությամբ։

- *Ոստիկանները կգային այն ժամանակ, երբ կնոջը սպանած կլիներ։* **ք. Աշտարակ, ամուսնալուծված կին**

- *Իմ տնօրենը ամուսնալուծվել էր, բայց ամուսինն իրենց անընդհատ նեղում էր, գալիս էր, կռիվներ էր սարքում, ու իրենք ոստիկանություն էին դիմել: Ոստիկանությունը գալիս տանում էր…. ինչ-որ օրենք կա, որի համաձայն, եթե մեկ տարվա մեջ մարդը երեք անգամ կրկնում է նույն խուլիգանությունը, նոր իրեն կբռնեն, եթե ոչ, ապա իրեն տանում են, հետո բաց են թողնում: Բայց ինքը տարի կանցներ էլի կգար, ապակիներն էր կոտրում…. Միևնույն է հնար չկար, այնքան ժամանակ մինչև ընտանիքի անդամները հիվանդություն ձեռք բերեցին, այդ մարդն էլ շաքար ստացավ մահացավ:* **ք. Գյումրի, ամուսնացած կին**

Պետական ինստիտուցիոնալ կառույցները դիտարկվում են որպես խիստ ֆորմալ իրենց գործունեությամբ ու ոչ զգայուն ընտանեկան բռնության դեպքերին: Դեպքերը անձնական են, գործող օրենքները՝ անհամարժեք ընտանեկան խնդիրներին: Ոստիկանների ազդեցությունը ժամանակավոր կարող է սաստել բռնարարին, սակայն բռնության խնդրի լուծմանը չի բերում: Այսպիսով, ոստիկանությանը դիմելը ոչ միայն անօգուտ է, *«իզուր»*, այլ նաև կարող է վտանգավոր լինել, քանի որ հաճախ դա բռնարարի համար լրացուցիչ ազդակ և առիթ է կնոջ հանդեպ բռնություն ուժգնացնելու համար:

- *Ինձ թվում է ոստիկանությունը դրանք չոր օրենքներ են, նեղ ընտանեկան խնդիրներում ոչ մի հարց չեն կարող լուծել:* **գ. Մրգանուշ, ամուսնալուծված կին**
- *Ես չգիտեմ ինչ-որ կազմակերպություն և բացարձակապես վստահ չեմ, որ Հայաստանում բացի ծնողներիցս որևէ մեկին կարող է դիմեմ և իմ մեջքին կանգնող լինի, որ ես վստահ լինեմ, որ կգան, դուռը կկոտրեն, ինձ կտանեն և կպաշտպանեն այնքան ժամանակ մինչև նրա հարցերը կլուծեն: Թե ինչ կանեն՝ հոգեբանորեն, հիվանդանոցով, թե ոստիկանությամբ ինչ-որ մի բան, որ ես կարողանամ տանից դուրս գալ, աշխատել և իմ երեխաներին պահել, այսինքն՝ ազատ մարդ լինել, այլ ոչ թե ինչ-որ տեղ բռնված, ոստիկանության խցում նստած ու ինքը սպասի, ասի. «Ահա, հիմա դուրս կգաս քեզ հափ կանեմ»: ….Ես շատ ուրախ կլինեի, որ լիներ նման կազմակերպություն:* **ք. Աշտարակ, ամուսնացած կին**

Ինչպես ցույց են տալիս հետազոտությանը մասնակից կանանց օրինակները, կանայք ոստիկանությանը դիմում են միմիայն ֆիզիկական լուրջ և շարունակական վտանգների՝ ծանր և տևական բռնությունների և հետապնդումների դեպքերում, սակայն միշտ չէ, որ հետևողական են՝ նույնիսկ այդ դեպքերում:

- *Իմ ամուսինը հանքում էր աշխատում (խմելու հետ սեր ուներ) գործից տուն եկավ քույրս զանգեց խոսեցի, մյուս քուրիկս զանգեց կախեց, ամուսնուս հեռախոսը դրված էր, վերցրեցի, որ զանգեմ, ամուսնուս եղբայրը խփեց գլխիս, ասեց, թե մի՛ խոսի, ի՞նչ կա այդքան խոսում ես: Իրենք չէին թողնում, որ ես մերոնց հետ կապ ունենամ: Այդ պահին աչքերիս դեմը սևացավ ես վազեցի հարևանի տուն, որ այնտեղից զանգեմ մերոնց, այդ պահին անհասանելի էին: Մի որոշ ժամանակ անց հարևանի տղան բերեց, թե վերցրա ձերոնք են զանգել, խոսի: Ամուսինս խմած տուն եկավ, ասեց, թե քո սիրողն է, որ եկել է, ես ասեցի, որ մեր հարևանի տղան է: Այդ ժամանակ ես եմ դիմել ոստիկանություն: Ոստիկանությունը եկավ, որ իրեն պետք է կալանավորեին, ես խնդրեցի որ չտանեն:* **ք. Գյումրի, ամուսնացած կին**

Նույնիսկ ամուսնալուծությունը հաճախ ավելի նախընտրելի տարբերակ է համարվում, քան ոստիկանություն կամ պետական այլ կառույցի դիմելը՝ միայն պատժիչ գործառույթ ունեցող ոստիկանությունից աջակցություն, ելք կամ լուծում չտեսնելու պատճառով: Համարվում է, որ ոստիկանություն դիմելը, ու բռնարարին որևէ պատժի ենթարկելը անընդունելի է, եթե կինը հակված է բռնարարի հետ հարաբերությունները շարունակել, այսինքն՝ ցանկանում է ազատվել բռնությունից, սակայն պահպանել իր ընտանիքը: Արդյունքում ոստիկանությանը դիմելը վերջնական տարբերակն է, երբ զոհը որոշում է կայացնում ամուսնալուծվել, ինչն էլ հաճախ կարող է անել առանց ոստիկանությանը դիմելու:

- *Ես նախ և առաջ այն կարծիքին եմ, որ տղամարդը իրավունք չունի ձեռք բարձրացնի կնոջ վրա, եթե շարունակաբար ծեծի է ենթարկվում ավելի լավ է բաժանվի, քան թե ոստիկանություն դիմի: Եթե պետք է այդպես շարունակվի խայտառակ լինեն միակ ելքը բաժանությունն է:* **գ. Մրգանուշ, ամուսնացած կին**:
- *Եթե որոշել ես որ ամուսնուդ հետ չես ապրելու ավելի լա՞վ չի լինի բաժանվես, ի՞նչ անես, տաս ոստիկանություն, փակեն էլի համարվի՞ քո ամուսինը: Վերջիվերջո միառժամանակ հետո դուրս է գալու: Երեխաներին զրկես հորից հանուն ինչի՞, որ դու ծեծվել ես՝ դուրդ չի գալիս բաժանվի:* **ք. Արմավիր, ամուսնացած կին**

Ոստիկանությանը դիմելու տարբերակը՝ որպես թեև ծայրահեղ, սակայն ընդունելի տարբերակ, նշել են հասուն տարիքի միայնակ ապրող կանայք, որոշ երիտասարդ չամուսնացած կանայք և որոշ ամուսնալուծված կանայք: Սակավ դեպքերում է, որ ոստիկանությանը դիմելը նույնիսկ համարվում է ողջունելի՝ մարդու իրավունքները և իրավական հարաբերությունները երկրում զարգացնելու հեռանկարով:

- *Ես գտնում եմ, որ դա անպայման պետք է անել, եթե արդեն այդպիսի ծայրահեղ վիճակ է, պետք է ոստիկանությանը դիմել, միգուցե հենց իրեն նստեցնեն, փոքր-ինչ, որ նստի խելքի գա, արդեն մեկ այլ ձևով կլինի:* **ք. Աշտարակ, ամուսնալուծված կին**
- *Ես վերջերս մի հատ դեպք էի կարդում աղջկան սեռական բռնության էին ենթարկել ինքը ոստիկանություն էր դիմել (ամուսնացած չէր): Ոստիկանները սկսել էին ծաղրել այդ աղջկան, կողքից էլ հավաքարար մի տատիկ ասել էր. «Աղջիկ ջան ամոթ է, ինչու՞ ես եկել պատմում դրա մասին, գնա՛ տուն ու տնեցիներիդ էլ չպատմես, մոռացի՛ր դրա մասին»: Ասածս ինչ է, որ մեր երկրում այդ թեմաները փակ են: Ամոթ է թե՛ սեռական, թե՛ ֆիզիկական, թե՛ ինչ-որ տեղ հոգեբանական բռնությունը, որ եթե անգամ ոստիկանություն կանչեն... Ինչո՞ւ են բաժանությունները շատ, որովհետև ոչ տղամարդն է տան մեջ նորմալ վերաբերվում ոստիկան կանչելուն, ոչ էլ ոստիկանները. ծաղրում են: Բայց նույն հայերը, որ նույն մտածելակերպն ունեն, բայց դրսում են ապրում, այնտեղ կինը գիտի, որ եթե ամուսինը իր վրա բռնություն կիրառի ինքը կարող է համապատասխան մարմիններին կանչի ու ամուսինը կենթարկվի. ի՞նչ կապ ունի, որ իրենք ամուսնացած են, համենայն դեպս այդ կնոջ հոգու ու մարմնի վրա ինքն իրավունքներ չունի:* **գ. Մրգանուշ, չամուսնացած կին**:

- *Բա իհարկե ճիշտ է անում, որ դիմում է ոստիկանություն: Բա ի՞նչ, սեղանի տեղ օգտագործեին՝ արդուկը վրայով տանեին-բերեի՞ն:* **ք. Աշտարակ, ամուսնալուծված կին**

Ոստիկանությանը չդիմելու համար կանանց հիմնավոր փաստարկներից է ինքնին ոստիկանության՝ իբրև բռնության պատրոնաժ իրականացնող հաստատության (կոռուպցիոն կամ այլ կապերի միջոցով) և ոստիկանների՝ իբրև *«նույն տղամարդկանց»* մասին պատկերացումը և նրանց հանդեպ անվստահությունը: Գրեթե բոլոր ֆոկուս խմբերի ընթացքում մասնակից կանայք հիշատակում էին դեպքեր իրենց ծանոթ ոստիկանների մասին՝ ընդգծելով, որ ոստիկաններն իրենք իրենց ընտանիքներում բռնարար են և հետևաբար պաշտպանում են բռնարարին, զոհի իրավունքները պաշտպանելու փոխարեն: Այնինչ ընտանեկան բռնության ենթարկված կինը, ում համար անգամ բռնության մասին բարձրաձայնելը բարդ խնդիր է, արտաքին օգնություն որոնելիս նման կառույցների հանդեպ առավելագույն վստահության կարիք ունի:

- *Ճիշտն ասած այդ ընթացքում արդեն ինձ ճնշում էին, որ ամոթ է, ոչ մեկը քեզ չի օգնի: Ես գիտեմ, որ իմ նախկին ամուսինը այդ ընթացքում աղջիկ էր բռնաբարում, այդ ընթացքում տուն էր հրդեհում, այդ ընթացքում ինչ ասես, թե չէր անում և ոստիկանությունը նրան ոչ մի բան չի անում: Ամեն բան «նորմալ» է, նա անպատիժ է մնում և արդեն դրանից ես վախեցել էի: Վախեցել էի, որովհետև ոչ-ոք ոչինչ չէր անում, մի անգամ նա եկավ ծնողներիս տուն, խփեց դուռ-լուսամուտ կոտրեց, զանգում էինք ոստիկանություն և նրա բարեկամ ոստիկանները եկան-լցվեցին մեր տուն և ամեն բան նորմալ էր, նրան չպատժեցին:* **ք. Երևան, ամուսնալուծված կին**
- *Եթե կինը իմանա, որ իր բարձրաձայնելու հետ մեկտեղ իր իրավունքները կպատպանեն ոստիկանությունը կամ համապատասխան կառույցները, թեկուզ շրջապատը... կամ եթե իմանա, որ իր տղամարդը կփոխվի, ինքը կբարձրաձայնի, բայց մեր իրականությունում չկա նման բան: Սովորաբար եղել են դեպքեր, անգամ ոստիկանություն են ահազանգել բայց ոստիկանն եկել է տղամարդու կողմից է եղել ու դրանից ավելի վատ է եղել, ավելի շատ է ծեծել:* **ք. Արմավիր, ամուսնացած կին**

Շրջապատի մարդկանց կողմից ոստիկանությանն ահազանգելը կամ նույնիսկ ոստիկանությանը դիմելու խորհուրդ տալը ևս անցանկալի է համարվում: Նման միջամտությունը կարող է ավելորդ համարվել ոչ միայն բռնության ենթարկողի, այլև անգամ զոհի կողմից, որովհետև ամուսիններին պատժի ենթարկելը չէ, որ կանայք ձգտում են: Իրենք կանայք հաճախ մինչև վերջ չեն շարունակում գործի քննությունը՝ չհասցնելով բռնարարարին պատժի ենթարկելու աստիճանին, այլ ձգտելով չեզոքացնել բռնությունը: Մյուս կողմից ոստիկանությանը դիմելով ամուսինների միջև կոնֆլիկտը կարող է էլ ավելի բարդանալ և հանգեցնել ամունալուծության, ինչն ինքնին ողբերգական հետևանք է դիտվում:

- *Հարևան կա հասնում փրկում է, բայց որ ոստիկանություն տաս, ոնց որ մեղավորը դու դուրս գաս, պետք է չխառնվես այդ դեպքում:* **ք. Գյումրի, ամուսնացած կին**
- *Չէ՛, չէ՛, ա՛յ մարդ, ոստիկանության դիմելն էլ խորհուրդ տվեցինք, պրծանք՝ ամուսնալուծությունները կշատանան:* **ք. Արմավիր, ամուսնացած կին**

Հետևաբար ոստիկանների աշխատանքը կանայք դիտարկում են հոգեբանների, սոցիալական աշխատողների հետ ընդհանուր համալիրի ներքո, որպեսզի մի կողմից հնարավորություն ընձեռվի բռնության ենթարկված կնոջը հետ չկանգնել սեփական իրավունքները մինչև վերջ պաշտպանելու ճանապարհից, մյուս կողմից աջակցություն ցուցաբերվի բռնարարի վարքի փոփոխությանը:

2. Հասարակական կազմակերպությունների և պետության դերը

Բռնության դեպքերը կարգավորելու հարցում թեժ գծերը, հոգեբանների, սոցիալական աշխատողների խորհրդատվությունը, իրավաբանական աջակցությունը և այլ՝ ըստ էության հասարակական կազմակերպությունների կողմից այսօր մատուցվող ծառայությունները հաճախ շատ ավելի նախընտրելի և արդյունավետ են համարվում՝ նույնիսկ դրանց առկայության մասին տեղեկացված չլինելու պայմաններում:

- *Ինձ թվում ա արտասահմանում կան, օրինակ, թեժ գծեր: Զանգում են հոգեբանի, ժամերով խոսում են, հետո վճարում են դրա համար, թեկուզ օգնության են կանչում, օրինակ՝ 911: Կարելի էր այդպիսի մի համար էլ Հայաստանում լիներ, զանգեիր ինչ-որ հոգեբանական ծառայություն լինի այս տիպի կանանց համար, որոնք ամեն տեսակի տուժված են: Եթե տաս-քսան տարի առաջ լիներ, ես կզանգեի այդ բռնության ժամանակ, ինչ-որ մի խորհուրդ լսեի, դրանով առաջնորդվեի, ինչ-որ մի ելք, լուծում գտնեի այդ հարցում, ոստիկանն ի՞նչ կարող է անել:* **գ. Մրգանուշ, ամուսնալուծված կին**

Բոլոր ֆոկուս խմբերում կային մարդիկ, ովքեր լսել էին ոլորոտային ՀԿ-ների գոյության մասին, սակայն ընդհանուր առմամբ տեղեկացվածությունը կոնկրետ ՀԿ-ների և ծառայությունների բնույթի, դրանց հասանելիության (անվճար լինելու) մասին իրազեկությունը անբավարար մակարդակի էր:

Նկատելի է, որ ՀԿ-ների հանդեպ վստահության ձևավորման առավել հիմնարար գործոն է կոնկրետ դեպքերով աջակցության, դրական հանգուցալուծումների մասին (որևէ ծանոթի կամ մեդիա միջոցով) տեղեկատվությունը և ոչ թե սոցիալական գովազդները:

ՀԿ-ների արշավների և գովազդային միջոցներով իրազեկման գործունեությունը դրական չի գնահատվում հատկապես միջին և ավագ սերնդի կանանց կողմից: Համարվում է, որ ինքնին գործունեությամբ և գործնական օգուտներով և ոչ թե (ինքնա)գովազդով պետք է ՀԿ-ները հանարային վստահությանն արժանանան: Գովազդային և տեղեկատվական արշավները երիտասարդ կանանց համար շատ ավելի ընդդունելի և հասկանալի են:

Երկու ֆոկուս խմբերում հանդիպեցինք երկու կնոջ, ովքեր ընտանեկան բռնության հետևանքով աջակցություն էին ստացել ՀԿ-ից, ինչպես նաև բազմաթիվ կանանց, ովքեր հեռուստատեսության, ինտերնետային, ինստիտուցիոնալ այլ կառույցների միջոցով լսել էին նրանց գոյության մասին: Որպես ՀԿ-ի գործունեության արդյունք առանձնացվում է ապաստարանների տրամադրումը: Կարևորվում է բռնության ենթարկված կնոջ և ընտանիքի, հատկապես բռնարարի հետ ՀԿ-ի հոգեբանների աշխատանքը, ընտանիքի

վերամիավորմանը նպատակաուղղված ջանքերը, իրավաբանական ծառայությունները: ՀԿ-ների աջակցությունը ստացած կամ նրանց գործունեությանը մոտիկից առնչված կանայք բարձր են գնահատում կանանց հանդեպ անշահախնդիր և նպատակաուղղված աջակցությունը:

- *Երբ դիմում էի այդ կազմակերպությանը, չէի կարող պատկերացնել, որ առանց որևէ բանի օգնելու էին: Մտածում էի, ես ի՞նչ եմ արել այս մարդկանց, որ պայքարում են իմ և իմ իրավունքների համար:* **ք. Երևան, ամուսնալուծված կին**

Ընդհանուր տեղեկացվածության դեպքում կանանց (հատկապես միջին և ավագ սերնդի) կողմից թերահավատություն կա հասարակական կազմակերպությունների գործունեության կայունության և շարունակականության նկատմամբ: Սա հանգեցնում է որոշակի անլուրջ վերաբերմունքի և անվստահության, ինչը ՀԿ-ներին դիմելու համար նկատելի խոչընդոտ է:

- *Համ էլ այդ կառույցները պետք է իրենց արդարացնեն հասարակության մեջ: Ինչ-որ ընդհանուր տարածքում սկեսուրը ամուսնու հետ կնոջը ծեծի էին ենթարկել, ու դա նորմալ էր հասարակության համար՝ ոչ մեկ չէր խառնվել: Կանանց պաշպանության ինչ-որ կառույց էր իրար խառնվել, որ, ի դեպ, երտասարդ աղջիկներ էին ասում էին. «Նորմալ է՞ սա ժողովուրդ, որ ձեն չեք հանում, հա՞»: Երկու տարի առաջ էին, թե մեկ… Այսինքն հասարակության մեջ հավատ չկա: Կինը, եթե վստահ լինի, որ իրեն կպաշպանեն, կդիմի: գ. Մրգանուշ, չամուսնացած կին*

Հետևաբար կանայք կարևորում են էլ ավելի հստակ պետական քաղաքականության առկայությունը, որը կայուն և արդյունավետ աջակցության երաշխիքներ կտարամադրի ՀԿ-ների ծառայությանը: Պետական աջակցությունը խիստ կարևորվում է հատկապես բռնության ենթարկված կանանց ապաստան և տնտեսական կայունության պայմաններ տրամադրելու հարցում:

- *Պետությունը հատուկ կազմակերպություն ստեղծի, որ նման անճար կանայք, ովքեր ո՛չ բարեկամ ունեն, ո՛չ ելք են տեսնում, նման կանայք առանց վախենալու, վարանելու դիմեին ու իրեն օգնեին, թեկուզ ժամանակավոր վճարովի կացարան, աշխատանքով ապահովեին, որ կարողանա աշխատել ու իր երեխաներին պահել, մանավանդ սոցիալապես անապահով խավը Գյումրիում շատ շատ է:* **ք. Գյումրի, ամուսնացած կին**
- *Հասարակական կազմակերպությունները, ցավոք սրտի, այդպիսի լուրջ խնդիրներ չեն կարող լուծել: Այդ ինչպե՞ս է, որ ոստիկանությանը դիմում ենք.... դա հասարակական կազմակերպություն չէ, այլ պետական ծառայություն: Ուրեմն դա էլ պետք է լինի պետական ծառայություն, որ օրինական ձևով կարողանա բռնության ենթարկված հայ կնոջ շահերը, իրավունքները պաշպանել:* **գ. Մրգանուշ, ամուսնալուծված կին**

Այսպիսով, կանանց նկատմամբ բռնության հաղթահարման հարցում իրականացվող միջոցառումները և աջակցության մեխանիզմները, ըստ կանանց կարիքների, պետք է ոչ

միայն համալիր բնույթ կրեն, այլև կայուն պետական քաղաքականության մաս հանդիսանան՝ ապահովելով իրավական խորհրդատվություն, հոգեբանական աջակցություն, իրավապահ մարմինների ներկայացուցիչների և սոցիալական աշխատողների համագործակցային աշխատանք, տնտեսական և կացարանային պայմաններ։

4. Ամփոփում. ընտանիքի և բռնության ըմբռնման հիմնական առանձնահատկությունները

Կանանց փորձառության և սոցիալական դիրքի գործոնը

Ընտանեկան բռնության ըմբռնումը, մեծ հաշվով պայմանավորված լինելով նախնական բռնության մշակույթի՝ կնոջ (ինքնա)ստորադասման և (ինքնա)սահմանափակումների համատեքստով, մեծապես կախված է նաև հետևյալ գործոններից՝

- տվյալ անձի առկա կամ սպասվող ընտանեկան դերային համալիրից (ամուսնացած-չամուսանցած կին, հարս, սկեսուր, զոքանչ),
- բռնության ծանր փորձառության առկայություն-բացակայությունից,
- սոցիալական խավի և սերնդային պատկանելությունից, ըստ այդմ՝ ունեցած սոցիալական կապիտալից (բնակություն և/կամ կրթություն մայրաքաղաքում, իրավապաշտպան ՀԿ սեկտորի հետ առնչություն և քաղաքացիական/իրավապաշտպանական դիսկուրսին հասանելիություն, ինտերնետին և այլ տեխնոլոգիաներին հասանելիություն, գիտելիք և հմտություններ)։

Այսպիսով բռնության փորձառությունը և սոցիալական դիրքը (դիրքի տրամադրած իշխանության պոտենցիալը) ամենակարևոր հատկանիշներն են, որոնք անձնական մակարդակում պայմանավորում են կանանց շրջանում բռնության ըմբռնման ուղենիշները և դրանց տարբերությունները։

Թեև առկա են տվյալներ, որ գյուղերում, քաղաքների համեմատ ավելի տարածված են և հետևաբար հանդուրժելի են կանանց հանդեպ սահմանափակումներն ու վերահսկման ձևերը (օրինակ՝ հագուստի ընտրությունը, չամուսանցած կնոջ վարքագիծը, ամուսնություն որոշումը, տնտեսական կախյալությունը[17]), մեր հետազոտության ընթացքում հանդուրժման բարձր շեմեր ունեցող վերաբերմունքներ ենք ստացել նաև քաղաքներում, այդ թվում՝ մայրաքաղաք Երևանում: Հարկ է հաշվի առնել, որ Հայաստանի բնակավայրերը ուրբանացման բարձր մակարդակ չունեն, և ուրեմն հաճախ՝ հատկապես փոքր քաղաքների դեպքում, դրանց կենսապայմանները գյուղական կյանքից մեծ տարբերություններ չեն արձանագրում: Մյուս կողմից բազմաթիվ կանայք, հատկապես Երևանին, Գյումրիին և Վանաձորին հարակից գյուղերից հաջողում են ներգրավվել առավել մեծ քաղաքների հանրային կյանքում (ուսում ստանալ, աշխատել, կուտակել սոցիալական կապիտալ), ինչն էլ նպաստում է գյուղում բնակվող երիտասարդ կանանց հանրային և ընտանեկան կյանքի մասին տիրապետող կարծիքներից տարբերվող պատկերացումներ ձևավորել:

Այսպես օրինակ, եթե երիտասարդ չամուսնացած և Երևանում ուսանող, Երևանին մոտ գյուղում բնակվող կանայք ընտանեկան հարաբերությունների մասին պատկերացնում են իբրև հնարավորինս հավասար հարաբերություններ, արդեն սկեսուրի դերում կամ ապագա սկեսուր կանայք դրանք ընկալում են ավագների և երիտասարդների միջև հստակ աստիճանակարգված դերային հարաբերություններ, ասել է, թե՝ ավագների և նրանց հասանելիք պատվարժան (երիտասարդներին աջակցող) դերի հանդեպ հարգանքի հարաբերություններ:

Ֆոկուս խմբային հետազոտությունը թույլ չի տալիս խոսել ընտանեկան բռնության շուրջ կանանց ըմբռնումների տարածված ձևերի համամասնության մասին, հետևաբար մենք կարող ենք արձանագրել միայն հանդիպած վերաբերմունքների առկայությունը: Բոլոր ֆոկուս խմբերի ընթացքում հանդիպել են ինչպես պահպանողական և ընտանեկան բռնության «թեթև» ձևերի (սահմանափակումներ և վերահսկողություն) նկատմամբ հանդուրժող վերաբերմունք ունեցող դիրքորոշումներով, այնպես էլ իրավահավասարության դիրքերից և բռնության հանդեպ մերժողական դիրքորոշումներով կանայք՝ անկախ բնակավայրի տիպից և կախված վերն առանձնացված գործոններից:

Հետևաբար բռնության մասին կանանց հետ երկխոսելիս առաջնահերթ է հասկանալ կանանց խմբերի միջև այս և այլ բազմաթիվ տարբերությունները և նկատի առնել դրանք:

[17] Գյուղական կանանց տնտեսական կախյալության մասին տվյալները տե՛ս «Գենդերը, գյուղատնտեսությունը և գյուղական շրջանների զարգացումը Հայաստանում» ՄԱԿ Պարենի և գյուղտնտեսության կազմակերպություն, Բուդապեշտ, 2017: Առցանց հասանելի է այստեղ՝ un.am/up/library/Gender_Agriculture_and_Rural_Development_in_Armenia_Arm.pdf

Խնդրի եզակիացումը և սոցիալական բնույթի ընկալումը

Հարկ ենք համարում նշել բռնության ըմբռնման հակասական մի առանձնահատկություն՝ որպես ընդհանուր տիրապետող դրություն։ Մի կողմից այն չի ըմբռնվում որպես հասարակական խնդիր, այլ ավելի շուտ համարվում է անհատական կամ մասնավոր՝ զույգի, ընտանիքի, իսկ ավելի հաճախ հենց բռնության ենթարկվողի՝ կնոջ անհատական, սուբյեկտիվորեն պայմանավորված և սուբյեկտիվորեն սահմանված խնդիր։ Սակայն մյուս կողմից բռնարար տղամարդկանց վարքը և դրանց պատճառները (*անհավասարության և նախնական բռնության մշակույթ; սոցիալ-տնտեսական դրություն; տղամարդկանց ինքնավստահության անկում; տղամարդկանց շրջանում ալկոհոլից կախվածություն և հոգեկան առողջության/հոգեբանական խնդիրների աճ*) մեկնաբանելիս այն դիտվում է որպես սոցիալական ֆենոմեն (հետևաբար օրինաչափ ու օբյեկտիվ երևույթ)։

Այսպիսի մոտեցմամբ թվում է, թե յուրաքանչյուր կնոջ կամքին է թողնվում իր հանդեպ բռնության՝ որպես այդպիսին սահմանումը, սակայն, սուբյեկտիվացվում է տվյալ կնոջ ընկալումը՝ այն դարձնելով ոչ հավաստի և ոչ օբյեկտիվ։ Միաժամանակ խնդրի լուծումը ևս թողնվում է կնոջ անձնական նախընտրությանը։ Ուրեմն, եթե միևնույն տիպի սահմանափակումը կամ վերաբերմունքը կինը կարող է համարել բռնություն կամ չհամարել՝ կախված իր սուբյեկտիվ որոշումից, ապա գոյություն չունի հանրային որևէ չափանիշ և հանրային համաձայնություն բռնության՝ որպես այդպիսին սահմանման հարցում։ Հետևաբար սահմանափակումների, վերահսկումների և այլ բռնարարքների բռնիության աստիճանը կարող են տարբեր կանայք տարբեր կերպ մեկնաբանել, իսկ հանրությանն այս պարագայում արտոնվում է չարձագանքել և չմիջամտել։

Հատկանշական է, որ ընդհանուր առմամբ տիրապետող այսպիսի պատկերացումներից խստիվ տարբերվում է այն կանանց վերաբերմունքը, ովքեր անձնապես վերապրել են շարունակական դաժան բռնություններ, որոնց արդյունքում հիմնականում ամուսնալուծվել են կամ այդ գործընթացում են։ Այս կանայք որպես կանոն նշում են ընտանեկան բռնության խնդրի սոցիալական բնույթը և ակնկալում հասարակական մասշտաբի, այդ թվում՝ պետական քաղաքականությամբ գործադրվող լուծումներ։

Բռնության առավել խորքային ընկալումներում հանդիպում ենք բռնության ֆենոմենի և մշակութային համատեքստի, ինչպես նաև հանրության արձագանքի հետ կապի ըմբռնմանը։ Այս դեպքում խնդիրը դիտվում է ոչ միայն բռնության ենթարկվողի՝ կնոջ, և կիրառողի՝ տղամարդու հարաբերության, այլ նաև սոցիալական միջավայրի հետ հարաբերության ներքո, որտեղ հանրային շրջանակները ևս հանդես են գալիս՝ որպես ընտանեկան բռնություններում ներգրավված յուրահատուկ դերակատարներ։ Որպես առաջնահերթ կողմ նկատի է առնվում տղամարդու ծնողները, ինչպես նաև տղամարդու և կնոջ հարազատները, իսկ հետո նաև սոցիալական այլ շրջանակներ՝ տղամարդու ընկերները, հարևանները և այլն։ Համարվում է, որ սոցիալական միջավայրը կարող է և պետք է նպաստի բռնության կանխմանը կամ հաղթահարմանը, ինչպես նաև առկա է այն ըմբռնումը, որ հաճախ հենց սոցիալական միջավայրի մարդիկ են մասնակցում կամ նախաձեռնում բռնարարքը կամ էլ տղամարդ ամուսնուն մղում դրան։

Նեղ սոցիալական միջավայրից բացի, բռնության խթանիչ է նշվում լայն հասարակության անտարբերությունը, պետական հաստատությունների անգործությունը, որոշ դեպքերում նշվում է նաև օրենքների բացակայության հիմքով ոստիկանության գործառնության անհնարինությունը:

Եզակիացումից ավանդականացում

Հետաքրքիր է նկատել ընտանեկան ավանդույթների հանդեպ մի քանի կանանց հատուկ ջերմ վերաբերմունքն այն դեպքում, երբ այլ կանայք ավանդույթները համարում էին լիովին կամ մասնակի հնացած, ինչպես նաև բռնության հիմքը տեսնում էին ավանդույթներում: Թեև ընդհանուր առմամբ կանանց ծանրակշիռ մեծամասնության համար հետերոնորմատիվ ընտանիքի ինստիտուտը արժեքավոր է և ունի անփոխարինելի նշանակություն՝ մի քանի կանանց ըմբռնումներում ընդգծվում է ավանդական ընտանիքի հատուկ իդեալականացված մտապատկերի առկայությունը: Այսպիսի պատկերացում ունեցող կանացից մեկն ուներ ավանդական մոդելով գործառնող ընտանիքի դրական փորձ, սակայն յուրահատուկ կառուցվածքով, որտեղ ինքը միակ կինն էր (հարսի դերում)՝ իր ամուսնուց, նրա եղբորից և հորից բաղկացած ընտանիքում: Մյուս դեպքերում ավանդական ընտանիքի իդեալականացված պատկերացումով կանայք ունեն «չստացված» ընտանիքի փորձ, որը մեկնաբանում էին իբրև կոնկրետ բացառիկ գործոնների և/կամ ավանդույթների անպատշաճ անտեսման հետևանք: Սեփական ընտանիքի չստացվածության այսպիսի եզակիացված՝ մասնավորեցված ըմբռնումը նրանց մղում է ոչ թե դրանում ընտանիքի ինստիտուտի ընդհանուր՝ սոցիալական հիմնախնդիրների բացահայտմանը, այլ ավանդական ընտանիքի իդեալականացմանը և երազանքին: Ավանդականությունը հեշտորեն կապակցվում է հայկական ինքության հետ, անպետական պայմաններում ընտանիքի՝ որպես հիմնական ազգապահպան ինստիտուտներից մեկի ըմբռնման տիրապետող մշակույթում: Ավանդական «հայ ընտանիքն» այսպիսի իդեալական մտապատկերում ընկալվում է այն տեղը, որտեղ անդամներն ունեն իրենց դերային սահմաններում կայուն պաշտպանված համերաշխ հարաբերություններ և ոչ թե դերակարգավիճակային իշխանության, սահմանափակումների, վերահսկման և բռնության գործադրման հարաբերություններ: Հետևաբար, այս անկյան տակ ավանդույթների ժամանակակից սխալ մեկնաբանությունները և ոչ թե ավանդույթներն են անհավասար և բռնի հարաբերությունների պատճառ համարվում: Ավանդական ընտանիքի պաշտպանության փաստարկները հաճախ ռացիոնալացվում են՝ հենվելով հայկական ինքնության պատկանելության վրա: Այս գաղափարաբանության ներքո են կերտվում նաև նոր-պահպանողական երիտասարդ չամուսանացած կանանց հայացքները, ովքեր միտված են հայկական ավանդույթների վերասահմանմանը և ժամանակակից (առավել ազատականացված, բռնությունից զերծ) ձևերով դրանց վերարտադրմանը:

Բռնության լռեցման մշակութային հիմքերը և հաղթահարման ներուժը

Խնդիրների առերեսման և լուծման փոխարեն դրանց լռեցման մշակույթը, որ տիրապետում է Հայաստանում, առվելագույնս դրսևորվում է հենց ընտանիքին առնչվող հարցերում, մասնավորապես բռնության հարցում: Այս իրադրությունը հատկապես պայմանավորված է նրանով, որ *«հայ ընտանիքը»* համարվում է նշանակալի ինստիտուտ. առկա է լավ ընտանիք ունենալու, ինչպես նաև ընտանիքի *«մեծերի»*, *«տղամարդու պատվի և արժանապատվության»* պահպանման մշակութային պահանջ:

Որպես արդյունք ոչ թե բռնությունն ինքին, այլ բռնության մասին տեղեկատվության բարձրաձայնումն է վերահսկվում և սահմանափակվում հասարակության կողմից: Կանայք, սակայն, շահագրգիռ լինելով ընտանեկան հարաբերությունների բարելավմամբ, իրականում պատրաստակամ են խնդիրների հանրային բարձրաձայնմանը, եթե գործնականում դա նպաստի իրենց ընտանիքների (առնվազն իրենց և երեխաների) բարօրությանը և պաշտպանությանը: Նկատելի է, որ հանրային իրազեկման գործողությունները, ԶԼՄ կողմից ընտանեկան բռնությունների դեպքերի լուսաբանումը արդեն իսկ նպաստել են դրական տեղաշարժերին՝ ինչպես կանանց պաշտպանվածության զգացումի աճին, այնպես էլ բռնարար տղամարդկանց վարքի զսպմանը: Երևանում կանայք ավելի համարձակ են բարձրաձայնում սեփական խնդիրները, իսկ բռնության ծանր փորձառություն վերապրած կանայք, ելենելով սեփական կարիքներից, հատուկ նշանակություն են տալիս հանրային բարձրաձայնման և կանանց աջակցության մեխանիզմների ներդրմանը: Երիտասարդ չամուսնացած կանայք և միայնակ ապրող հասուն տարիքի կանայք ևս նշանակություն են տալիս ընտանեկան բռնության խնդրի հանրայնացմանը՝ համարելով, որ դրանով հնարավոր է դառնում ոչ միայն կարգավորել սեփական խնդիրը, այլ նաև աջակցել այլ կանանց նկատմամբ հետագա բռնությունների կանխմանը: Միաժամանակ կանայք նշում են այսպիսի պրակտիկայի ցավագին լինելու և կանանցից շատ քչերի նման պատրաստակամության մասին: Այս իմաստով հանրային վստահելի, անանուն աջակցող հաստատությունների կայուն գործառնությունը (հատկապես պետական քաղաքականության հովանոցի ներքո) կարող է շարունակական դրական արդյունքներ գրանցել:

Բռնության բացառման բարոյական և իրավական չափումները

Թեև կանանց տարբեր խմբերի շրջանում առկա են բռնության սահմանումների տարբերություններ, սակայն բռնության ըմբռնված ձևերի շարունակական կիրառությունն ընտանիքում անհանդուրժելի են բոլոր կանանց համար: Նրանցից շատերը տանելի են համարում բռնության գործադրման եզակի դեպքերը, ինչպես նաև սուբյեկտիվորեն «թեթև» սահմանվող վերահսկման ձևերն ու սահմանափակումները, սակայն անընդունելի են համարում պարբերական բռնություններով և նսեմացումներով կնոջ ընտանեկան կյանքը: Նկատելի է, որ այս վերաբերմունքի հիմքում կանանց խմբերի մեծամասնության համար առաջնահերթ է բարոյական չափումը, ասել է՝ թե կնոջ իբրև մարդու պաշտպանված լինելու բարոյական պահանջը: Այս դեպքում պաշտպանության բարոյական պարտքը, թեև թողնված է ընտանիքի մյուս անդամներին, սակայն այդ

պահանջը հստակորեն առկա է։ Բարոյականության ուժով բռնության բացառման ընկալման կողմնակիցները բռնության հաղթահարման մեխանիզմների որոնումը փնտրում են նախ ընտանիքի ներսում (ավանդական ընտանիքի դերը, ազդեցիկ միջնորդի ներգրավումը, փոխզիջումները, կանանց տակից կարգավորումները) և հետո նաև սոցիալական միջավայրի միջնորդությամբ և բռնության պրակտիկայի հանդեպ հանրային պարսավանքի միջոցով։ Այսպիսի բարոյական ըմբռնմանը երիտասարդ չամուսնացած կանանց (նաև քաղաքացիական դիսկուրսին հասանելիություն ունեցող ամուսնացածների), միայնակ ապրող հասուն տարիքի կանանց, դաժան բռնության հետևանքով ամուսանլուծված կանանց և Երևանում բնակվող կանանց մեծ մասի դեպքում գումարվում է նաև իրավահավասարության չափումը։ Վերջինիս շրջանակում կինն իբրև մարդ ընկալվում է նաև տղամարդուն իրավահավասար, հետևաբար նաև ինքն է ստանձնում սեփական (իրավունքի) պաշտպանության քայլերի գործադրումը սկսած ամուսնու կամ բռնարարի հետ բացատրական զրույցներից մինչև իսկ հանրային կամ պետական հաստատություններին դիմելը (այդ թվում ոստիկանությանը՝ կախված ոստիկանության հանդեպ վստահության աստիճանից)։ Այս առումով երբեմն երիտասարդ չամուսանացած կանայք ավելի արմատական են և բռնության հաղթահարման ողջ պատասխանատվությունն են տեսնում կնոջ ձեռքում, այնինչ միջին և ավագ տարիքի կանայք կարևորում են հանրային, այդ թվում պետական միջամտության անհրաժեշտությունը։

5. Հավելված: Ուղերձների հանդեպ վերաբերմունք և մեկնաբանություններ

Ընդհանուր դիտարկումներ

Ֆոկուս խմբերի քննարկման ավարտին մասնակիցներին ներկայացվել են կին իրավապաշտպանների և Կոալիցիայի կողմից իրականացվող միջոցառումներում գործածված ուղերձներից օրինակներ՝ հասկանալու համար Կոալիցիայի բառապաշարի ըմբռնելիության, ցանկալիության աստիճանը կանանց կողմից և դուրս բերելու համար նրանց մեկնաբանությունների դիապազոնը: Նախապես ուսումնասիրվել են տարբեր տեղեկատվական արշավների ժամանակ հնչած ուղերձները, պաստառները և հոլովակները, և հաշվի առնելով դրանց թեմատիկ բազմազանությունը՝ խմբավորվել են ըստ հասցեականության (ուղղված՝ բռնության ենթարկվածին, բռնարարին, հասարակական միջավայրին կամ դրա անտարբերությանը, կնոջ իրավունքների ջատագովմանը) և դրանցից ընտրվել օրինակներ:

Հարկ է նշել, որ ուղերձների մեկնաբանությունները հիմնվում էին ոչ միայն կանանց վերապրածի, նրանց կենսափորձի և աշխարհընկալման գաղափարների վրա, այլև ուղերձների՝ զուտ ուղերձ լինելու և ակցիաների ձևաչափի ընկալման վրա: Չնայած այսպիսի արշավներին մասնակցելու կամ դրանցով հետաքրքվածության ցածր աստիճանին՝ այդուհանդերձ նկատելի էր, որ կանայք հիմնականում ողջունում էին

ուղերձները և համաձայնում դրանց հետ, նույնիսկ եթե նախկինում իրենց արտահայտած մոտեցումներին դրանք այնքան էլ չէին համապատասխանում: Այսպիսի դրությունը կապված էր երեք հանգամանքի հետ.

- Առաջին հերթին այստեղ կարևոր է հասկացությունների սեփական ընկալումները և դրանց իմաստավորման տարբերությունը այդ ուղերձները ներկայացնողների համեմատ:
- Մյուս հարցը ավելի շուտ կապված է կանանց տատանվող դրության հետ, երբ նրանց համար որոշակի մոտեցման շուրջ դիրքորոշումը հստակ և գաղափարական հիմնավորվածություն չունի, այլ պայմանավորված է մեծամասնության կամ ռեֆերենտ խմբի հավանության շրջանակի մեջ լինելու ձգտումով: Միանշանակ դիրքորոշում ունեցող և արտահայտող կանայք, սակայն, ազատորեն էին արտահայտում իրենց անհամաձայնությունները կամ էլ առհասարակ ուղերձներ հղելու պրակտիկայի հանդեպ իրենց հիմնավոր կասկածները:
- Նկատելի էր նաև այն, որ ուղերձները ընդունվում են, հավանության արժանանում, սակայն միայն ուղերձի (գովազդի) մակարդակում, այլ ոչ թե սեփական կյանքում այդ գաղափարների ներդրման կամ իրագործման հեռանկարում:

Տեղեկատվական ակցիա-արշավները հանրային վայրերում չեն խրախուսվում, հատկապես ավագ սերնդի կանանց կողմից, քանի որ դրանք ընտանեկան բռնության դեմ պայքարի արդյունավետ եղանակ չեն դիտարկվում: Երիտասարդ, չամուսնացած կանայք գտնում են, որ նման ակցիա-արշավները խնդիրը հանրայնացնելու, անգամ երեխաներին փոքր հասակից հասարակության մեջ առկա նման խնդիրների մասին տեղեկացնելու տարբերակներից են: Միջինից բարձր տարիքի կանայք փողոցներում անցկացվող ակցիաների փոխարեն որպես իրազեկման միջոց առաջարկում են օգտագործել հեռուստատեսությունը, ռադիոն: Այս տարակարծությունը գալիս է սերունդների առօրյայի կազակերպման տարբերությունից: Երիտասարդները ավելի շատ են դուրս գալիս, ծանոթանում նման դեպքերի համացնացի միջոցով, իսկ միջին և բարձր տարիքի կանանց հիմնական տեղեկատվության աղբյուրն են հեռուստատեսությունը, ռադիոն և այլն: Այսպիսի ակցիա-արշավներում ամենառեալ օգնությունը թեժ-գծերի հեռախոսահամարների տեսանելի ցուցադրումն է համարվում: Առավել պահպանողական և հասուն տարիքի մասնակիցներից մեկի կողմից կենտրոնական հանրային վայրերում (օր.՝ Հանրապետության հրապարակ) խնդիրներ բարձրաձայնող ակցիաների անցանկալիությունը բացատրվում էր «զբոսաշրջիկների համար հասանելի վայրերում դրսի մարդկանց առաջ ներքին խնդիրների վեր հանումը երկրի համար պատվաբեր չէ» դատողությամբ:

Պայքարող կազմակերպությունները, ըստ մասնակիցների, ոչ թե կոչերով, այլ գործնականում պետք է կարողանան օգնության հասնել կանանց: Միաժամանակ նշվում է կանանց և հատկապես բռնության ենթարկված կանանց շրջանում առավելագույն վստահություն ձեռք բերելու գործոնը, որպեսզի կանայք դիմեն նրանց աջակցությանը: Այսպիսի վստահությունը հնարավոր է առաջին հերթին դրական պատմությունների

մասին տեղեկատվության տարածումով՝ ընկերուհուց ընկերուհի կամ հանրային միջոցներով (նույնիսկ ԶԼՄ, սակայն պատմությունների ներկայացման ձևաչափով)։ Միջինից բարձր տարիքի կանայք, ովքեր չեն համարում, թե ունեցել են բռնության փորձ, նշում են, որ միայն բռնության ենթարկվելու դեպքում իրենք կմիանային նմանատիպ ակցիաների։ Ֆոկուս խմբերին մասնակից չամուսնացած ուսանողները պատրաստակամություն են հայտնում մասնակցել նման արշավ-ակցիաներին։ Իսկ ամուսնացած կանանց կողմից նման միջոցառումներին չմասնակցելու պատճառաբանությունների շարքում է հանրային ուշադրությունից խուսափելը։

Բռնության ենթարկված կնոջ համար շատ դեպքերում այդպիսի ակցիաներին մասնակցելը նույնիսկ վտանգավոր է դիտվում, քանի որ դրանով կքողազերծվի նրա կողմից աջակցության կամ ինչ-ինչ քայլերի դիմելու նախատրամադրվածությունը։ Բռնության մեջ ապրող կնոջ համար առավել արդյունավետ է համարվում հեռուստատեսային տեղեկատվական հայտարարությունների միջոցով օգնության հնարավորությունների մասին լուսաբանումները։ Բերվում են օրինակներ, թե ինչպես են որոշ կանայք թեժ գծի հեռուստատեսային գովազդի շնորհիվ հաջողել դուրս պրծնել բռնարարի կալանքից և օգնություն գտնել հասարակական կազմակերպություններից։

Կանանց/գենդերային իրավապաշտպան կազմակերպությունների գործունեությունը երբեմն մեկնաբանվում է բացասական երանգավորմամբ։ Քննադատությունն առնչվում է հատկապես մահվան ելքով դեպքերի անվանական հանրայնացման հարցում։ Բռնության զոհ դարձած կանանց ֆոտոների և անունների հրապարակումը դիտարկվում է որպես կազմակերպության շահերի առաջխաղացման համար գործիքավորում կամ էթիկայի կանոնների խախտում, սակայն մյուս կողմից էլ չի ժխտվում այն փաստը, որ դեպքերի անանուն հիշատակումը կարող լուրջ չընկալվել հասարակության կողմից։

Ֆոկուս խմբերի մասնակիցները խրախուսում ու առաջարկում են նման խնդիրներին առնչվող միջոցառումների ժամանակ հասցեականության թիրախ դարձնել հենց բռնարարներին՝ տղամարդկանց։ Նման միջոցառումները, ըստ քննարկումների, կարող են ավելի շատ կրթական, իրազեկող ու բռնարարների վարքը կարգավորող բնույթ ունենալ։ Առհասարակ բռնության դեմ պայքարի գործում կանայք առաջնահերթ են համարում հենց տղամարդկանց հետ տարվող աշխատանքները և անգամ խորհուրդ են տալիս որոշակի կենտրոններ հիմնել, որտեղ և՛ կինը, և՛ տղամարդը՝ զույգերը, կխոսեն իրենց խնդիրների մասին, ու մասնագետները կփորձեն խորհուրդներով աջակցել կարգավորել նրանց խնդիրները՝ առաջին հերթին տղամարդկանց հետ աշխատելով և նրանց վարքը փոխելով։

Կանանց խնդիրներով զբաղվող կազմակերպությունների իրականացրած գործողությունները նոր ուղղությամբ շարունակելու համար որպես առավել արդյունավետ տարբերակ է առաջարկվում հաջողված պատմությունների մասին լուսաբանումները։ Անձամբ խնդիրը կրողի կողմից սեփական պատմության ներկայացումը, լուծման եղանակների առաջարկումը առավել վստահելի է կանանց համար։ Խնդրի լուծման մեխանիզմների մատուցումը բռնության ենթարկված կանանց համար ազդակ կարող է հանդիսանալ սեփական խնդիրների լուծման համար։ Այս իմաստով կանանց համար, եթե նույնիսկ հեգնական, զավեշտալի կամ անընդունելի է

համարվում «Կիսաբաց լուսամուտներ» հաղորդաշարը, միևնույն է ընդգծվում է դրա միջոցով տեղեկատվության և գիտելիքի ձեռքբերման հնարավորությունը: Մեզ համար ակնհայտ էր, որ կանանցից շատերն են հետևում այս հեռուստաշոուին՝ անկախ դրա հանդեպ ունեցած վերապահումներից և դիստանցիայից: Այս համատեքստում կարևոր են կանանց/գենդերային իրավապաշտպան կազմակերպությունների կողմից աջակցություն ստացած ու հաջողված դեպքերի, այսինքն՝ բռնության հաղթահարման դեպքերի կենդանի քննարկումները ու հանրայնացումը: Հատկապես նշանակալի կլիներ հեռուստատեսային հաղորդաշարերի մշակումն ու հեռարձակումը բռնության ենթարկված, սակայն կազմակերպության աջակցությամբ խնդիրը կարգավորված դեպքերի մասին:

Ֆոկուս խմբերի մասնակիցների կարծիքով կանանց/գենդերային իրավապաշտպան կազմակերպությունների կողմից իրականացվող միջոցառումները, աջակցության մեխանիզմները պետք է համալիր բնույթ կրեն, այսինքն՝ խորհրդատվություն, համագործակցություն հոգեբանների, իրավապահ մարմինների ներկայացուցիչների, սոցիալական աշխատողների հետ: Յուրաքանչյուրի առանձին գործունեությունը նշանակալի է, բայց թերի:

Այսպիսով, կարող ենք նշել, որ կանանց խմբերի հետ հաղորդակցության հիմնական խնդիրը ոչ թե զուտ ուղերձների, այլ առաջին հերթին ուղերձները հասցնելու ձևաչափերի ընտրությանն է վերաբերում: Առավելագույն վստահության համար նախընտրելի են համարվում հանդիպում-քննարկումները (նույնիսկ ֆոկուս խմբերի տեսքով զրուցելու հնարավորությունները), ծանոթների միջոցով տեղեկատվության ստացումը և գործնականում հաջողված աջակցության դեպքերի մասին տեղեկատվության տարամիջոց, այդ թվում՝ ԶԼՄ տրամադրումը:

Ո՞վ է հաջորդը

Այս ուղերձը հիմնականում ըմբռնվում է իբրև ահազանգ. բռնության՝ իբրև ունիվերսալ խնդրի առկայության մասին հուշող արդյունավետ պաստառ: Սակայն պատահել են նաև այսպիսի տարընթերցումներ՝

- բռնարարարի կողմից ահազանգ հաջորդ բռնության ենթարկվողներին: Բռնարարի կողմից կնոջ հանդեպ բռնություն կիրառելը որակվում է որպես «նորմալ» ու այս ուղերձով հաջորդ զոհին է մատնանշում;
- բռնության ենթարկվածի (ողբերգական ավարտով բռնության զոհի) կողմից խնդրի հուսահատ կոչ՝ անտարբերության մատնանշում:

Մի քանի կին առհասարակ դժվարացան հասկանալ և ապակոդավորել ուղերձը:

Բռնությունը հայ ընտանիքն է քանդում
Պահանջում ենք ընտանեկան բռնության դեմ օրենք
Ավանդույթը չի նշանակում բռնություն

Այս պատկերում առավել նկատելի են գտվել և բանավեճի առարկա են հանդիսացել ընտանեկան բռնության դեմ օրենքի և ավանդույթն ու բռնությունը տարանջատող պաստառները։

Ընտանեկան բռնության դեմ ***օրենքի*** կոչերը դրական են գնահատվում կանանց կողմից (հաճախ կանայք իրենք են նախաձեռնել օրենքի անհրաժեշտության մասին խոսակցությունը՝ մինչև մեր կողմից հարց տալը), նույնիսկ երբ առկա է կասկած օրենքի իրական գործադրման պրակտիկայի նկատմամբ։ Ինչպես ցանկացած օրենքի դեպքում, այս պարագայում ևս որոշակի թերահավատություն կա օրենքի կիրարկման ու դրա արդյունավետության հանդեպ։ Այսպիսով, օրենքի առկայությունը կարևորվում է բռնության խնդրի կարգավորման գործում, ոչ միայն որպես իրավապահ մարմինների կողմից վերահսկման և կոնկրետ դեպքերի շուրջ քայլերի ձեռնարկման գործիք, այլև առաջին հերթին տղամարդկանց վարքը զսպող, բռնությունը կանխարգելող, այդ թվում ոստիկանության աշխատակիցներին վերակրթող և ընտանեկան բռնության հանդեպ զգայունությունը բարձրացնող մեխանիզմ։ Մի քանի կին, ովքեր առնչություն էին ունեցել ընտանեկան բռնության գործով ոստիկանության գործունեությանը, տեղեկացված էին ոստիկանության միջամտելու և գործուն մեխանիզմներ կիրառելու իրավասությունների բացակայությունը՝ նշելով այդպիսի իրավասություններ ընձեռող օրենքի կարևորության մասին։

Ավանդույթի շուրջ քննարկումները մի քանի՝ հետևալ դրսևորումներ են ունեցել։

- *Ավանդույթների սխալ մեկնաբանումը*։ Այն կանայք, ովքեր գնահատում են ավանդույթների շարունակականությունը և պահպանողական ընտանիքի կողմնակից են, խիստ դրական են վերաբերում ավանդույթը բռնությունից տարանջատող պաստառին։ Նրանց համար բռնության պրակտիկան չի հենվում ավանդույթի, այլ հասարակության մեջ դրա ոչ լիարժեք հասկացումի, սխալ կիրառումի ու մեկնաբանումի վրա։ Հետևաբար, հասարակության մեջ առկա ավանդույթները պետք է կիրառել ըստ էության։ Ավանդույթի պահապան կանայք ընդգծում են ավանդական ընտանիքի անդամների միմյանց հանդեպ հոգատարության և փոխաջակցության կողմերը՝ թեկուզ և ավանդական դերային շրջանակներում։ Այս հայացքի ներքո ավանդույթն ու բռնությունը նույն սանդղակով չափելն ու դրանք չտարանջատելը ընդունելի չի համարվում։
- *Ավանդույթների ժամանակավրեպ լինելը. ավանդույթ-իշխանություն համատեքստ։* Այս դեպքում ավանդույթն ընկալվում է իբրև առաջընթացի խոչընդոտ, այնինչ հասարակական փոփոխությունները պետք է բերեն նաև ընդունված ավանդույթների փոփոխության։ Օրինակ, ավանդաբար՝ նահապետական

հայկական բարքերից ելնելով, կինը լռել է ու այժմ էլ ավանդույթի շրջանակում ակնկալվում է, որ կինը պետք է անընդհատ լռողի, հնազանդ կնոջ դերից հանդես գա, հետևաբար յուրաքանչյուր անհնազանդություն դիտվում է որպես բռնության հիմնավորում: Հետևաբար կանանց ենթակա դերում են ներկայացնող ավադույթները, այս անկյան տակ, տղամարդկանց լրացուցիչ արտոնություններ են տրամադրում իրենց իշխանությունը կիրառել կանանց նկատմամբ:

- *Ավանդույթ-իրավունք հավասարակշռությունը:* Ավանդույթների պահպանումը մեկնաբանվում ու կարևորվում է քանի դեռ դրանք չեն սահմանափակում կնոջ իրավունքները ու պատճառ չեն հանդիսանում կնոջ նկատմամաբ բռնության կիրառման: Այս դեպքում համարվում է, որ պետք չէ կենտրոնանալ կնոջը նսեմացնող, կնոջ իրավունքները ոտնահարող ավանդույթների վրա, այլ հենվել հայերի ուեցած այլ ավանդույթների վրա:

Սկեսուրս ասում է՝ ինքը ծեծվել ա, ես էլ պիտի ծեծվեմ



Հանրային վայրում կանանց կոշիկների միջոցով տեղեկատվական ակցիաները ավելի մեծ հետաքրքրության և ուշադրության են արժանանում, հատկապես՝ երիտասարդների կողմից: Այլ կանանց կյանքի պատմությունները հուզականորեն հետաքրքրում էին բոլոր մասնակիցներին:

- *Կմոտենայի կհարցնեի, ոնց է այժմ Արփինեն:* **գ. Մրգանուշ, չամուսանացած կին**

Մասնակիցներից ոմանք նշում էին, որ իրենց հայտնի են նման կերպարով կոնկրետ սկեսուրներ՝ մեկնաբանելով այսպիսի դիրքորոշումն իբրև հոգեպես ոչ առողջ մարդու դիրքորոշում, միաժամանակ դրա տարածվածությունը զգալի գնահատելով հայաստանյան իրականությունում: Հարս-սկեսուր հարաբերություններում սերնդային կոնֆլիկտները և տարաձայնությունները հաճախ բռնության հիմք են դառնում: Մասնակիցները նշում էին նաև հակառակ դեպքերի մասին, երբ բռնություն տեսած սկեսուրը չի ցանկանում և թույլ չի տալիս նույն բռնության կրկնությունը հարսի կյանքում: Այսպիսի վարքի պատրաստակամության առկայության մասին էին վստահեցնում ժամանակին բռնություն կամ սահմանափակումներ վերապրած, իսկ այսօր արդեն սկեսուր-սկեսուրացու կանայք՝ միաժամանակ չնկատելով և չհարցադրելով իրենց այս դիրքորոշման մեջ սկեսուրի իշխանության բանեցման գործոնը, այլ դրանում միայն սեփական հոգատարությունը և մարդկայնությունը տեսնելով:

Կանա՛յք, իմացե՛ք Ձեր իրավունքները

Պաստառը ուշադրության և դրական գնահատականի է արժանացել բոլոր ֆոկուս խմբերի ժամանակ՝ դրանում ընդգծելով տղամարդու կողմից կնոջ իրավունքներին ուշադրություն դարձնելու հանգամանքը:

- *Տղամարդու կողմից կոչ տղամարդկանց՝ հարգել կանանց իրավունքները:* Տղամարդը գիտակցում է կանանց իրավունքները ու կոչ է անում մյուսներին ևս հետևել իր օրինակին: Տղամարդկանց պետք է դեռևս փոքր հասակից այս՝ կնոջը և կնոջ իրավունքները հարգելու ուղղությամբ դաստիարակել: Տղամարդու սիմվոլիկ ներկայությունը ուղերձ է, որ հենց տղամադիկ պետք է ընդունեն կանանց իրավունքները: Իսկ կանանց իրավունքների ոտնահարումը հենց այդտեղից է սկսվում, երբ տղամարդիկ չեն գիտակցում ու հաշվի նստում կանանց իրավունքների հետ:
- *Տղամարդու կողմից կոչ կանանց՝ ճանաչել իրենց իրավունքները ու թույլ չտալ դրանք ոտնահարել:* Տղամարդն ընկալվում է իբրև հեղինակավոր սուբյեկտ, ով դիմում է կանանց, քանի որ կինն է թույլ տալիս իր հանդեպ բռնություն կիրառել, և եթե կինը ճանաչի իր իրավունքները, տղամարդիկ էլ բռնություն չեն կիրառի նրանց հանդեպ:

Խաղաղություն ընտանիքից աշխարհին

Խաղաղությանն ուղղված այս ուղերձը բազմաբնույթ, սակայն միանշանակ դրական մեկնաբանություններ ունի: Ընտանիքը որպես պետության մոդել ու հիմքը դիտարկող մոտեցումների համաձայն ընտանիքում խաղաղությունը տարածվում է պետության վրա: Ընտանիքի դերը համար կարևորվում է հայաստանյան հասարակության մասշտաբով. ընտանիքը սահմանվում է որպես ազգի պահպանման միջոց: Ընտանիքում կնոջ երջանկությունը կապվում է նրա շրջապատում և աշխատավայրում երջանկության հետ, ինչպես նաև հասարակության երջանկության հետ: Պաստառը տեղիք է տալիս պետությունների միջև կոնֆլիկտների և պատերազմի համեմատության և ընտանեկան բռնության դեպքում ոչ խաղաղ՝ բռնի ձևերը որպես լուծում չընդունելու հիմնավորման համար: Մեկնաբանվում է որպես կոչ տղամարդկանց՝ ավելի խաղաղասեր ու ոչ ագրեսիվ լինելու:

Այս ուղերձում կարևորվում է մտքի ճիշտ ձևակերպումը, խաղաղություն բառի ճիշտ ընտրությունը: Հենց այս պաստառը նաև առիթ էր դառնում խոսելու հաճախ հանդիպող կտրուկ ձևակերպումների, ագրեսիվ տոնով, «դեմ եմ/կողմ եմ» ձևակերպումներով մարդկանց վանող ու բացասական ազդեցություն ունեցող պաստառների շուրջ դժգոհությունների մասին:

Պայքարի՛ր իրավունքներիդ համար, ապրի՛ր արժանապատիվ կյանքով

Այս ուղերձում առավել ուշադրության են արժանանում երկու հասկացություններ՝ պայքարի՛ր կոչը և իրավունքների հասակացությունը:

Նշվում է, որ շատ դեպքերում բռնության ենթարկված կանայք պարզապես ծանոթ չեն պայքարի մեխանիզմներին, հստակ չեն այն քայլերը, որոնք նրանք պետք է իրականացնեն՝ սեփական իրավունքների պաշտպանության համար: Ցանկացած կնոջ համար կարևոր է արժանապատիվ կյանքով ապրելը (արժանապատվության գաղափարի ընկալումները սակայն խիստ տարբեր են և ավելի ընդգծված են երիտասարդ չմուսնացած ուսանող կանանց և ամուսնալուծվածների ու նրանց հարազատների շրջանում), բայց պետք է նրանց համար պարզ լինեն պայքարի մեխանիզմները: Պայքարել բառը շատ դեպքերում բացասաբար է ընկալվում ու չի արդարացվում: Պայքարելն ինքնին պրոբլեմ է, անցանկալի պրակտիկա, քանի որ ասոցացվում է անհաշտությունների և բռնության հետ:

Հատկանշական է, որ արժանապատվության գաղափարը կանանց հետ հիմնականում չի կապակցվում, այն սովորական խոսակցության մեջ կիրառվում է առավելապես տղամարդկանց առնչությամբ: Կնոջ արժանապատվության մասին ֆոկուս խմբի մասնակիցների կողմից հնչեցվել է միայն Գյումրի քաղաքում:

Չամուսանացած երիտասարդ կանանց համար իրավունքի կոնցեպտը շատ ավելի հասկանալի և ցանակալի է հնչում, քան ավագ սերնդի ամուսնացած, ինչպես և ամուսնալուծված կանանց համար: Իրավունքների տեսանկյունից յուրաքանչյուր կին անկախ կրթությունից, բնակության վայրից, ցանկալի է, որ ճանաչի իր իրավունքները, սակայն դրանց համար ինքնուրույն պայքարի հարցում առավել պատրաստակամ են երիտասարդ կանայք: Այնինչ ամուսնալուծված կանանց, ինչպես և ավագ սերնդի ամուսանացածների կարծիքով պետությունն է, որ առաջին հերթին պետք է ջանքեր գործադրի և նպաստի, որ կանայք կարողանան իրացնել իրենց իրավունքները:

Ոչինչ չի արդարացնում բռնությունը

Ֆոկուս խմբերին մասնակից կանայք հիմնականում համաձայնել են պաստառի գրությանը՝ չնայած որ մինչ այդ կարող էին բռնության տարբեր դրվագներում տեսնել կնոջ «*սխալի*», *մեղքի* հավանականությունը, «*առիթ տալը*» կամ «*տղամարդուն հասցրած լինելը*»: Այս դեպքում նախ աշխատում է բռնության կոնցեպտի շուրջ սեփական սահմանումների տարբերության գործոնը: Բացի այդ, նկատում ենք, որ կիրառվում է «*հասկանալի*» տերմինը, ոչ թե *արդարացված-ը*, երբ կինը «*սխալ*» է պահում իրեն, իր նկատմամբ կիրառվող բռնությունը շատ կանանց համար «*հասկանալի*» է, թեև կարող է չլինել արդարացված: Այս դեպքերում, երբ կինն է մեղավոր համարվում, առաջարկվում է, որպեսզի նա անտեսի կիրառված բռնությունը, բայց միաժամանակ չթողնի դրա պարբերական դրսևորումը:

Քուֆթա ծեծեք, ոչ թե կին
Ծեծը պատիվ չի բերում

Քուֆթա ծեծելու տեղայնացված կոչերով պաստառը դրական արձագանք է ստացել: Միաժամանակ կանայք պնդում են, որ ծեծը, առհասարակ, հայ տղամարդուն պատիվ չի բերում: Շարունակական ծեծն, առհասարակ, այն սակավ բռնության տեսակներից է, որը միանշանակ անընդունելի էր մասնակից կանանց համար և ակնհայտորեն սահմանվում էր իբրև բռնություն:

Զոհը երբեք մեղավոր չէ
Ինձ չեն թողնում աշխատել

Ակցիայի պատկերը ավելի շուտ ուշադրություն էր գրավում կարմիր թիկնոցների, քան պաստառների շնորհիվ: Կարմիր հագուստով քաղաքում շրջելը իր սիմվոլիկ մեկնաբանումն ունի՝ որպես արյան գույն, որը բռնությունն է խորհրդանշում: Որոշ մասնակիցներ նշեցին, որ փողոցում ուշադրություն կդարձնեին և կհետաքրքրվեին նման քայլարշավով:

Անտարբերությունը կարող է կյանք արժենալ

Այս ուղերձը առավել ունիվերսալ ընկալում ունի և արժանացել է շատ տարբեր գաղափարական պատկերացումներով կանանց դրական գնահատականին: Այն մեկնաբանվում է որպես ահազանգ հասարակությանը, այն միջավայրին, որտեղ բռնություն ենթարկվողն է գտնվում: Համարվում է, որ շատ դեպքերում հենց անտարբերության արդյունքում են ծնվում բռնության դեպքերը: Առհասարակ շատ հարցերում հայ հասարակության խնդիր է գնահատվում անտարբերությունը: Միաժամանակ, հարկ է նշել, որ նման դրական արձագանքը բոլորովին չի ենթադրում բռնության դեպքերին միջամտելու կամ էլ բռնության դեմ պայքարին միանալու պարտադիր պատրաստակամություն, ճիշտ հակառակը՝ ավելի հաճախ նշվում է *խորհուրդ չտալու, չխառնվելու, մեղավոր դուրս չգալու* մասին:

Խոսի՛ր

Մասնակիցներից ոմանք նշեցին հեռուստատեսությամբ հոլովակն արդեն տեսած լինելու մասին: Թեև ողջունելի է նման տեղեկատվական հոլավակների տարածումը, սակայն մեծ հաշվով նկատելի է դրա, ինչպես և կոչական պաստառների հանդեպ դիստանցիայի առկայությունը՝ դրանք իբրև սեփական կյանքի հետ կապ չունեցող՝ ինքնին հոլովակ կամ կոչ դիտարկելը: Բայցևայնպես, խոսելու, բռնության դեպքերի մասին բարձրաձայնելու ուղերձը մեծամասամբ ընդունելի է համարվում բռնության դեպքերի կարգավորման նպատակով: Եթե նույնիսկ ընտանեկան բռնության դեպքերի մասին պետք չէ լռել և փորձել լուծումներ փնտրել, խոսակցի ընտրությունը միանշանակ չէ. լուրջ նշանակություն ունի վստահության խնդիրը: Ընտանիքի մյուս անդամներին հարցի լուծման մեջ ներգրավելը առաջին փուլերում չի խրախուսվում:

Նման սոցիալական հոլովակներում հայտնի մարդկանց ներառումը լրացուցիչ՝ հատուկ բնույթ է հաղորդում դրանց՝ մի կողմից դարձնելով գրավիչ, մյուս կողմից հեռավորություն ձևավորելով սովորական մարդկանցից: Մասնակից կանայք կարևորում էին հայտնի մարդկանց դերը հոլովակում՝ հատկապես մարզիկների ու մանավանդ կին մարզիկների, ովքեր ուժեղ, պայքարող կնոջ կերպարներով են հանդես գալիս: Միաժամանակ կարևորվում է համանման հոլովակներում սովորական մարդկանց տեսանելիությունը:

Չնայած դրական արձագանքին՝ համարվում էր նաև, որ չլռելու ու բռնության դեպքերի մասին խոսելու հոլովակի հիմնականը ուղերձը միակողմանի է դիտարկում իրավիճակը: Միայն խոսելով ու դեպքերի մասին բարձրաձայնելով խնդիրը չի լուծվում, բռնության ենթարկված կինը պետք է վստահ լինի, որ իր խոսքը լսելի կլինի, գործնական աջակցություն կկարողանա ստանալ ու լուծել իր խնդիրը: